

Դ

ԲԱԳԻՆ

Pakine

ՅՈՒՆՈՒԱՐ, ՓԵՏՐՈՒԱՐ, ՄԱՐՏ 2010
ԽԸ. ՏԱՐԻ, ԹԻՒ 1



◆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ◆ ԱՐՈՒՆՍ ◆ ԻՄԱՅԱԿԱՆ ԱԾԽԱՐՀ

ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ
Յակոբ Պալեան

ՓՈԽ ԽՄԲԱԳԻՐ
Սեդա Գրիգորեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Անուշ Թրուանց (Լիբանան)
Սարգիս Կիրակոսեան
(Լիբանան)
Մովսէս Հերկելեան (Լիբանան)
Հրանդ Մարգարեան
(Միացեալ Նահանգներ)
Արքմենիկ Նիկողոսեան
(Հայաստան)
Յարութիւն Պերպերեան
(Գանատա)
Յակոբ Տէր Ղուկասեան
(Լիբանան)
Զաքար Քէշիշեան (Լիբանան)

Գեղարուեստական նկարներու
ընտրութիւն՝ Մովսէս Ծիրանի

Էջադրում՝
Անի Փէլիվանեան-Սարգիսեան


Հասցէ՝
Պուրճ Համուտ
Շաղգոյեան կեդրոն, Բ. յարկ
Ել-նամակ.-
E-mail:
pakin@hamazkayin.com
Հեռ. 00961-1-241072

Տպագրութիւն՝
Համազգայինի
«Վահէ Սէթեան»
տպարանի

Յրուումի կեդրոն՝
Համազգայինի
Գրատարած,
Շաղգոյեան կեդրոն,
Պուրճ Համուտ
Հեռ. (01) 241263/4
Ֆաքս՝ (01)260329
Փոստարկը՝
80-1096 Պ. Համուտ
E-mail:
imphamaz@inco.com.lb



Հրատարակութիւն՝
Համազգայինի
Կեդրոնական Վարչութեան



ԲԱԳԻՆ

ՅՈՒՆՈՒԱՐ,
ՓԵՏՐՈՒԱՐ, ՄԱՐՏ
2010
ԽԸ. ՏԱՐԻ, ԹԻՒ 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ - Բ. 1

♦ ԱՐՁԱԿ

ԾՈՎԸ, ԱԽ ԱՅՍ ԿԱՊՈՅՏ ԽԱՅՏԱՆՔԸ... Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ - 3
ՄԱԹՈՍ ԵԱՂՈՒՊ ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐ - ՊԵՏՐՈՍ ՀԱՃԵԱՆ - 15
ՖՐԻՎԷՅ - ՊՕՂՈՍ ԳՈՒԲԵԼԵԱՆ - 22

♦ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱ՝ ՔՈՅՐՍ - ՍԱԳՕ ԱՐԵԱՆ - 32
ԱՆԴՐ-ՇԻՐԻՍԵԱՆ ԽՕՍՔԵՐ/ ՄՐՏԱՅՈՅԶ ԽՕՍՔԵՐ - ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ - 38
ՄԵՏԱՄՈՐՖՈՅ - ՆԱՅԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ - 42

♦ ԹԱՏՐՈՆ

ԱՇՈՒՆ, ԾՈՒԿԸ - ՌՈՊԵՐԹ ԱՌԱՔԵԼԵԱՆ - 44 - 45

♦ ԻՄԱՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԻՄ ԽՈՀԱՏԵՏՐԻՑ - ՄԱՐՕ ԽԱԶԱՏՐԵԱՆ - 46

♦ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱԶԱՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ... - ՅՈՎԻԿ ՄՈՒՍԱՅԵԼԵԱՆ - 60

♦ ՆՈՐ ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ

«ԱՇՈՒՂ ԶԻԲՆԻ. ԱՆՅԱՅՏ ԵՐԳԵՐ...» - Ս. ՄԱՀՍԵՐԷՃԵԱՆ - 65
ԶԱՊԵԼ ԵՍԱՅԵԱՆԻ «ՆԱՄԱԿՆԵՐ»Ը - ՇԱՀԱՆԴՈՒԽՏ - 69

♦ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄՈՒՍԹԱՖԱ ԼՈՒԹՖԻ ԱԼ ՄԱՆՖԱԼՈՒԹԻՆ... - ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ - 72
ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ ԻՍԼԱՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ - ՄՈՒՍԹԱՖԱ ԼՈՒԹՖԻ
ԱԼ ՄԱՆՖԱԼՈՒԹԻ - 73

ՀԱՅԻԹՅԻ ԳՐՈՂԸ ՏԱՆԻ ԼԱՖԱՐԻԵՐ՝ ԻՐ ԵՐԿՐԻ ԱՐՁԱՆԸ ԵՒ ՀԱՅԵԼԻՆ
- ՀԱՅԱՑՈՒՑ Յ. Պ. - 76

♦ ՄՇԱԿՈՅԸ

ՏԵՒԱՔԱՐ ՎԱՅՈՂ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏԸ Գ. ՆՈՐԻԿԵԱՆ - Ա. ՏԱԳԵՍԵԱՆ - 81
ԱՐԴԻ ՀԱՅ ՅՕՐԻՆՈՂՆԵՐԸ - ԱՐԹՈՒՐ ԱԲԱՆԵՍՈՎ - 84

♦ ԱՐՈՒԵՍ

ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԱՐԴԱՅՆՈՒԹԻՒՆ ԱԲԵԼՑՆՈՂ ԱՐՈՒԵՍԱԳԵՏ
ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ՝ ԳԱԼՈՒՍ ՊԱՊԵԱՆ - ԲԱԳԻՆ - 88

♦ ՆԱՄԱԿԻ ՄԸ ԱՐԾԱՐԾԱԾ ԽՆԴԻՐԸ - Բ. - 95

♦ ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ - 96

Կողքի լուսանկարները՝ ԳԱԼՈՒՍ ՊԱՊԵԱՆԻ
(«Փարաճանով» շարքէն)


Հեղինակ՝
ՀՐԱԶ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

«Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ԿԱՌՈՅՑԻ ՀՈԼՈՎՈՅԹԸ ԵՒ ԱՅԼ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ»

Խմբագիր՝
ԵՐՈՒԱՆԴՐ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ጥርጉጥ, 2009



ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ

Հայերէնով գրականութիւնը արկածախնդրութիւն է: Այս մտածումը ունեցայ երբ կը կազմէինք ԲԱԳԻՆի ներկայ համարը: Կարգ մը ընթերցողներ դիտել տուած էին որ բանաստեղծութեան էջերը շատ էին, արդիական եւ նորարարական տեսքով կը ներկայանային, դժգոհութիւն յառաջանելով:

Այս համարով արձակ էջերու առատութեան առջեւ գտնուեցանք: Բովանդակութիւնը այլապէս քննելի է, բայց երեւոյթը՝ ուշագրաւ: Կը նշանակէ որ կան մարդիկ որոնք դեռ իրենք զիրենք կը տրամադրեն երկարաշունչ աշխատանքի, անմիջական հակազդեցութիւններէ եւ բռնկումներէ տարբեր շնչառութեամբ: Սարգիս Կիրակոսեանի կամ Պօղոս Գուրէշեանի վիպագրական արկածախնդրութիւնը կը վկայէ հայ գրականութիւնը այժմէականացնելու եւ այդ ճամբով անհատական եւ հաւաքական ինքնահաստատման հասնելու միտումի մասին, տրամագծօրէն հակառակ օտարագրութեամբ անուն դառնալու տեղատուութեան:

Գրականութեան զուգահեռ, տազնապող մտաւորականներ կը խօսին գիրքերու եւ իմացական հարցերու մասին, քանի որ անոնք ենթահողն են զարգացման ընթացքի մէջ եղող կամ վաղուան գրականութեան: Լեզուական թնճուկի մասին կը խօսի Մարօ Խաչատուրեան, Հայաստանի Հանրապետութենէն, այսինքն սփիւռքահայ էջ, հանդէս կու գայ հայոց լեզուի վերականգնումի առաջադրանքով, կատարուած իրողութիւնները վերջնական չհամարելու դրական յանդգնութեամբ:

Նիւթերու առատութիւնը աստիճանաբար ինքզինք կը պարտադրէ՝ Կրնա՞նք աւելցնել էջերու թիւը կամ գրական հանդէսի հերթականութիւնը: Ազգի ոգեկան ժառանգութեան պատուանդան ընթերցող(ներ)ով կ'իրականանայ այդ յառաջդիմութիւնը: Գրականութիւն, արուեստ, մշակոյթ, ըլլալով հանդերձ անհատական ստեղծագործութիւն, կը բխին ժողովուրդէն եւ կ'երթան դէպի ժողովուրդը: Անոնք կ'ենթադրեն հաւաքական պատասխանատուութիւն: Ընտրանիի մենաշնորհ չեն:

Հակառակ անոր որ հայերէն գիրքը կամ գրական հանդէսը սպառման պատնէշէն անդին անցնելու դժուարութիւն ունի, հրապարակի վրայ են բազմաթիւ նոր հրատարակութիւններ, հաւատաւոր փոքրամասնութեան

մը օրինակելի յամառութեան փաստը, որ ազգը իր ինքնուրոյնութեամբ կանգուն պահելու ազնուացնող միտում է: Ինչպէ՞ս զանգուածը բերել այս ինքնուրոյնութեան դաշտը:

ԲԱԳԻՆը, ասկէ առաջ ալ ըսած ենք, գրական ստեղծագործութեան բեմ է, միաժամանակ նորերով գրականութիւնը շարունակուած տեսնելու միջոց: Գրական հանդէսը, ինչպէս գիրքը, թուղթ են, գրադարանին մէջ, սեղանին վրայ, պայտսակի մէջ: Համացանցային գիրքը, թերթը, օգտակար են, բայց մնայուն եւ ժառանգութիւն չըլլալու մեղքով կնքուած: Երբ իմաստութեամբ կը դառնանք դէպի ապագայ, կ'ըմբռնենք որ համակարգիչի վրայ երեցող գիրով չենք փոխարիներ աղիւսի, մագաղաթի եւ թուղթի վրայ դրոշմուած ժառանգութեան էջերը:

Հայերէն գիրը եւ գիրքը, լեզուի տեղատուութեան պատճառով ունեցած նահանջին կը գումարեն ցրուումի եւ ստացման դժուարութիւնները: Ֆրանսական, ամերիկեան, ճաբոնական, արաբական հրատարակչատուները ունին ցրուումի հզօր կազմակերպութիւն: Հայերէն գիրն ու գիրքը գրկուած են այդ հնարաւորութենէն՝ սպառման քանակի, կեդրոններու եւ քարոզչական միջոցներու: Եթէ հայ գիր ու գիրք սպառող զանգուած ունենայինք, այդ խնդիրները դրական լուծում կը գտնէին:

Հայերէն գիր ու գիրքի ընթերցող(ներ)ը պիտի օժանդակէ որպէսզի հարթուին դժուարութիւնները, գնելով գիրք, բաժանորդուելով, հասցէի փոփոխութիւնը իմացնելով ցրուումի կեդրոնները:

Հրատարակչատունը բարեսիրական հաստատութիւն չէ: Գրողը իր գրիչով ապրելու իրաւունք ունի: Վերականգնումի համար կենսական է որ հայերէն գիր ու գիրք մտնեն իւրաքանչիւրի յարկին տակ: Այս պարզ ու համեստ աշխատանքը կարելի կ'ըլլայ համազգային ճիգով, առանց խտրութիւններու կամ պատրուակներու ետին թաքնուելու, ստեղծելով այն առասպելը, որ գիր եւ արուեստ վերնախաւի կամ ընտրանիի մենաշնորհ են:

Վայ այն օրուան երբ հայերէն գիր եւ գիրք կը դադրին մեր տուններուն ազնուական հիւրը ըլլալէ: Կը պատահի՞ որ այս ըսենք մեր զաւակներուն, դրացիին, հեռուի եւ մօտի զարմիկներուն, առանց սպասելու տարեդարձ, տարելից, յոբելեան:

Եւ ինչո՞ւ չըսել՝ եթէ ինքնութեամբ կ'ուզենք տեսել:

Բ.

ԾՈՎԸ, ԱՄԻ ԱՅՍ ԿԱՊՈՅՏ ԽԱՅՏԱՆՔԸ...

... Եւ քալեցի:

Օտարական տղամարդը ուզեց ըսել, թէ երկար քալեց, քալեց կեանք մը ամբողջ, մինչեւ մահ քալեց եւ բառերը, որոնց ստուերներուն մէջ ապագան իր յիշողութիւնն էր կոտտացող՝ ինչպէս յամեցող տուայտանքը պարիսպին ճեղքերուն մէջ անշարժութեան դատապարտուած օրերուն, բառերն այդ բանտարկեալ շարժեցան, դուրս ելան իրենց խոզակներէն, հպարտ աքլորներու պէս կանգնեցան յաղթածիդ, քայլ կապեցին իր քայլերուն հետ եւ յուզեցին ոլորապըտոյտը յիշողութեան անել չըջանակին: Բառերը աչք ունէին, ունէին ականջ, ունէին հոտառութիւն, յիշողութիւն ունէին, կը տեսնէին, կ'որսային ձայները բոյրերուն, բոյրերուն արշալոյսները իրարմէ կ'անջատէին, կը զրուցէին եանա՛հեանա՛ պարող ջուրերուն հետ, ալիքներուն վերանորոգ թափ ու խենթութիւն կը պարգեւէին, մինչ ինք կը շարունակէր խօսիլ եւ ա՛լ ոչինչ կը յիշէր:

Ծովը կ'արթննար շարժում առ շարժում եւ չարախինդ կասկած մը կ'ուռեցնէր առագաստները հարցումներուն: Ի՞նչ կ'ուզէր: Երկիմաստութեան ու երկմտանքի ուրուականները տեղ մը կանգ պիտի առնէին, ե՞րբ, եւ յետոյ՝ պատասխանները ո՞ւր պիտի թառէին ոգեւորութեան լոյսերը յաւակնոտ ջուրերուն: Ծովը կ'ահագնանար դարաւոր ողբերգութիւնը կորուստներուն եւ բառերը՝ ինչպէս ովկիանոսներու կարօտէն արթնցած նաւակներ, աջ ու ձախ կը կորսուէին խորտակման ալեկոծ տարտարոսներուն մէջ:

Տակաւին հոն էր:

Ծովուն բացերը լողացող ծովահարսը կ'օրօրէր մեղեդիները փրփուրներուն, կը կորսուէր պահ մը, յետոյ դարձեալ կը յայտնուէր, կը շոյէր ժանեակները ալիքներուն, որոնց կը պատասխանէին գիրար տարտղնող խռովիչ հարցումներ եւ աղմուկը իր վախճան ու հանգիստ չճանչցող վախերուն գինք դարձեալ կ'աքսորէր դէպի նոր եւ ա՛լ աւելի սարսափելի անձկութիւններ:

Կ'ըսէր, որ կ'երազէ, դեռ չէ արթնցած այս անբացատրելի մղձաւանջէն, որովհետեւ շարժելու ո՛չ ուժ եւ ոչ ալ տրամադրութիւն ունէր, էգը իր կողքին էր տակաւին, ծովահայեաց բիւրասապատ ժայռաբլուրի է՛ն վտանգաւոր կէտին վրայ, տիւ ու գիշեր մարտահրաւէր կը կարդար արկածախնդրութեան հրճուանքը սուլող ալիքներուն, մինչ ինք, տարուած ծաւալող փոթորիկին սաւառնաթեւ երգերէն՝ կը կարծէր, որ փրփրախօս ձայնանիշերուն գորգեան հանգոյցները կը քակէ եւ կ'ապրի յարագնաց երթը սա կապոյտ խայտանքին:

Կարծես կ'երազէր:

Ո՛չ, իրապէս կ'երազէր եւ կը փորձէր ինքզինք մխիթարել:

Ձանդրադարձաւ: Աղմուկը նահանջեց: Ջուրերը լռեցին յանկարծ, տիրեց մահուան չափ խոր լռութիւն, հայեացքը սառեցաւ կարօտներ թալրտալէն ոտքերուն առջեւ մահացող ձկնիկներուն ու ծովախոտերուն վրայ, անոնց շրթնե-



րէն մարող հարցումներուն վերջին վանկերը քաղեց եւ թարմ աղին զիլ հոտե-
րով ծանրացած կնոջ մարմինը շօշափեց:

Յետոյ լռեց տրամաբանութիւնը առեղծոճածին եւ սկսաւ պատմել:

«Անշնչացած ձուկեր տեսած չունիմ: Դուն տեսա՞ր: Իրա՞ւ: Ի՛նչ կ'ըսես»,
զարմացաւ տղամարդը եւ սկսաւ երազել: Էգը մօտեցաւ ինքնավստահ քայլե-
րով եւ ալիքները մատնացոյց ըրաւ: Հասկցաւ, որ մէկ ոստումով պէտք է նետ-
ւի ալիքներուն գիրկը, խորտակէ մկանները անշարժացուցած վախը, յաղթէ
ծովուն, սուզուի խորերը ջուրերուն, փնտռէ ծովամոյն եղած հրաշաքաղաքին
հետ դարեր առաջ թաղուած եօթը դիւցազուններուն եօթը երգերը, զանոնք
դուրս բերէ անդնդախոր խաւարներուն խորերէն, մաքրէ մեռած ժամանակնե-
րու մամուռ կապած մաշկերէն, լուայ անմահութեան աղբիւրին հրաշագործ
ջուրով, պարզէ արեւուն, շնչաւորէ սիրոյ երգերուն կախարդական մեղեդիներ-
ով եւ յանձնէ ծովեզերքի ձայնաւոր եղէգներուն: Հիմա կը հասկնար, որ ինք-
զինք լիովին ճանչնալու համար, պէտք է անպայման մտերմանայ իր ներքին ծո-
վուն մութնամուտ հրաւէրներուն հետ, վերծանէ փսփսուքները ոստրէներուն,
որսայ լոյսերը խաւարներուն, դառնայ երկնային զօրութիւն եւ երգէ փառքը
սահմանազանց ու անվախճան լողարշաւին, որուն մասին կինը ի՛նչ-ի՛նչ առաս-
պելներ հիւսած էր, յետոյ զինք ձգած առանձին, որպէսզի իր սիրուհին աղեղ-
ւած ժամանակի գետին խոյանքով նետուի ծովուն գիրկը, նոյնանայ խորախոր-
հուրդ խորերու առեղծոճներուն հետ եւ ապրի գալիքին շարականները՝ խու-
ճապահար վախկոտներուն աստ ու անդ տարտղնուած ցնցոտի յիշատակները
դարպասելու փոխարէն:

Էգը կարծես տակաւին կը բարբառէր, բայց ինք կը զգար, որ կը մսի, կը
վախնայ ծովէն, մանաւանդ անոր խորամանկ մարտահրաւէրներէն եւ թէ՛
անախորժ անակնկալներ իրեն կը սպասեն:

Յուրտէն պիտի սառիմ, պոռթկաց տղամարդը եւ սարսափեցաւ իր իսկ ձայ-
նի ուժգնութենէն: Էգը կարեւորութիւն չընծայեց իրեն, ջուր նետուեցաւ եւ
զինք դարձեալ առանձին թողուց: Նստեցաւ խարակին ծայրը, աչքերը անորոշ
հորիզոնին, ա՛լ աւելի սարսափեցաւ, ոգնիի մը պէս կծկուեցաւ, փորձեց լռեցնել
իր ենթագիտակիցը տակնուվրայ ըրած մտավախութիւններուն թնճուկները,
հասնիլ արքայական եօթներանգ պարեգօտին, որ երջանիկ օր մը կինը փորձած
էր սահեցնել իր գլուխէն՝ մերկ մարմինն ու յամեցող անձկութիւնը արեւուն
տէգերէն եւ օրերուն սպառնալիքներէն պաշտպանելու համար:

Ինչո՞ւ մերժած էր երջանկայիշատակ արքային գահին բարձրանալու կնոջ
հրաւէրը, այդքա՞ն ինքնավստահ չէր, իրապէ՞ս դարձած էր ստրուկը իր կաս-
կածներուն, իսկ հիմա ի՞նչ կ'ուզէր, մահուան գնով ինչո՞ւ կը տենչար հասնիլ
պարեգօտին, տիրել իր օրերը պաշարած սոսկումներուն եւ յայտարարել վերա-
դարձը իր արեան մէջ քնացած պոռթկումին:

Չկրցաւ պատասխանել:

Ինչպէ՞ս պատասխանէր, երբ ծովաքամին կը մռնչէր կատաղօրէն, չրջազ-
գեստը կը ծփար, կը հեռանար, կերպասին շրշիւնները տակաւ առ տակաւ կը
մարէին աչքերուն մէջ, ալիքները նոր մարտահրաւէրներ կ'ոռնային, կը տիրէր
իրարանցում դժոխային, ահուսարսափը կ'երկարէր խաւարները ծովամոյն քա-
ղաքներուն, իսկ յարալէզները կը մերժէին վերադառնալ՝ արթնցնելու համար

անկենդան մարմինը հրաշամանուկ գահաժառանգին:

Անձկութիւնը դարձաւ կապարեայ սպառնալիք, ծովեզերքը գրկած լեռնաշղթային ահաւորութեամբ թանձրացաւ խորը բիբերուն, եղաւ խաւարման ու կորուստներու գիշեր, անջրպետ մահամուսլ եւ գութեց ահաւորութիւնը այն հեղուկ դժոխքին, զոր օր մը կ'իյնր «ծով» բառով սահմանած էր, երբ լռած ձայներուն արշալոյսը գէթ անգամ մը տեսնելու իր անգուսպ ցանկութենէն տարուած՝ ինքզինք յանկարծ գտած էր անծանօթ փերուն վրայ:

Ասիկա ծովը ըլլալու է, մտմտաց տղամարդը եւ յիշեց, որ ինք լեռներուն գաւակն է, սիրահարը երկնամերձ կատարներուն եւ քերթողը ձիւնասպիտակ ամպերուն: Յիշեց ու տխրեցաւ: Այս ծովը ոչ մէկ բանի կը նմանի, ոչ մէկ կապ ունի ինծի հետ, անդադար դէմք ու տրամադրութիւն փոխող եսասէր կախարդուհի մըն է կարծես, կարելի չէ վստահիլ իրեն, աւելցուց մտատանջ եւ աչքերը փակեց:

Ասկէ առաջ ծով տեսած էր: Չէր յիշեր: Ինչպէ՛ս յիշէր, երբ հագիւ փորձած՝ իր անունն իսկ մոռցած էր: Այդ օրուրն է ի վեր իր յիշողութիւնը նոյնացած էր անպատասխան հարցումներուն հետ, դարձած անձկութիւններու անկէզ մորենի, ահուսարսափ ինքնահայած, նոյնիսկ՝ իր ձայնն ու շունչը:

Հիմա՝ կատողած ալիքները հետզհետէ աւելի կը խոժոռէին, կը խոյանային անհունն ի վեր, փուլ կու գային, կ'որոտային, կը խենթանային ուղիսօրէն, եւ պարեգօտը, որ այնքան նման էր մորթազերծ եղած ցուլերու դեռ սպանդանոց ու մահ հոտող տաք կաշիներուն, կարծես յաւելեալ գրաւչութեամբ մը կը գեղացկանար: Կը գեղեցկանա՞ր. ո՛վ գիտէ, հաւանաբար: Բայց մահը ե՞րբ գեղեցիկ եղած էր, որ պահ մը գեղեցկութեան մասին մտածէր: Ուրկէ՞ ուր այս համեմատութիւնը, յետոյ՝ ցուլը ի՞նչ գործ ունէր այս մահախօս ալիքներուն հետ, ուր ամէն գիծ մահ կը գոռար, մէն մի անկում մահ կը փրփրէր, իւրաքանչիւր խենթացում մահ կ'արձագանգէր, նոյնիսկ սա անդիմադրելի գեղուհին, որ իբրեւ մարմնաւորեալ ճակատագիր՝ շարունակ գիւնք կը հալածէր եւ կը փորձէր ծովահարսին գահը գրաւել:

- Եկո՛ւր:

- Բայց շատ պաղ է եւ վտանգաւոր:

- Մեղայ Տէր... ո՞վ ըսաւ...

- Դուն չըսի՞ր...

- Կը բաւէ ձաբռտես, ջուրը կրակի պէս տաք է:

- Հապա՞ աղը:

- Ջուրին մէջ լուծուած է, մեռա՛ծ:

- Բայց ձուկե՞րը...

- Անոնք արդէն սատկած են:

- Բայց ես ոչինչ տեսած ունիմ, սաստիկ մոլթ է:

- Մոլթը աչքի՞դ մէջ է:

- Աչքի՞ս... վրա՞ս կը խնդաս:

- Ե՞րբ հետդ կատակած եմ: Թօթուէ՛ վախը վրայէդ, հոգիդ ազատագրէ իր կասկածներէն եւ անպայման կը տեսնես:

- Փորձեցի, փորձեցի վտարել սրտէս, բայց դեռ մոլթ է:

- Վերջ տուր պատրուակներուդ եւ ջուր նետուէ:

- Բայց... Բայց... Բայց ես լողալ չեմ գիտեր եւ կը վախնամ...

- Նետուէ՛ր: Քեզի համար թեւ ու լոյս կը դառնամ եւ կը լուսաւորեմ ծովն ու երկինքը:

Կինը ե՞րբ մօտեցաւ, ե՞րբ զինք ամփոփեց իր բազուկներուն մէջ, ե՞րբ...: Չկրցաւ պատասխանել: Ի՛նչ փոյթ: Կարեւորը այն էր, որ հիմա ինք ջուրին մէջ էր եւ կը ծփար: Մնացեալը աւելորդ մանրամասնութիւն էր, անտեղի մտատանջութիւն եւ ժամանակի վատնում: Ի՛նչ լաւ: Կապոյտի նմանող անհանդարտութիւն մը հիմա կ'անհունանար աչքերուն մէջ, ինք կը տեսնէր, կը դիտէր վերացած եւ կ'երջանկանար: Տղամարդը ո՛չ ոքի պատմեց տեսածը եւ ինքզինք դարձեալ գտաւ կապոյտ երանութեան գիրկը, որ կամաց-կամաց սկսաւ ծանրանալ եւ տիրեց խաւար լուծիւն: Էգը կողքին էր: Երկարեց ձեռքը, մատնացոյց ըրաւ հեռուն, խօսեցաւ ծովուն արգանդին մէջ քնացող արեւուն մասին, ծովամոյն եղած մեհանին արեգակունք աչքերով քրմապետին փառքը հիւսեց, յետոյ ուրիշ բաներ ըսաւ, սակայն ինք բան մը չհասկցաւ:

Ինչպէ՛ս հասկնար, երբ տակաւին միայն սեւ կը տեսնէր, սեւ ու մռայլ ահաւոր խաւար մը, որ բիբերուն խորը մահատեսիլ ուրուականներ կը գիշերէր եւ վերջնական խաւարին ահեղ դատաստանը կը նախապատրաստէր:

Յնցուեցաւ եւ հարցուց.

- Ի՞նչ է ծովուն գոյնը:

- Ա՞յս ծովուն,- պատասխանեց կինը:

- Ինչու ուրիշ ծով կա՞յ...

Լռեց: Է՛ն արձանային խոփոռումը ափահայ հարցումին եւ դարձաւ ստուերը ժամանակին: Մահուան չափ ու կեանքէն աւելի: Յետոյ զիրար հալածող վիշապներ խոտեցին աչքերէն ներս, գրաւեցին աստ ու անդ, պատասխան ու հարցում եւ իր առասպելին գալիք օրերուն անցեալին իսկ մոռցաւ:

Ձայնը մասնատուեցաւ, վերածուեցաւ անհամար բեկորներու, անհասկնալի վանկերու, փրփուրներու պէս տարանջատուող տառերու եւ կորսուեցաւ իր փոթորկաժայթք ներաշխարհին բաղաձայն աղմուկին մէջ:

- Քեզ լսած չունիի՞մ,- սարսափահար գոռաց օտարականը:

- Ինչու ե՞րբ սկսայ խօսիլ,- պատասխանեց կինը իր գիտցած լեզուով՝ ծովուն բառերով:

Տղամարդը մեծ ճիգով մտիկ ըրաւ կնոջ, բայց ոչինչ հասկցաւ: Մտածեց, որ բառերը նման են հեռաւոր անծանօթ մոլորակներու, որոնց մասին գեղահրաշ առաքելուհի մը պատմած էր իրեն, դարեր առաջ, կարօտներու ապարանքին գոհարազարդ դրան առջեւ, բայց պատմութիւնը ա՛լ չէր յիշեր եւ կամ՝ թերեւս պատմած ալ չէր:

Յետոյ տեսաւ ինքզինք՝ անտէր ու առանձին, լքուած ճակատագրէն՝ ճակատագրի դէմ եւ ծովածաւալ սարսափ մը ապրեցաւ: Ինք կը սահէր անզսպելի արագութեամբ, անդունդներու անբեւոյթ աշխարհն ի վար, իր մահը պատրաստող գետի մը պէս, որ կը յանձնուի աղին հմայքին եւ իր քաղցր ջուրին այբուբենով իր երկրորդ կեանքին նախերգանքը կը ծովագրէ: Պարեգօտը կը վազէր իրմէ առաջ, ինք կը թաւալէր, կը փորձէր հասնիլ, բռնել անոր քղանցքէն, բարձրանալ, թէկուզ գերագոյն ճիգով, կարդալ սիրերգը արեւուն հետ զրուցող մակերեսի ջուրերուն, լիանալ պահ մը, ապրիլ ակնթարթ մը՝ երանութեան

մէջ եւ երանութեան համար, յետոյ, եթէ անխուսափելի էր՝ յանձնուիլ մահ-
ւան եւ դառնալ յուշ ու երազ: Բայց տակաւին կը թաւալէր եւ կարծես ինքզինք
կը հալածէր: Գուցէ մահը, թերեւս կեանքը կամ իր ճակատագիրը:

Երբ մատները անորոշ մարմին մը շօշափեցին, երբ կինը գտաւ իրեն փարած,
արթնցաւ իր արթմնի երազէն եւ իր անհաւատալի պատմութիւնը պատմեց: Կի-
նը ծիծաղեցաւ լիաթոք եւ ըսաւ, որ զարմանալու, սոսկալու պատճառ չկայ,
ա՛յս է կեանքը, ծովը այսպէս է միշտ, արարչագործութեան առաջին ակնթար-
թէն ի վեր, ամէն օր եւ ամէն ժամ, յար եւ յաւիտեան եւ եւ այլն, եւ այլն...

Ծովը ձէթի պէս լպրծուն էր, տաք ու տարօրինակ: Ինք կարծես կ'այրէր, կը
քրտնէր՝ իր հաւատքին ձէթը ծորող սրբանկարի մը պէս եւ կ'երջանկանար: Եր-
բեք այսքան խաղաղ չէր եղած, ինքզինք այսքան անտարբեր ու հանգիստ չէր
զգացած: Երբե՛ք: Հիմա քրտինքը կաթիլ-կաթիլ կը միախառնուէր ծովուն ջու-
րերուն՝ ինչպէս աղը, ինչպէս երազը, ինչպէս յիշողութիւնը, որ ա՛լ իրը չէր եւ
ծովուն կը պատկանէր: Անդրադարձաւ, որ աներեւոյթ ուժ մը զինք ծովուն
խորերը կը քաշէ եւ փորձեց հակադարձել: Տարօրինակ բաներ տեղի կ'ունենա-
յին: Ըսաւ կնոջ, թէ ուզած է պոռալ, փորձած է օգնութիւն կանչել, յետոյ ու-
րիշ բաներ ըսաւ, բայց կինը անտարբեր պատասխանեց, որ սոսկալու, տակ-
նուկրայ ըլլալու ո՛չ մէկ պատճառ կայ, «ձեռքերուս մէջն ես արդէն, յիմա՛ր»,
ծիծաղեցաւ, ապա ուրիշ բաներ աւելցուց, շարունակեց ծիծաղիլ եւ շարունա-
կեց լողալ: Պատասխանեց, որ օգնութեան պէտք չունի, «ես ա՛լ կրնամ լողալ»,
ըմբոստացաւ տղամարդու իր խոցուած արժանապատուութիւնը եւ յանձնուե-
ցաւ ակիքներու քմահաճոյքին:

Յանձնուէ՞ր պարտութեան: Ո՛չ: «Ծովը ե՛ս եմ», պոռթկաց եւ դուրս նետուե-
ցաւ վախերու ու կասկածներու իր ներքին ջրապտոյտէն: Ինչ զոհողութիւն ալ
պահանջուէր, ինք որոշած էր յաղթել ժամանակ կոչուած եօթգլխանի վիշա-
պին, ստեղծել ի՛ր ժամանակը, վերջ տալ ստրուկի գոյավիճակին եւ տիրե՛լ: Չէ՞
որ մարդ էր, տղամարդ էր ամէն բանէ առաջ ու վերջ եւ վճռած էր փրկել իր
տեսակին արժանապատուութիւնը, ըմբոստանալ, յաղթել ու պարտադրել իր
օրինաչափութիւնը՝ իր իսկ ստեղծած ժամանակին դէմ եւ վեր բոլո՛ր ժամա-
նակներէն:

Կը լողար, թէկուզ դժուար, հակառակ անոր, որ մարմինը անտանելիօրէն կը
ցաւէր եւ կարծես կ'ուռէր: Այդպէս զգաց: Ձեռքը երկարեց գունդ ու կլոր փո-
րին, մատները մածուցիկ ծովաբոյսեր ու փուշեր շօշափեցին, սահեցան ազդրե-
րէն վար եւ սոսկաց: Ոտքերը դժուարութեամբ կը շարժէին: Փորձեց դուրս գալ
իր շուրջ գալարուող ջրապտոյտէն, ուղղութիւն փոխել, բարձրանալ, ողջունել
արեւը եւ շնչել: Սակայն ոտքերուն պլլուած ծովախոտերը աւելի կը հանգուց-
ւէին ու մարմինը հետզհետէ կ'ընկղմէր՝ յիշողութեան ջուրերուն մէջ ջրամոյն
եղած անցեալ անկատար օրերու նաւակներուն պէս: Երբ վերջապէս յաջողե-
ցաւ, երբ ոտքերը ազատեց ծովախոտերուն աքցաններէն, երբ ջրապտոյտէն
դուրս նետուեցաւ ու ծովուն մակերեսը բարձրացաւ, նկատեց, որ շատ հեռա-
ցած է կնոջմէն: Ափով սրբեց թարթիչները խանգարող կաթիլները, դժուարու-
թեամբ վեր առաւ կոպերը եւ զօրաւոր այրուցք մը զգաց: Աչքերէն կարծես
կրակ կը ժայթքէր: Գոյներն ու գիծերը իրարու կը խառնուէին եւ անորոշու-
թիւնը տեսողութեան ուղիները կը հանգուցէր:



Կնոջ ձայնը հասաւ ականջին. «Գրեթէ հասայ, քիչ մըն ալ դիմացիր», եւ փորձեց կնոջմէն առաջ հասնիլ: Մեծ ճիգով բացաւ իր անյուր սարսափը բանտարկած աչքերը, նայեցաւ չորսդին եւ չհաւատաց տեսածին: Ո՞ր է ծովահայեաց ժայռաբլուրը, Աստուած իմ, ո՛ր մնաց, մտմտաց յեղակարծ, լարեց հայեացքները, կրկին չտեսաւ եւ անդրադարձաւ, որ չորս կողմը ջուր է, անսահման ու անվախճան ջուր, ծով ու միայն ծով, որ կ'եռար, հանքային աղերը կը թափանցէին մարմինին վրայ նոր բացուած վէրքերէն ներս, անտանելիօրէն կ'այրէին, աչքերուն արտասովոր հրափուշեր կը մխրճուէին, սաստկացող ցաւը կ'արշաւէր քառասմբակ եւ վախն ու աղիոգորմ խռովքը աւերներ կը գործէին:

Կը մաքառէր կիսափակ աչքերով, կը փնտռէր կիներ, որ իր կողքին էր, քիչ մը անդին, բայց ինք չէր տեսներ եւ կը լողար հակառակ ուղղութեամբ: Իբր թէ կը լողար: Միշտ այսպէս եղած էր: Շարունակ կարծած էր, որ հետապնդած թիրախը կը գտնուի իր հասողութենէն ոչ հեռու, ամբողջ մէջ է արդէն, սակայն ան անդիկի մը պէս սահած էր մատներուն արանքէն եւ կորսուած՝ դաւադիր ժամանակի երախին մէջ: Եւ ինք միշտ մնացած էր ժամանակէն անդին ու գերին ժամանակին: Անպարտելիին:

Պարտուած էր: Տապալած էր շանթահար, բայց, ո՛վ առեղծուած զարմանալի, նորէն ելած էր ոտքի, պայքարած ոգի ի բռին, գերագոյն ճիգով, փորձած էր բռնել ժամանակին պոչէն, գամել զայն Անյուշ բերդի պարիսպի ճակատին եւ իր վերջնական անկախութիւնը հռչակել: Տիրել իր ժամանակին եւ ապրիլ: Գոնէ այս անգամ յաջողէր, գէթ անգամ մը ազատէր ոտքերը կաշկանդող հազարաճեղք ծովախոտերէն, հասնէր իր ճակատագրին, որ «քիչ մըն ալ» կը յորդորէր, կը յուսադրէր, նոր հաւատք ու աւելն կը փոխանցէր մարող դնդերներուն, ծայրագոյն յամառութեան հրդեհներով երակները կը փոթորկէր, յետոյ խոյս կու տար եւ մուրթ ու անհեթեթ խաղին արարը կ'երկարէր:

Արդեօ՞ք ճիշդ կը տեսնէր: Զեռքի շարժումներով կիներ բաներ մը կ'ըսէր եւ հետզհետէ աւելի յստակ կերպարանք մը կը ստանար: Լալու, փղձկալու անզուսպ ցանկութիւն մը ունեցաւ: Ուրախութենէս է, մտածեց պահ մը եւ սկսաւ լալ: Ամէցաւ: Կրնա՞ր չամչնալ: Բայց ներսիդին խլրտող լուռ ձայն մը յուշեց իրեն, թէ պիտի յանձնուի անոր, խնդրէ պիտի տակաւին, որ զինք իր տունը տանի, միասին մտիկ ընեն աղջիկներուն լացն ու կոծը, մխիթարէ զանոնք, կեղծ-կեղծ խոստումներով հայրութիւն խաղայ, ըսէ, որ արշալոյսը իրենց հետ ողջունելու համար վերադարձաւ, որ լոյսը պիտի ծագի ուշ կամ կանուխ, որ հականը չյուսահատիլն է, որ պէտք է սպասել սորվին, քիչ մըն ալ համբերեն եւ նման բաներ:

Զհաւատաց: Զհաւատաց իր իսկ յորինած խաբկանքին եւ շարունակեց լողալ: Ափը կ'իջնէր ջուրին, ճողբիւնը կը թնդար, ծովը նոր ալիքներ կը ծնէր, ալիքները կ'արթննային գիրար օրօրող սալիտակ փրփուրներ, կը փսփսային հաճելի խօսքեր, մինչ մարմինը հետզհետէ աւելի կը ծանրանար: Եթէ յաջողիմ ազատիլ շարժումներս հանգուցող սա ծանր ու խռովալի սարսափին կապանքներէն՝ հաւանաբար հասնիմ, մտածեց ականթարթ մը, բայց անմիջապէս հրաժարեցաւ իր արժանապատուութիւնը խոցող մտածումէն: Եթէ ազատիմ, եթէ թեթեւնամ՝ թերեւս ա'լ չցանկայ զիս, չհալածէ քուն թէ արթուն, թերեւս հրաժարի ամէն գնով զիս ունենալու իր յամառ ցնորքէն, մտմտաց պահ մը ինքզինք մխի-

Թարեւո՞վ եւ ուրկէ՞ ուր Յովնանը յիշեց:

«Լա՛ւ մտիկ ըրէ, այսօր քեզի հետաքրքրական պատմութիւն մը պիտի պատմեմ, հաւանաբար անհաւատալի պատմութիւն մը, որ սակայն պարզ իրականութենէն աւելի իրական է եւ պիտի խօսի սրտիդ», ըսած էր օր մը ալեփառ մօրուքով ծերունի քահանայապետը եւ շարունակած:

«Լա՛ւ մտիկ ըրէ: Տէրը խօսեցաւ Ամաթիի որդի Յովնանի եւ անկէ պահանջեց, որ Նինուէ մեծ քաղաքը երթայ եւ իր խօսքը քարոզելով՝ նինուեցիները դարձի բերէ, որովհետեւ անոնք յանձնուած էին չարութեան ու շեղած ճշմարիտ ճանապարհէն: Բայց Յովնան ելաւ եւ Նինուէ ուղղուելու փոխարէն Յոպէ իջաւ, որպէսզի փախուստ տայ Տիրոջ երեսէն: Հոն Թարսիս գացող նաւ մը գտաւ, վարձքը տուաւ եւ անոր մէջ ապաստանեցաւ:

Ծովուն բացերը հագիւ հասած էին, երբ Տէրը մեծ փոթորիկ մը հանեց: Մարդակուլ այնպիսի փոթորիկ մը, որուն նմանը նաւավարները իրենց կեանքին մէջ չէին տեսած: Մարսափած՝ նաւավարները սկսան կռուիլ մահուան կատաղի վիշապներուն դէմ՝ խորտակուելու վտանգէն փրկուելու համար: Ամէն մէկը իր աստուծոյն կ'աղաղակէր ու նաւուն մէջի կարասիները ծովը կը նետէր, որպէսզի գայն թեթեւցնէ: Բայց Յովնան նաւուն խորշը իջնելով՝ պառկեւ էր ու խորունկ կը քնանար: Դժնետեսիլ ալիքներուն հետ նաւը մէկ վեր, մէկ վար կը տատանէր՝ ծովուն քմահաճոյքէն կախեալ յարդի շիւղի մը պէս: Պոռչտուքն ու հայհոյանքը, անէծքն ու աղօթքը, իրարու խառնուելով՝ կը կորսուէին կենաց մահու ահեղագոռ տակնուվրայութեան մէջ: Անխուսափելի մահը աջ ու ձախ իր մանգաղները կը ճօճէր եւ ա՛լ փրկութիւն չունէին: Եւ նաւապետը մօտեցաւ Յովնանի ու ըսաւ անոր. «Քեզի ի՞նչ եղաւ, ո՞վ խոր-խոր քնացող. ե՛լ, դուն ալ քու Աստուծոյդ աղաղակէ, թերեւս Աստուած յիշէ մեզ եւ փրկուինք»:

Յետոյ մտածեցին, երկար մտածեցին եւ ըսին իրարու. «Եկէ՛ք, վիճակ ձգենք, որպէսզի գիտնանք, թէ այս չարիքը որո՞ւն պատճառով մեր գլխուն եկաւ»: Եւ վիճակ ձգեցին, ու վիճակը Յովնանի ելաւ: Եւ անոնք ըսին. «Բարեկամ, հիմա պատմէ մեզի, թէ ո՞վ է այս չարիքին պատճառը, գործդ ի՞նչ է, ուրկէ՞ կու գաս, քու երկիրդ ո՞րն է, ո՞ր ազգին կը պատկանիս...»: Դեռ շատ հարցումներ պիտի տային, բայց Յովնան ընդմիջեց իրենց հետաքրքրասիրութիւնը եւ խոստովանեցաւ. «Եբրայեցի եմ, ծովն ու ցամաքը ստեղծած Ամենակարող Աստուծմէն, որմէ շատ կը վախնամ»: Եւ պատմեց իր պատմութիւնը: Ակամայ խոստովանած էր արդէն՝ քանդելով փախուստի եւ փրկութեան նոյնիսկ վերջին մագէ կամուրջը: Եւ յանձնուեցաւ: Այն ատեն նաւավարներն ու ծովագնացները շատ խիստ վախցան եւ ըսին. «Այս բանը ինչո՞ւ ըրիր: Ըսէ նայինք, հիմա մենք քեզի ի՞նչ ընենք, որ ծովը խաղաղի»: Ըսէ՞ր, խոստովանէ՞ր, բայց վախը լեզուն կապեց եւ չկրցաւ բարբառիլ. «Ձիս վերցուցէք ու ծովը նետեցէք եւ, վստահ եղէք, ծովը կը խաղաղի: Որովհետեւ ես գիտեմ եւ դուք ալ պէտք է գիտնաք, որ այս փոթորիկը իմ պատճառովս ձեր գլխուն պայթեցաւ եւ դուք...»: Ինչպէ՞ս ըսէր, որ ա՛յս է միակ փրկութիւնը, ա՛յս է կեանքին օրէնքը, Աստուած գոհ կը պահանջէր եւ ինք պէտք է ըլլար գոհն ու գոհաբերը:

Ուզեց ըսել, բայց բառերը դարձեալ դաւաճանեցին, զինք ձգեցին առանձին եւ տխուր-տրտում լռեց, մինչ նաւավարները թիերը քաշելով՝ կը ջանային նաւը դէպի ցամաք դարձնել, բայց չկրցան, որովհետեւ ծովը երթալով ա՛լ աւելի կը

խենթանար եւ իր համայնակուլ երախները լայն կը բանար իրենց դէմ: Սարսափահար ու յուսաբեկ՝ ծնրադրեցին ու բազկատարած աղաղակեցին. «Տէր ամենակալ, բարեգութ եւ ամենահաս ո՛վ Հայր երկնաւոր, կ'աղաչենք, այս մարդուն համար մեզ կորուստի մի՛ դատապարտեր եւ մեր ճիտին անմեղ արիւն մի՛ դներ, քանզի Դուն, ո՛վ Տէր, ըրիր ինչ որ կամքդ էր»:

Առնուած էր որոշումը: Արեւէն ծեծուած խոժոռ դէմքով, հաստաբազուկ ու հսկայ երկու նաւագներ մօտեցան Յովնանի, գրկեցին ու ծովը նետեցին: Յանկարծ, ակնթարթի մը մէջ, ալիքները լռեցին եւ ծովը խաղաղեցաւ: Եւ մարդիկը Աստուծոյ սաստիկ վախցած՝ զոհեր մատուցին իրենց անծանօթ Աստուծոյն եւ ուխտեր ըրին:

Հիմա ի՞նչ ընէր: Դո՛ւք ըսէք: Լա՞ր: Ինչ օգուտ: Որոշուած էր: Պիտի խեղդէր: Ինք պէտք է մեռնէր անոնց համար, որպէսզի կեանքը շարունակուէր եւ զոհերու ցանկին վրայ նոր մատաղցուի մը անունը գումարուէր: Յովնան երկար լացաւ, աղօթեց, աղաչեց, դարձեալ լացաւ, կրկին պաղատեցաւ եւ ամենակարող ու բարեխնամ Աստուծոյ փրկութիւն խնդրեց: Թէ ինչեր ըսաւ, միայն ինք եւ Աստուած գիտեն: Յետոյ, քեզի ի՞նչ ուրիշին աղօթքը, չէ՞ որ աղօթքը ծայր աստիճան խորհրդապահ խոստովանութիւն մըն է. դո՛ւն մնացիր Աստուծոյ գործին խառնուողը...

Եւ Տէրը գթաց իր մեղաւոր որդիին եւ հրամայեց մեծ ձուկի մը՝ պահանջելով կլլել Յովնանը: Կէտը ենթարկուեցաւ Տիրոջ հրամանին եւ Յովնան երեք ցերեկ ու երեք գիշեր մնաց ձուկին փորին մէջ: Յովնան զղջաց, դարձեալ իր Աստուծոյն աղօթեց եւ ըսաւ.

«Նեղութեանս ընթացքին Տիրոջ աղօթեցի

Եւ ան լսեց զիս ու պատասխանեց:

Դժոխքին յորովայնէն ձայնս լսէ, Տէր,

Վասնզի զիս ծովուն սրտին խորերը նետեցիր

Եւ գետերն ամէն զիս պաշարեցին.

Ջրօսանքներդ ու ալիքներդ բոլոր վրայէս անցան

Եւ ըսի ես. «Տէր, զրկուեցայ քու լոյս տեսադաշտէդ»,

Բայց ըսէ, խնդրե՛մ, արդեօք տակաւին

Պիտի կարենա՞մ անգամ մ'ալ նայիլ Քու սուրբ տաճարիդ:

Ջուրերն ահաւոր, օ՛, մինչեւ հոգիս շուրջս հաւաքուեցան

Եւ անհնարին անդունդներն ամէն զիս պաշարեցին

Եւ գլուխս լեռներու փապարներուն մէջ մտաւ:

Իջայ երկիր, որուն նիգերը յաւիտենական կղպանքներ են լոկ,

Բայց իմ կեանքս Դուն ապականութեան գութն դուրս բերիր:

Տէր իմ բարեգութ եւ ամենագոր,

Երբ տկարացայ հոգեպէս ես ալ՝

Քեզ յիշեցի, Տէր, եւ միայն, մի՛այն Քեզի դիմեցի

Եւ իմ աղօթքս Քու սուրբ տաճարիդ մայր դրան հասաւ:

Սուտն ու ունայնութիւնը բոլոր գործողները

Հեռացան իրենց ողորմութենէն,

Բայց ես, խոստովանանքի եւ օրհնութեան ձայնով,

Քեզի պիտի մատուցեմ զոհն այն, զոր ուխտեցի

Եւ զայն փրկագին իբր ընծայեմ

Քեզի, ո՛վ իմ Տէր»:

Եւ Աստուած լսեց իր հաւատացեալ որդիին աղօթքը, որովհետեւ Յովնան գիտակցեցաւ, որ մեղապարտ է ի ծնէ, յորովայնէ մեղապարտ են տոհմով եւ ազգով, իրենց Ադամ նախահայրէն սկսեալ, եւ իր գործած ու չգործած մեղքերուն համար թողութիւն խնդրեց:

Երեք օր եւ երեք գիշեր ետք, կէտը ծովափ մօտեցաւ եւ Յովնանը աւազներուն վրայ նետեց: Ողջ-առողջ դուրս ելաւ եւ զԱստուած փառաբանեց: Այսինքն, ճիշդն ըսած՝ Յովնան ապաշխարեց, ապաւինեցաւ Տիրոջ արդարադատ գութին, հաւատաց, երկրպագեց, երկիր ու երկինք պագանեց, խաւարին վիհերէն թեւաւորուող լոյսը ճանչցաւ, լոյս ու հաւատք հագաւ եւ բարձր պահեց իր մարդկային տեսակին արժանապատուութիւնը: Հիմա, ըսէ՛ նայիմ, սիրեցի՞ր Յովնանը: «Սիրեցի», պատասխանեց: Հապա՞ կէտը: «Կէտը անվնաս եւ աստուածավախ մեր եղբայրն է», ըսաւ յեղակարծ, «Աստուած զայն օփտած է սուր ու խորաթափանց աչքով», աւելցուց առանց մտածելու եւ լռեց:

Բայց ո՞ւր էր կէտը: Ի՞ր եղբայրը: Կո՞յր էր, բան մը չէ՞ր տեսած, արդեօք մոռցա՞ծ էր զինք: Չէ՞ որ Աստուած զայն օփտած էր սրատես աչքով, սուր հոտառութեամբ, նոյնքան սուր յիշողութեամբ եւ անոր վստահած յատուկ առաքելութիւն: Բոյրը Աստուծոյ, որ ձայնն էր հոգիին, օր մը օրանց չէ՞ր առած, չէ՞ր լսած իր աղօթքներուն բուրահանդէսին մեղեդիները, որ խնկարկած էր երջանիկ օր մը, մայր տաճարին խորախորհուրդ լռութեան մէջ, իրարու ասեղնագործելով իր հոգիին ընտրելագոյն բառերը եւ առ երկինք բարձրացուցած իր աղապատանքներուն պարականոն սաղմոսը:

«Յիմարութիւն մը արիւնէս եկող՝
 ինձմով ինծի դէմ դաւեր կը լարէ:
 Միրոյ պատրանք մը բառերէս ծնող՝
 կը գլորէ զիս բանին գագաթէն
 եւ ես թեւ կ'առնեմ
 անկումին
 ուժէն:
 Մի՛ սխալիք,
 ձեր հետ չեմ ես,
 առանձին եմ այժմ եւ միշտ,
 միշտ ու այժմ առանձնութիւնն եմ մենութեան
 եւ կարօտը իմ իսկ եսիս մտերմութեան:
 Չսխալիք եւ չփորձէք ներս թափանցել
 իմ աշխարհիս մթաւմայ խաւարներէն,
 որովհետեւ իմ բառերը անտէրներ չեն,
 պէտք է միայն ձի՛շո պատկերիս նմանին՝
 առանց ներողամտութեան,
 առանց սնապարծութեան,
 առանց հակաձառութեան,
 առանց քծնանքի,
 առանց հաշիւի,
 առանց ձիգի

եւ գլուխն այս աստղազարդ բարձր պահեն
 նոյնիսկ փառքի հեռագոյն լուսաստղերէն աւելի
 եւ պահպանեն էութիւնն իմ բզիկ-բզիկ ծածանող



այս ձենձերումն ու քայքայումն ալ նոյնիսկ,
որպէսզի տեսնեմ մարդիկը բոլոր ձիշդ ինչպէս որ եմ,
իսկ դառնութիւնս ալ՝ միշտ իրենցմէ մեծ:

Հեղձամահ ընող հրդեհն այս երբեք
պիտի չխեղդեմ ալ բառերու մէջ
եւ ոչ ալ խոնարհ վարդերու նման
զետեղեմ պիտի ձեր իսկ էութեան
եւ քմայքներուն ծաղկամանին մէջ,
որովհետեւ՝

ձշմարտութիւնն իմ ներքին
աւելի մեծ է,
կամ
փոքր աւելի

„ նոյնիսկ այս երգէն:

ձշմարտութիւնն իմ
հիսուած յաւերժի հասկերու բոցէն,
կենդանի մը չէ խելօք ու մնջիկ

ո՛չ Տիրոջ,

ո՛չ սաղայելին

եւ ոչ ալ լեզուին կենդանաբանական պարտէզին մէջ:

Չկայ թարգման մը, որ ծանօթ ըլլայ լեզուիս խաւարին,
արեւուն անտես բոցերուն խօսքին, ծիլերուն դողին,
ոչ ալ վերծանէ միշտ ինքզինք ժխտող գաղտնիքը տաղին:
Ուրեմն ինչո՞ր կեցած էք յամառ, դեռ ի՞նչ կը սպասէք,
ես պիտի չըսեմ այն՝ ինչ որ կ'ըսէ խօսքը, գոր չըսի,
ծարաւն Աստուծոյ պիտի չմեղմեմ արցունքով մանկան
եւ ձեր սեղանին պիտի չհոսիմ ջուր անմահական:

Գուցէ խեղդուիմ, դարձեալ խեղդուիմ, գալարիմ, այրիմ,
փլիմ, ձենձերիմ, սաւառնիմ, գայթիմ տենդէն իմ ներքին՝

առանց հաշիւի,

առանց կսկիծի,

առանց զոջումի,

առանց խաբկանքի

եւ նոյնիսկ առանց կէտ-նպատակի,

որովհետեւ՝

այս է բանաստեղծութիւնը,

այս է պատասխանը բոլոր հարցումներուն,

այս է հարցումը բոլոր պատասխաններուն

եւ բանաստեղծութիւն կոչուած գայլը երկնային,

որ Ադամէն ի վեր գայթակղութեան հրձուանքը կ'ապրի

ծածկագիր լեզուին վտանգաւոր լուսանցքներուն,

որուն նզովեալ նոյն կրակէն պիտի վարակուին

ցնորահար ասպետներն ալ վաղուան տրամին՝

փոխանակ որ չխեղդուած փրկուին

„ մեռնելէ՛ առաջ,

ծնելէ՛ առաջ„»:

Բայց չմեռաւ:

Ո՛չ ծնելէ առաջ եւ ոչ ալ ծնելէ ետք:

Սակայն փորձեց խօսիլ, ինքզինք պաշտպանել, առնուազն հակադարձել եւ փաստել արար աշխարհին, բայց նախ եւ առաջ ինքնիրեն, որ ինք ալ մարդ է եւ ունի իբրեւ մարդ ապրելու, ազատ ու անկախ շնչելու եւ շնչաւորելու իր մարդկային իրաւունքն ու կոչումը:

Անգամ մը եւս փորձեց, բայց դարձեալ չկրցաւ: Բառերը ցնորքի ու վասխաներ դարձան, մարեցին իրենց կանթեղները, կրկներեւոյթներ կուտակեցին աչքերուն դէմ, յիշողութեան դէմ, գալիքի ճանապարհներուն դէմ եւ ինք դարձեալ ծնաւ մահուան արգանդէն ու եղաւ սատրապը մահուկեանքի կայսրութեան:

- Յովնա՛ն, Յովնա՛ն...

Տիրոջ ձայնն էր, որ երկրորդ անգամ իրեն հետ կը խօսէր ու կ'ըսէր. «Ե՛լ, Նինուէ մեծ քաղաքը գնա՛, ու քարոզէ անոր բնակիչներուն այն քարոզը, զոր ես քեզի կը խօսիմ»: Ելաւ ակամայ, ելաւ խոր երկիւղածութեամբ եւ Տիրոջ խօսքին համաձայն Նինուէ գնաց: Իսկ Նինուէն խիստ մեծ քաղաք մըն էր՝ երեք օրուան ճամբու հեռաւորութեամբ: Մտաւ քաղաք, Աստուծոյ պատուհասը ազդարարող մարգարէին խստութեամբ մտաւ Նինուէ, ու մէկ օրուան ճամբան կտրելով՝ քարոզեց եւ ըսաւ. «Դեռ քառասուն օր կայ, քառասուն օր ունիք միայն եւ քառասուն օր ետք Նինուէն պիտի կործանի»:

Եւ նինուէցիները, Աստուծոյ հաւատալով՝ ծոմապահութիւն ըրին, ծոմապահութիւն քարոզեցին, զղջացին, ներում ու թողութիւն խնդրեցին եւ քուրճ հագան:

Եւ երբ լուրը Նինուէի թագաւորին հասաւ, ընդոստ ելաւ իր գահէն, պատմութեան հանց վրայէն, մէկդի չպրտեց, քուրճ հագաւ, մոխրի վրայ նստեցաւ, ճիշդ իր հօր դամբարանին կողքին, հրաշամանուկ գահաժառանգին դժբախտ ճակատագիրը ողբաց եօթը սեւազգեստ եղբրամայրերուն հետ, ծերացաւ վայրկենապէս, չունչը սառեցաւ կոկորդին մէջ, երկինքը խաւարեցաւ գլխուն վերեւ, ծունկերը կ'թոտեցան, մունետիկը իր քովը կանչեց եւ իր ու իր մեծամեծներուն հրամանով հագիւ հագ յաջողեցաւ պատուիրել՝ ըսելով. «Մարդ ու անասուն, արջառ ու ոչխար թող բան մը չուտեն, չարածին ու ջուր չխմեն. եւ մարդիկ ու անասուններ թող քուրճ հագնին, իրենց բոլոր ուժով Աստուծոյ աղաղակեն, եւ ամէն մարդ իր չար ճամբայէն ու իր ձեռքերուն մէջ եղած անիրաւութենէն դառնայ: Ո՞վ գիտէ, Աստուած թերեւս զղջայ, հրաժարի իր սատիկ բարկութենէն, գթայ մեզի ու չկորսուինք: Թերեւս փրկուինք, ո՛վ գիտէ...»:

Եւ Աստուած երբ անոնց գործերը տեսաւ, երբ տեսաւ, որ իրենց չար ճամբաներէն դարձան, զղջաց այն չարիքին համար, որով նինուէցիները սաստած էր, եւ զայն չըրաւ:

Յովնան խիստ նեղուեցաւ, ինքզինք վիրաւորուած ու խաբուած զգաց: Արդեօք Աստուած ալ զինք կը ծաղրէր, Ա՞ն ալ իր վրայ կը խնդար: Չկրցաւ եզրակացնել, բայց քանի որ խիստ սրտնեղած էր, ծնրադրեց եւ դժգոհ ու վիրաւորուած քահանայի մը պէս աղօթեց.

«Ո՛վ Տէր, երբ ես դեռ երկիրն էի, իմ խօսքս այս չէ՞ր: Ասոր համար նախ փորձեցի Թարսիս փախչիլ, քանզի գիտէի, որ Դուն ողորմած, գթած, երկայնամիտ

ու բազմողորմ Աստուած ես, կը ներես ու չարիքներուն համար կը զղջաս: Եւ հիմա, ո՛վ Տէր, ա՛ռ իմ հոգիս, քանզի լաւ է մեռնիլ, քան ապրիլ»:

Եւ երբ Տէրը լսեց իր մեղապարտ որդիին աղօթքը, ըսաւ. «Արդարեւ, չա՞տ տխուր ես...»:

Տխուր էր մերձ ի մահ, բայց չպատասխանեց:

Յովնան դուրս ելաւ քաղաքին մայր դուռէն: Անցաւ պարիսպէն անդին, իր դժգոհութիւնն ու նեղսրտութիւնը, յուսախաբութիւնն ու սպասումը, հաւատքն ու աղօթքը, կարօտն ու սէրը իրեն համար տաղաւար չինեց, նստեցաւ հովանիին տակ եւ սպասեց, որպէսզի տեսնէ, թէ ի՛նչ պիտի ըլլայ քաղաքին: Զղջումներու եւ ուրացումներու, կասկածներու եւ հարցադրումներու խոժոռ արեւուն տակ օր ու օրեր սպասեց, կարծես կեանք մը սպասեց, մինչեւ որ Աստուած դժմենի մը հրամայեց, եւ դժմենին յայտնուեցաւ Յովնանի գլխուն վերեւ, որպէսզի հովանի ըլլայ, զինք պաշտպանէ եւ փրկէ իր տառապանքէն: Եւ Յովնան չատ ուրախացաւ ու շնորհակալութիւն յայտնեց:

Հետեւեալ օրը, երբ արեւը տակաւին կը յօրանջէր, երբ Յովնան դեռ չէր արթնցած իր երկնային թմբիրէն, Աստուած հրամայեց որդի մը, որ հարուածէ դժմենին: Որդը հնազանդեցաւ, զարկաւ դժմենիին, որ անմիջապէս չորցաւ: Յետոյ, երբ արեւը սկսած էր երկինքն ու երկիրը գրաւել, այս անգամ Աստուած խորշակաբեր արեւելեան հովի մը հրամայեց, եւ արեւը Յովնանի գլխուն զարկաւ, այնպէս որ ան մարեցաւ ու իր մահը ցանկալով՝ ըսաւ. «Նախընտրելի է մեռնիլ, քան ապրիլ»:

Եւ Աստուած Յովնանի ըսաւ. «Արդարեւ դժմենիին համար այսքա՞ն վշտացած ես»: Երկար չմտածեց: Եւ երբ շրթները շարժեցան ու բառերը դուրս թռան իրենց վանդակէն, զարմացաւ, թէ ինչպէս համարձակեցաւ պատասխանել. «Մեռնելու չափ տրտմած եմ»:

Այն ատեն Տէրը ըսաւ.

«Դուն դժմենիին խնայեցիր, որուն համար երբեք չաշխատեցար եւ զայն չսնուցիր, որ մէկ գիշերուան մէջ բուսաւ ու նոյն գիշերուան մէջ կորսուեցաւ: Ու ես Նինոէ մեծ քաղաքի՞ն պիտի չխնայեմ, ուր հարիւր քսան հազարէն աւելի մարդիկ կան, որոնք ձեռքին աջ ու ձախը տակաւին զանազանել չեն գիտեր, եւ՝ բազմաթիւ անասուններ»:

Ա՛լ պարտուած էր: Զկրցաւ հակադարձել: Զղջաց: Զղջումին թմրութիւնը յաջորդեց եւ յանձնուեցաւ փրկարար քունին:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Պէյրուիթ

Հրացան չալկածի եւ զինուորականի իր տեսքը, փողոցներէն հանդիսաւոր անցքը, ամրափակ բնակարանին դուռը բանալու եւ փակելու շարժումներ առասպելական հերոսի սանկ՝ գաղտնի-անբացատրելի



հմայք մը կը սերմանէ մեր՝ վարի թաղի դպրոցական աշակերտներու սրտին մէջ, որ այդ պահուն կ'ուղղուինք դէպի վարի թաղի մեր տուները:

Ամէնօրեայ իր որսորդութեան ընթացքին քանի՞ թռչուն կամ նապաստակ որսացած է ան, մարդ չի գիտեր, բայց Բերիոյ մէջ որսացած է հոմանուհի մը, որ հարեմի կիներուն պէս կալանուած կ'ապրի իր բարձր պատերով պաշտպանուած բնակարանին մէջ:

Կարկեմիշի կիները, որոնք ամառը, դռներու առջեւ ցած աթոռակներու վրայ նստած՝ կը սիրեն փսփոսլ տուններու մէջ թաւալող գաղտնածածուկ յարաբերութիւններու մասին, Մաթոս Եաղուպի սիրուհիին մասին կը պատմեն զարմանալի եղելութիւններ, նախանձի եւ ատելութեան զսպուած խանդ մը կը պսպղայ անոնց չրթներու կծկումին մէջ, երբ հիացումով կը խօսին անծանօթ էգի բազում շնորհներուն մասին, Մաթոս Եաղուպի պէս չոր մարդ մը կախարդած ըլլալու մարմնական ծեփեքումներուն մասին:

Ի՛նչ զգլխիչ հրապոյրներ ունի բերիացի գեղուհին...

Ինչպէ՛ս կը գրկընդխառնուի Կարկեմիշի իր որսին հետ...

Խեղճ Մաթոս Եաղուպ, ինչպէ՞ս չիյնար այդ քածի ճանկերուն մէջ...

Մաթոս Եաղուպի տունը կը գտնուի դպրոցի մեր ճամբուն վրայ, ուրկէ մենք ամէն օր կ'անցնինք, Պարսամեան եղբայրներու եւ Ապտը Ազիզի պարտէզներուն մէջտեղը: Փողոցի վրայ բացուող պատուհան չունի, եւ հոն տիրող լուսթիւնը աւելի կը շեշտէ մեր վախվխուն երեւակայութիւնը՝ տան ներսերը, վարագոյրներու ետեւ թաքնուած իր հոմանիին սպասող գեղուհիին մասին...

Ըսել է՝ Մաթոս Եաղուպ դրացի է մեզի, ու ես կը վերյիշեմ այդ օրը, երբ մօրս եւ քանի մը դրացուհիներու հետ գտնուեցայ իր բնակարանին մէջ:

Դէմ-դիմաց երկու սենեակներ, որոնք իրարմէ կը զատուին դէպի բակը բացուող միջնասրահով մը, գորգապատ, կոկիկ ու մաքուր, ասեղնազարդուած բարձիկներ, բարձիկներ՝ ամէն կողմ, հաճոյանալու եւ ձանձրանալու ծանր, գրեթէ անշնչելի բոյր մը կը յորդի մթնոլորտի մէջ:

Ընդարձակ բակ մը եւ ամայութիւն:

Կարկեմիշի գրեթէ բոլոր բակերը, որքան ալ անշուք ըլլան ու փոքր, բայց անպայման ունին նռնենի մը, քանի մը վարդենիներ, պուտ մը կանաչ՝ անկիւն մը, կաւէ սափորներու մէջ ծլած անուշահոտ ուսհան, բակին մէկ մասը ծածկող արիշ, որուն շուքին տակ, ամառը, հաճելի է յետմիջօրէի քուն մը քաշել կամ ընկողմանած երազել...: Իսկ այստեղ, այս բակը՝ իր յուսահատական մերկութեամբ միակնութեան զգացում մը կը պլլէ հոգիիդ: Միակ շարժուն բանը որ կայ կին մըն է՝ վարդագոյն այտերով եւ հասունցած լոյիկի նման գունատ ու կլոր, որ տարտամօրէն կը ժպտի եւ կարծես ամօթահար՝ կը խօսի այցելու հիւրերու հետ: Չի խօսիր, կը պատասխանէ միայն, ատ ալ՝ գէշ հայերէնով եւ կաղն ի կաղ թրքերէնով: Իսկ գիւղաքաղաքի մարդիկը տարբեր լեզու խօսողներուն կը նային հիացական, բայց անհաշտ աչքերով: Հիւրընկալուհին հագած է մանիշակագոյն ծաղկաւոր հագուստ, եւ մազերը արձակ ձգուած են ուսերուն վրայ: Երբ ոտքի կ'ելլէ սպասարկելու համար սուրճը, բոլոր աչքերը կը յարձակին իր մարմնին վրայ, վերէն վար, ցատկուտելով ծի-

ծերէն մինչեւ ոսկիներով ողողուած դաստակները, ապա զիստերէն մինչեւ ոսկեգոյն մագերը, խողոված յօնքերը: Դէպի խոհանոց իր անցքը կը ծփայ անուշահոտութիւններու ալիքի մը մէջ:

Մինչ դրացուհիները սուրճը կը խմեն, տանտիրուհին կանաչ ընկոյզով պատրաստուած անուշեղէն մը կ'երկարէ ինծի.

- Զի՛ ամէնալ, ուտել,- կ'ըսէ շոյելով մագերս...

Մաթոս Եաղուպի հոմանուհին է՝ Ատէլա. ան չի նմանիր մեր թաղի կիներէն ոեւէ մէկուն, ո՛չ պարտիզպան Օհաննէսի կնոջ՝ Սողոյին, որ ցամաք ու անգարդ, մացառի պէս կը տնկուի յաճախ պղպեղի ու սմբուկի տունկերուն մէջտեղ, ո՛չ կօշկակար Մինասի կնոջ՝ Տէլը Մարիամին, որ դրան արանքէն սոսկալի անէծքներ կը սրսկէ փողոցի լակոտներուն վրայ, եւ ո՛չ ալ ջաղացպան Ապու Վահիտի սեւ լաշակներու ետին պահուլարող նագելի աղջիկներուն, որոնք այնքան ցանկալի զգայնութիւններ կ'առթեն իրենց շուրջ:

Ուրիշ է Մաթոս Եաղուպի հոմանուհին:

Կ'երեւի այդ ուրիշութիւնն է պատճառը, որ գիւղաքաղաքի կիները չեն ներեր եւ Մաթոս Եաղուպին, եւ անոր սիրուհիին:

Ատէլա չի նմանիր մանաւանդ կլայագործ Նշանի քրոջ՝ Սառային:

Տարիներ առաջ, երբ Մաթոս Եաղուպ կը վերադառնար որսորդական իր թափառումէն, փողոցներէն կ'անցնէր երկփողանի հրացանը ուսէն կախած եւ դէմքին վրայ գոհունակութեան մեղմ ճառագայթ մը՝ ձեռքին որսացուած փունջ մը ճնճողկներ ըլլայ կամ ոչ: Մեղքը չառնենք Մաթոս Եաղուպին. ամէն մարդ, որ միայնակ կ'անցնի փողոցէն, անպայման կը մտածէ, որ իր անցքն ու շարժումները դիտողներ կ'ըլլան ասդին ու անդին, եւ այդ դիտողները անպայման կը հիանան իր վրայ: Անպայման գովասանական մտածումներ կ'ունենան իր մասին՝ հասակին, հագուածքին, պէխին ու մօրուքին:

Մաթոս Եաղուպ չըջակայ սարերէն Կարկեմիշ կը մտնէր հայոց եկեղեցիին առջեւէն, կտրելով հայերու եւ արաբներու գերեզմանոցները իրարմէ զատող նրբուղին: Իր մոտքը կը տեսնեն ժամկոչ Մարգարը, որ այդ պահուն կը բարձրանայ եկեղեցոյ տանիքը՝ հնէցելու համար երեկոյեան ժամերգութեան հրաւէր-զանգը, փողոցին մէջ վազվուտող տղաները եւ լուացարարուհի Սիրանուշ: Բայց Մաթոս Եաղուպ սրտատրոփ կը նայի դիմացի պատուհանին, որուն վարագոյրին ետեւէն իրեն կը նային գոյգ մը տաքնապահար աչքեր:

Սառան է, կլայագործ Նշանի քոյրը, որ իր եղբօր՝ կլայագործ Նշանի եւ մօրը հետ կը բնակի եկեղեցոյ մերձակայ տան մէջ:

Առաջին օրը, Մաթոս Եաղուպին այնպէս թուեցաւ, որ այդ աչքերը ըսելիք մը ունին իրեն, աւելի ճիշդ՝ խոստում մը, տաք, սպասուած ու ցանկալի մտերմութեան մը ակնկալութիւնը, որ զարկաւ ուղղակի սրտին, ինչպէս ճնճողկին կը զարնէ երկփողանիէն արձակուած գնդիկը: Եւ սրտնեղութիւն մը ինկաւ Մաթոս Եաղուպի սրտին մէջ, տեսակ մը անհամբերութիւն, տեսակ մը այլայլութիւն, եւ այդ անորոշ զգայնութիւններու խառնուրդը կրկնուեցաւ ամէն օր, աճեցաւ ու յորդեցաւ, ամէն անգամ որ Մաթոս Եաղուպ անցաւ կլայագործ Նշանի տունին առջեւէն, եւ Սառան պատուհանի վարագոյրին



արանքէն իր կանաչ աչքերով նետահարեց իր սիրտը: Դուք թերեւս սէր կ'ըսէք
այսպիսի հոգեվիճակի մը, կամ թերեւս սիրահարութի՞ւն: Ինչ որ կ'ուզէք:

Բայց Մաթոս Եաղուպ չգիմացաւ:

Թուղթ մը գրեց, փաթեց փոքր քարի մը եւ գիշեր մը նետեց կլայագործ
Նշանի բակը: Թուղթին մէջ միայն մէկ տող կար, եւ դուք կրնաք երեւակա-
յել, որ այդ տողը կը խտացնէր Մաթոս Եաղուպի ամբողջ էութիւնը, ցաւը եւ
երազը, կարօտն ու արական կիրքը: Դուք թերեւս սէր կ'ըսէք ասոր, կամ թե-
րեւս սիրահարութի՞ւն: Ինչ որ կ'ուզէք:

Յաջորդ օր, երբ Մաթոս Եաղուպ հագար երանութիւն սրտին մէջ մօտե-
ցաւ խոստումնալի պատուհանին, գիմացը ելաւ կլայագործ Նշանը.

- Հոս նայիր, ծօ՛, բէգէվէնկ, ըսաւ Նշան, բռնելով Մաթոս Եաղուպի կոկոր-
դէն, էլին աղջիկը անտէր թռչո՞ւն կը կարծես կոր... գնա՛ ատ թուղթը... (չա-
րունակութիւնը չի գրուիր, բայց կը հասկցուիր)...

Սոսկալի կատղած էր կլայագործ Նշան, իսկ Մաթոս Եաղուպը՝ գրեթէ
չքացած այս աշխարհէն:

Դուռ դրացի մէջ մտան, իսկ եկեղեցիին մերձակայքը պատահած միջադէ-
պը հովի պէս սփռուեցաւ ամբողջ Կարկեմիշի երդիքներուն վրայ:

Կարկեմիշի համար՝ աններելի արարք մը գործած էր Մաթոս Եաղուպ,
մտածելով որ սէրը, իսկական սէրը, հարազատ եւ բուխ սէրը կարելի է ար-
տայայտել բռնելով կամ թուղթի վրայ գրուած տողով մը քարի փաթեթով:

Մաթոս Եաղուպ չէր կրնար ապրիլ Կարկեմիշի մէջ: Գնաց Բերիա եւ քանի
մը տարի ետք վերադարձաւ հասունցած լոյիկի նման գունտ ու կըր Ատէլա-
յին հետ:

Կլայագործ Նշանի քոյրը՝ Սառա, տակաւին պատուհանին ետեւէն կը նա-
յի՝ իր կանաչ աչքերուն տազնապալի սպասումով:

Վերի թաղ չհասած, ես կը տեսնեմ նաեւ ալեհեր Եաղուպ Եաղուպեանը,
ճիշդ այն գիշերը, երբ ծալապատիկ նստաւ կիսամութ սենեակին մէջտեղը,
գորգին վրայ: Իր քով նստան մեր գիւղաքաղաքի յաւիտենական ուսուցիչը՝
տիրադէմ պըն. Յարութիւնը եւ գիւղաքաղաքի մեծամեծներէն Ներսէս
Թաշճեանը, որ սենեակին մէջ թիմուած լաճերուն նայեցաւ մտահոգ ու
ցատկոտող աչքերով՝ ինչպէս կ'ընէ իր ոչխարները համրող հովիւ մը: Ծերու-
նի Եաղուպեան այդ գիշեր պատմեց Հրայր Դժոխք անունով տղու մը մասին,
որ կ'ուզէր տեսնել հայրենի ազատ երդիք մը, բայց նոյն տենչին բոցերուն
մէջ, չես գիտեր ի՞նչ խենթութեամբ ողջակիզուեցաւ առանց տեսնելու:

Հանդարտ, հայրական ձայնով խօսեցաւ Եաղուպ Եաղուպեան: Իր գիւղա-
ցի ունկնդիր պատանիները շփոթահար էին, եւ Հրայր Դժոխքի պատմու-
թիւնը լսեցին տրամուլթեամբ: Անկատար մնացած երազ մը կար հեռուն, բայց
նաեւ շատ մօտ՝ սենեակին մէջ թեւածող սիրտերու մէջ, որ տեսակ մը ախոր-
ժալի ցաւ կը պատճառէր բոլորին: Մտքի տեսակ մը բռնկում:

Տրտում էր ինքն ալ՝ ծերունի Եաղուպ Եաղուպեան, որ կորաքամակ
նստած՝ երբեք չնայեցաւ գիմացի ունկնդիր հօտին: Կը խօսէր աչքերը միշտ
գետին յառելով:

Այդ պահուն, Եաղուպ Եաղուպեան թերեւս կը մտածէր բանտարկեալ իր

զաւկին՝ Լեւոնի մասին, որ ֆուլթայոլի մեր մարզիչն էր:

Բարձրահասակ, տափակ քիթով, խստաշունչ եւ յարաշարժ երիտասարդ մըն էր ֆուլթայոլի մեր մարզիչը, որ շուտով հեռացաւ Կարկեմիշէն, հաստատուելու համար հեռաւոր քաղաք մը, ուր ինկաւ սիրային թակարդի մը մէջ եւ շունչը առաւ բանտի մէջ:

Վերի թաղի դրացիներէն Մաթոս Եաղուպէն վերջ, հիմա Լեւոնը եւս կը հանդիպէր սիրոյ անդիմադրելի հրապոյրին ու կը տուայտէր անոր սարդոստայնին մէջ, ինչպէս պատահեցաւ Թաթօ Յակոբին, սկստակաւ փոխամբապետ Սերգոյին, մեր դրացուհի Վիոլէթին, ատաղձագործ Աւէին, Տոտուի աղջիկ՝ Մարոյին, դերձակ Ներսէսին ... ո՞ր մէկը յիշեմ...

Բայց ի՞նչ ընես: Սէրը հացի պէս սնունդ է, եթէ չըլլայ ու պակսի՝ կը սուսդիս անթոթութենէ, եթէ չատ ըլլայ ու աւելնայ՝ կը չորնայ ու կը մզլուտի:

Սէրը, որուն խայծէն կը բռնուի գրեթէ ամէն մարդ, անձրեւի պէս երկերես է կամ բազմերես ... եթէ տեղայ՝ աշխարհի մէջ կեանք ու զարուն կ'ըլլայ, մարդոց միջեւ՝ զարդ ու զուարթութիւն, եթէ չըլլայ, չտեղայ կամ չքանայ՝ անբնական կ'ըլլայ երկիրը, արտերն ու պարտէզները չեն ծաղկիր, ծառերն ու որթատունկերը բերք չեն տար, դաշտերը չեն պճնուիր ծիլով ու ծաղիկով եւ այսպէս բազում չարաշուք պատահարներ: Եթէ քիչ գայ ու սակաւ՝ չի բաւեր հողերը ծածկելու համար ոսկեգոյն անդամստաններով, իսկ եթէ չատ գայ, տեղատարափ կ'ըլլայ եւ ողողում՝ կը վերածուի աղէտի եւ սպառնալիքի, կրնայ արմատախիլ ընել բարեբեր տունկեր ու ծառեր, տապալել կամուրջներ ու պարխապներ, խեղդամահ ընել մարդիկ, տրորել բնակարաններ ու թումբեր...

Մեր մարզիչ Լեւոնը կ'երեւի բռնուեցաւ այս վերջին տեսակի անձրեւին, ինչպէս իրմէ առաջ կամ իրմէ ետք բռնուեցան միւսները ... ո՞վ գիտէ թերեւս չատ ուրիշներ ալ՝ Կարկեմիշէն, կամ Բերիայէն, կամ աշխարհի որեւէ անկիւնէն: Սէրն ու անձրեւը խտրութիւն չունին, խորք ու խոտոր չեն փնտռեր, սեւ ու ճերմակ չեն ըսեր, կու գան ու կու գան, ամէն տեղ են ու ամէն կողմ, դուն ուզես կամ չուզես...

... Եւ կամ ալ չեն գար, ուզես կամ չուզես:

Վերի թաղի ճամբուն վրայ, աղբիւրին անմիջապէս քովիկը, տանտիրոջ մը բաւարարութեամբ բազմած է Կարկեմիշի միակ մզկիթը՝ մէջքին չալկած թզուկ մինարէթ մը, լայն ու կանաչ դուռով, որուն փայտեայ երկու փեղկերը այնպէս կը բանին, որ կարծես բուրդ հիւսող կնոջ մը ձեռքերն են, յարատեւօրէն աշխատունակ ու շարժուն:

Մինարէթը, աղբիւրը եւ կանաչ դուռը միասնաբար, Աստուծոյ իւրաքանչիւր օրը եւ օրը հինգ անգամ, առանց տնտնալու կը կազմակերպեն կեանքի խաղաղ ծիսակատարութիւն մը, անխախտ եւ անփոփոխելի հերթով.՝ Օրուան մէջ հինգ անգամ, Հաճի Ապտըլ Ռահման կը բարձրանայ մինարէթին գագաթը եւ բոլորակի դառնալով անոր նեղլիկ պատշգամին մէջ, պաշտամունքի կը հրաւիրէ արաբ հաւատացեալները, այնպիսի քաղցր ու հնչեղ ձայնով, փո-

խանցիկ աղապատանքով, որ ոչ-մասնատականներն իսկ կը համակուրն երկիւղածութեամբ: Յետոյ արաբ մարդիկը կ'իջնեն աղբիւրի եօթը աստիճաններէն, կը լուան իրենց հինգ զգայարանքները եւ ներս կը մտնեն մզկիթի կանաչ դուռէն, խոնարհամած աղօթելու համար Աստուծոյ եւ անոր մարգարէին:

Մզկիթը կը ձեւաւորէ այս բոլորին աղօթասացութիւնը: Այսինքն՝ հոսմբուրդը կը վերածէ կեանքի օգտագործելի դերձանի:

Եթէ արեւամուտ չէ, դուռն կրնաս հանդարտօրէն անցնիլ մզկիթին առջեւէն, եւ երբ հասնիս Պարսամեան եղբայրներու ծիրանիներուն, ճիշդ դիմացը սպիտակ ներկուած տուն մը կայ, բարձր դիրքով, փոքր, շատ փոքր ու փակ պատուհաններով: Սա ուր է, ճերմակ սաւաններու մէջ փաթթուած հիւանդներ կ'ըլլան, ճիշդ այդպէս, սպիտակ այդ տունը կը հանգչի կարծես, մռայլ ու լքեալ:

Քանի ամառ չէ, ո՛չ ձայն կայ հոն, եւ ոչ ալ՝ շարժում:

Ձայնը միայն աղբիւրի չորս ակերէն բխող պաղորակ ջուրին խշշոցն է, որ միօրինակ բայց մտերմիկ կը հնչէ գիշեր-ցերեկ, եւ մզկիթ մտնող-ելող հաւատացեալներու հռնդիւնը, եթէ յանկարծ, տեղատարափ կարկուտի պէս միջոցը չխանգարեն Պարսամեան եղբայրներու եւ իրենց քրոջ՝ Իսկուհիի, պոռչըտուքներն ու գզուրտուքները, հայհոյանքները:

Սպիտակ տունը Եոթմուրթաճեան ընտանիքին է:

Տուն ըսելը թերեւս չափազանցութիւն է այդ շինութեան, որովհետեւ Եոթմուրթաճեան ընտանիքը չի բնակիր հոն: Տարուան մէջ միայն մէկ ամիս Բերիայէն կու գայ Սոֆիա Խանըմը, շրջապատուած քանի մը սպասուհիներով, եւ ափ մը ճռուղով մանուկներով, կը հաստատուի այդ ամրոցին մէջ եւ կը դեկավարէ ձմեռնային պաշարի հեւքոտ արշաւանքը՝ կարմիր պղպեղի եւ լոլիկի պէքմէզ, միջուկը փորուած եւ չորցուած սմբուկ, կարասներու մէջ կոխուած ճերմակ պանիր, լաթէ տոպրակիկներու մէջ փաթթուած ապուխտի եւ երշիկի շերտեր, տանիքը արեւի տակ չորցուած կտատուկ, անուշահոտ անանուխ եւ կանաչ լուբիա, եւայլն, եւայլն: Սոֆիա Խանըմը չի մոռնար անշուշտ ձաւարի տեսակները, հերիսայի յատուկ ծեծածը, ոսպն ու սիսեռը եւ ձմեռնային քաղցրաւենիները՝ պաստեղ, թուզ ու համիչ, խաղողի հիւթով եւ ընկոյզով խմորուած անուշեղէններ, Եփրատի աւազներուն վրայ աճող հոտաւէտ սեխ, որ լաթի մէջ փաթթելով կը կախեն զովասուն մարանի առաստաղէն, տակաւին հազար տեսակ ուրիշ համեմունքներ, այլ մարդոց քիմքին եւ օղիին ախորժելի հրաշալիքներ, որոնց գաղտնիքը Խանըմը գիտէ միայն:

Եոթմուրթաճեան ընտանիքէն՝ ես կ'ուզէի, որ ամէն մարդ ծանօթանայ Տիգրան Եոթմուրթաճեանին՝ սեւ ձիթապտուղի պէս պճլտուն աչքերով, բարակ պեխով ու դալկահար դէմքով տղայ մը, որ բեռնակառքի շարժավար է, աւելի ճիշդ՝ շարժավարի օգնական, շատախօս ու պոռչտուն: Ան օր ընդ մէջ, Բերիայէն Կարկեմիշ կը բերէ մեծ քաղաքներու հմայիչ հէքեաթները ու կը թիւմէ մեր ալեկոծ սիրտերուն մէջ: Բայց ատիկա չէ Տիգրան Եոթմուրթաճեանի բուն առաքելութիւնը: Ան մեր Փութպոլի խումբին բերդապահն է, անոր՝ միաժամանակ, ոստումի եւ անկումի կերտիչը, այսինքն՝ այն շարքայինը, որ մրցումներու մէջ յաղթանակի կամ պարտութեան առաջին հերոսն է կամ

ՃՍԴԿԱԳ
«Ճկյոտայ՛»



վերջին նահատակը:

Մեր ֆոլթպոլի խումբին, մարզիչ Լեւոնի սիրոյ թատերախաղին եւ Տիգրան Եռ-մուրթաճեանի մասին ես կ'ուզեմ խօսիլ տակաւին, ինչպէս կ'ուզէի խօսիլ վերի թաղեցի ուրիշ դրացիներու մասին, Շահապ Տիգրա՞նը ըսես, վանեցի Դաշնակ Օհաննէ՞սը, թէ Նազըլ Չառուշը, Եահուտի Եահո՞ն, թէ ատաղճագործ Աւէի եղբայր Մանուկը, կլայա-գործ Պողո՞ն, թէ բեռնակիր Հոպոն, միւսները, միւսները...

Բայց ես հիմա կ'աճապարեմ հասնելու համար կառապան Սեդոյի ամէնօրեայ կերու-խումբին, որ գիշեր մը վերածուեցաւ արիւնալի առեղծուածի:

ՊԵՏՐՈՍ ՀԱՃԵԱՆ
Արժանթին

Յ Ր Ի Վ Է Յ

Հատուած՝ անտիպ վէպէն

ՅՐԻՎԷՅ 7

ՄՂԶԱԻԱՆՁ

Ծրագրուածին հիմամբ, առաւօտեան չորսի ատենները արթնցաւ ան: Արդէն նախորդ գիշեր ստացած թերթերուն բաժանորդագիրները ուղարկած էր քրետի քարտերուն հաշիւները փակած: Ունեցած-չունեցածը տղոց անունին անցուցած: Իսկ իր գանձեւիքները թող պարտապաններուն մամային կաթին պէս հալալ էին: Մենամարտ ու թէժ կռիւ էր: Ոչ ոք չէր կրնար նախատեսել ելքը: Թող որ վաղը կարգ մը աժան-կարապետ խմբագիրներ ետեւէն չբամբասէին թէ մեռնիլ ու Ֆրիվէյին հետ չափուիլ մը կար, գոնէ բաժանորդագիրն վճարէր ու հայ թերթին ապագայ գոյութիւնը ապահովէր...: Ամիսներով տքնած, գլուխը հազար քարի զարկած էր, թէ Ֆրիվէյին ինչպէս մահացու հարուածը պիտի հասցնէր, ինչպէս պիտի զգեսնէր: Եթէ ինք նախադարձակ չդառնար ու քանդուամը չսկսէր, փոխարէնը վիշապը գինք կուլ պիտի տար, վիշապը գինք չարքէն հանէր, ծունկի պիտի բերէր: Արչակունիներն ու միւսները, ամբողջ մարդկութիւնը կուլ պիտի երթային վիշապի անյագ ախորժակին: Եթէ հայը չծառանար ու չքանդէր չարիքի կայսրութիւնը, ինչպէս նախահայր Հայկը Բեյի ամբարտաւանութեան դէմ ծառացաւ, ամբողջ հասարակութիւնը զոհ պիտի երթար վիշապ արքային անյագ ախորժակին: Եթէ ինք չըլլար հրապարակ իջնող այլախոհ, ոչ ոք պիտի յանձն առնէր այդպիսի խելառ ու անտրամաբանական անձնասպանական քայլ մը:

Անմիջական դրացնութեան մէջ բանող հոլիվուտեան շրջանակներու մօտ, Ֆիլմի դիպաշար մը տասը դիմագիծ կը փոխէր մինչեւ որ հրէական դրամագլուխի օրհնութեամբ եւ ինչու ոչ ընտրեալ ցեղին օգնութեամբ, քաջութիւնը հաւաքէր երկչոտ նայուածք մը նետելու սպիտակ պաստառի ուղղութեամբ:

Ինք ալ իր կարգին, հազար կտոր ըլլալէ եւ գլուխը Փրիվէյի կրողիւսեայ պատին բիւր անգամ զարնելէ ետք, հասած էր վերջնական իր որոշման՝ խորհրդանշական իր աքտի գործադրման:

Գաղտնօրէն կազմեց Փրիվէյի յատակագիծը ու մութին մէջէն չափեց չափ-չափեց խրոխտօրէն բարձրացող անոր պերճաշուք սիւներուն տրամագիծը: Սա այն վայրն էր, ուր տարիներ առաջ, մանչը քսուրտուելով Փրիվէյի սիւներուն, իր անդրանիկ խիզախումը անոր դէմ առանց քերծուկի գլուխ հանած էր: Այդ օր Արչի սրտի իր առաջին տազնապը անցուց: Եւ Փրիվէյի այդ ելքը, բնական էր որ խորհրդանշական իմաստ զգենուր հայուն ենթագիտակիցին մէջ: Այդ շրջագիծէն կը սկսէին իր բերկրանքն ու երկարաձգուող անհաշուելի տառապանքները, անդոհը, ցաւն ու հիասթափութիւնը:

Միամիտ չէր Արչի, իր բոլոր դժբախտութիւնները անհոգի Փրիվէյի վերագրելու եւ անոր ուսերուն բարձելու: Իր մէջ քարացած ըմբոստն էր որ պիտի կակուղնար, տարրալուծուէր քաղցրահամ անգոյն, թափանցիկ հիւթ դառնար, համպըրկըրով, շերտ մը փիցցայով, հաթ-տոկով, սուշիով, քոքա-քոլայով, փոռնոյով ու միասեռական անկաշկանդ ապրելաձեւով հարբելու: Ամէն ըոպէ իրմէ ալնկալուածը, ամէն ըոպէ իրեն պարտադրուածը, ամէն քայլափոխին, ազգայինը ոչինչ, մարդկայինը գոհել էր, իրաւախոհութեան գալ: Տակաւին կը յիշէր չորրորդ սերունդ ամերիկահայը իր թմբիրէն արթնցնելու փորձերը:

- «Listen my friend, այս երկիրը անբարոյ կերպով եւ անխղճօրէն դրամ վաստկելու միջավայր է: Իտէալ հասարակութիւն հիմնելու քու հնամաշ գաղափարներդ, տակաւին՝ հոսանքին դէմ թիավարելու ճիգերդ, լաւագոյն պարագային կը մաշեցնեն մարդս ու չսպասուած սրտի տազնապով մը, կանխահաս, ժամանակէն առաջ ոտքերդ տնկել կու տան...»:

Որքան ալ բնիկ ամերիկահայուն ըսածը ճշմարտութեան համապատասխանէր, որքան ալ անիկա անտազնապ զառանցէր, մէկ էր, Փրիվէյի, հինի քանդուումը, մէկը տեղէ մը պիտի սկսէր: Այդ ընտրեալը ստուերին մէջէն դուրս գալով անյապաղ պիտի խիզախէր:

Ինչո՞ւ տնտնալ ու պոչ խաղցնել, եւ դեռ ինչո՞ւ սա աննպատակ ձգձգումը: Առնուելիք քայլը, կատարուելիք աքտը կեդրոնացում, վճռակամութիւն կը պահանջէր:

Պատրաստ էր գործելու:

Հինցած վեց անիւներ, իրարու շղթայուած, կարծես շուրջպարի ելած ըլլալին, բոցավառող աքցանի մէջ պիտի առնէին կրողիւսով ու պողպատով ամրացուած ամեհի սիւնը:

Գիշեր մը առաջ հինցած փիքափին մէջ պիտի տեղաւորէր անիւները, ինչպէս նաեւ՝ քարիւղով լեցուն երկու քսան լիթրանոց ամանները, որոնց պարունակութիւնը անիւներու մէջ պիտի լեցնէր:

Լուսածագէն առաջ խաչ մը հանելով պիտի շարժէր դէպի նպատակակէտ: Փրիվէյի քանդուումը սկսելու համար ընդամէնը լուցկիի շիւղ մը պէտք էր:

Ծրագրուած ահաբեկչական աքտը տեղէ մը պիտի սկսէր, եւ ամենակուլ բոցերու ու մուրի, համատարած ծուխի ու վայրագ վայնասուններու ընդմէջէն հեռաւոր վայր մը անմարդաբնակ անկիւն մը, երկրագունդին անդի ծայրը, իր լրումին պիտի հասնէր:

Բոցավառ, հրաշագործ անիւներու օգնութեամբ կրողիւսեայ առաջին սիւնը հրոյ ճարակ պիտի դարձնէր ու բոցերը պիտի լափլփէին զայն: Հեռուէն դիտողները պիտի խորհէին, թէ թուցուցած էր ահաբեկիչը, վերնայարկը ճաթեցուցած էր Արչի... Կրակով փորձել կրողիւսը այրել: Անհետեւ թուացող այս խաղը անիկա հիւանդ իր երեւակայութեամբ քանիցս կրկնած, փորձարկած, մեկնաբանած էր: Առաւօտուն, շաղախուող լոյսի ցոլքերուն հետ եւ երեսին քսուող ցեղին խոնաւութիւնը շնչելով, ծրագրին առաջին մասը պիտի գործադրէր մինչեւ որ մօտակայ միայրակ տուններէն քունը փախցուցած անկիւս պառաւ մը, յօդացաւ ծամածռած մատներով, հեռաձայնի ընկալուչը վերցնէր եւ 911 սեւաթուղթ թիւերը հաւաքելով, ոստիկանութենէն շտապ օգնութիւն հայցէր:

- Այ՛, ձեր ճարպոտած յետոյքները շարժելով ալ եկէք տեսէք, թէ ի՞նչպէս միջին արեւելքցիի արտաքինով ահաբեկիչ մը Փրիվէյը կ'այրէ...,- գոչեց պառաւը:

- Ներողութիւն, ի՞նչ ըսիք, պետեալատ Փրիվէյը ի՞նչպէս կարելի է այրել,- հարց տուաւ կին ոստիկանի մը քնաթաթախ ձայնը, խելքը թուցուցած պառաւի մը հիւանդ երեւակայութեան վերագրելով «Փրիվէյը այրելու» աքտը:

Կին ոստիկանը՝

- Խնդրեմ, ձեր հասցէն եւ անուն մականունը:

- Դարձեալ կրկնեցէ՛ք...,- զգուանքով շարունակեց ան. Rusty Pellican ճաշարանին նայող Փրիվէյի սիւնն է ջահի պէս այրողը, միջին տարիքով արեւելքցիի նմանող գիժի մը կողմէ՞...: Տիկին, խնդրեմ ըսէք, արդեօք այդ բոլորը չէ՞ք երեւակայեր...

- Are you kidding? 9/11ն ալ քիթի ծակ չունեցող մեր նախագահին կատակ թուեցաւ: Հիմա իսկ պատուհանէս յստակ կը տեսնեմ բոցավառող Փրիվէյն ալ, միջին արեւելքցի ահաբեկիչին լուսաւոր դէմքն ալ...

- Լաւ, լաւ, մի՛ յուզուիք, խնդրեմ, ձեր պաղարիւնութիւնը պահեցէ՛ք, անմիջապէս ոստիկան ու հրշէջ ուժեր կը հասնին արկածի վայր...

- God bless you!

- God bless America!

- Կապը պահեցէ՛ք,- թելադրեց կին ոստիկանը: Գլուխէն ցանելով գանկը ճաթեցուցած պառաւը:

Հիւանդագին մանրամասնութեամբ, Արչի երեւակայած ու ծրագրած էր այս բոլորը: Քիչ ետք ոստիկանական մեքենայ մը, լուսարձակներն ու ահագանգ ճշոցը միացուցած, քամիքազի արագութեամբ սուրալով Կլէնտէյլի կեդրոնական պողոտաներէն հասած էր նշեալ վայրը: Հեռուէն ջահի պէս վառող Փրիվէյի սիւնը տեսնելով, ռատիոյի ներքին ցանցով, հրշէջներու կեդրոնատեղիին ուղղութեամբ ահագանգ հնչեցուց:

Մինչեւ որ իրլանտացի հրշէջները իրենց գարշահոտ, նեխած վարտիքներուն վրայէն կաշեպատ համազգեստները անցնէին, մարդակապիկի արագութեամբ հրշէջ մեքենաները մագլցէին եւ ջիղեր քայքայող ճշակներով իրենց քունէն

արթնցնէին նիրհող քաղաքին անհոգ բնակիչները, մինչ այդ ռատիո-թելեֆոնի մէջէն ծամօն ծամելու նման «մատըր ֆաքը՛ր, մատըր ֆաքը՛ր, յիմար մը ֆրիվէյը կ'այրէ կոր» կը կրկնէր հրէջներու ջոկատապետը: Անիւներու ձգախէժը, պէնզինի հետ միախառնուած, բոցերու լեզուակներով գրկած-կլանած պիտի լլլային կրողիւսեայ սիւնը:

Հրէջները կերպընկալ խողովակները միացուցին ամէն փողոցի ծայրը գետեղուած դեղնագոյն հինգ ինչնոց ծորակներուն, հարիւր ոտք հեռուէն, ջրվէժի նման ջուր արձակելու բոցավառող ֆրիվէյին ուղղութեամբ: Հեղուկի սառն հպումէն այրող կրողիւսը կը սկսէր ճարձատիլ ու փշուր փշուր թափիլ:

Սակայն, երբ հրէջները աւելի եւս մօտեցան բոցերուն, գիշերանոցներու մէջ կ'ծկուած՝ ահագանգը դեռ իրենց դիմագծերուն վրայ կրող ականատեսներու քնաթաթախ աչքերուն առջեւ, զարմանահրաշ դէպք մը պատահեցաւ: Հեթանոսական պաշտամունքի լծուած նախամարդուն, կամ Ամազոնի բնիկներուն նման, ջոկատի հրէջները, իրենց կազմածները լքած, սկսան կրակին երկրպագել, հաւաքուած խուռներամ բազմութիւնը զարմանքի եւ մասամբ մըն ալ՝ հիասթափութեան մատնելով, անոնք սկսան գետնէն հաւաքել փայլուն մետաղի կայծկլտուն կտորները, որոնք կարմիր բոցերու ցոլքերուն տակ ոսկեղրամի կը նմանէին:

Խորամանկ արեւելքցին, անիւներու քանդիչ գործունէութեան ու բոցերու լլկիչ համանուագին քիչ մը աւելի ժամանակ շահելու ու շունչ քաշել տալու համար, մետաղեայ նոր թուագրուած տոլարանոցներ ցանած էր կրակին շուրջ-բոլորը, որոնք երկինքէն մաղուած ոսկիի նման կը փալփէին:

Հին օրերուն պատահած էր որ ֆրիվէյներու երկրի տարածքին, դրամը ծառերուն վրայ բուսնէր քոքոյի հատիկներու տեսքին տակ, պարարտացնելով ինգա ցեղապետներուն քսակը: Հիմա ալ, միլիառատէրներուն պարտէզը միայն կ'աճէր ան: Նոր օրերու ֆրիվէյցին, եթէ երբեք գետինը կլոր սենթ մը նշմարէր, մէջքը երկուքի ծալելով կը հաւաքէր զայն՝ «բախտաբեր է» մրմնջելով:

Աւետեաց սա երկիրը ոտք դնելէն ի վեր, մէկ բան յստակ էր, «բախտ» կոչեցեալը շուռ գալով ճամբեգրի կոյտղիին խառնուած էր: «Բախտը» հանրապետականներու, Թեքսասի քարիւղահորերու տէրերուն եւ Սան Ֆրանսիսքոյի իգացած արուներուն բաժին ինկած էր:

Եւ անբախտներու հրէջ ջոկատը, հրդեհը մոռցած, սկսաւ հայուն ցանած մետաղեայ տոլարանոցները հաւաքել... որոնց ցոլքերը այդ պահուն հետաքրքիր բազմութեան դէմքերուն վրայ կը խաղային:

ՖՐԻՎԷՅ 8

Արչի հասած էր հոգեվիճակի մը երբ զառանցանքը սկսած էր իրականութեան հետ չփոթել: Մղձաւանջային դարձած պատկերները, երբեմն յստակ, յաճախ խառնափնթոր ու սարսափազդու, իրեն իբրեւ հաշուետու եւ ուղեցոյց, կ'ահաբեկէին գանկը:

Կը գիտակցէր անոնց քանդիչ, մոլորեցնող, ահաբեկող ու վտանգաւոր էութեան:

Թեան, սակայն միջնադար բուրգող արեւելեան ճակատագրապաշտութեամբ մը կը յամառէր, կը հաւատար, թէ ի վերուստ այդ բախտին ու առաքելութեան նախասահմանուած էր: Զկար փախուստ ճակատիդ դաջուած խարանէն: Այսօր թէ վաղը, հոս թէ այրուր, մէկը պիտի սկսէր արդէն իսկ քայքայուած, հազար կարկտանով գոյութիւն պահպանող հինի քանդուամբ: Ֆրիվէյներու տիրապետութեան, Ֆրիվէյներու բրտութեան ու կոպտութեան տակ, մարդկութիւնը չէր կրնար ներկայ ընթացքով երկար շարունակել: Տակաւին պիտի գար օրը, երբ կմախքացած ընչագուրկները երկրագունդին, ապստամբութեան պիտի դիմէին, հողատէրերու անհոգի իշխանութեան դէմ ու ասպատակէին անոնց փարթամ ճարպակալած գոյութիւնը: Եւ բախումը պիտի դառնար անխուսափելի, աղիտալի: Արեան ճապաղիքներու պատկերները պիտի սարքուէին: Երկրագունդը պիտի թաթխուէր մուգ կարմիր արեան մէջ եւ բռնկէր ինչպէս բոցավառ գունդ: Այո՛, հողատէրերու տիեզերանաւերը վերջին ոստում մը պիտի կատարէին դէպի գաղութացուած իրենց նորագոյն մոլորակները, հոն ալ շուտով, եսապաշտ նոյն դիպաշարը կրկնելու, մարդ էակը ստորնացնող նոյն դրոյթները շարունակելու...

Այդ գիշեր Արշակին քունը չտարաւ:

Նորութիւն չէր, աւելի լաւ էր անքուն մնալ քան զառանցել կանգուն մնացած սիւները այրելով, կամ ալ ամէն ինչ գոհելով, վիշապի հետ Միացեալ Ֆրիվէյներու ներկայ տիրակալին սեփական կրկէսին՝ ամփիթատրոնի՝ պորտին վրայ մենամարտիլ:

Մեծամիտ մէկը չէր Արշի. աշխատասէր, կարգապահ աստուածավախ, տուրքերը ժամանակին վճարող, կարգին մարդ ու քաղաքացի: Փորձեց մտքէն վանել Ֆրիվէյի քանդումը: Ֆրիվէյի կողքին դեռ ինչ ինչ յոռի ու անմարդկային երեւոյթներ կը գոյակցէին, որոնք կարօտ էին քանդումի, վերանորոգման ու բարեփոխման: Սակայն, շուտով այն եզրակացութեան պիտի հասնէր, թէ այս փուլին հրաժարիլ անհասանելի տենչանք, անկարելի երազանք էին, զառանցանք ու դասալքութիւն:

Նշդրակելու ու ցաւը արմատախիլ ընելու համար ամուր ձեռքեր ու ջիղեր էին հարկաւոր: Իսկ միանձնեայ յեղափոխութիւնը զոր կը պատկերացնէր, անձնուրաց, գիտակից, վեհոգի, այլասէր նուիրեալներու փաղանգով կ'իրականանար: Մորթապաշտներն ու դիւրաւ վհատողները, լաւագոյն պարագային, Ֆրիվէյի տէրերուն պիղծ ձեռքերէն ինկող փշրանքներով պիտի սնանէին, իրենց կրաւորականութեամբ յաւերժացնելով, հողատէրերու ստրկացնող, մեծամոլ իշխանութիւնը:

Երկուութեան ու անորոշութեան մատնուած, չէր կրնար որոշել առնելիք քայլը, զսպել, կուրծքին տակ խաղաղեցնել հետզհետէ թանձրացող, ուռճացող, ոռնացող փոթորիկը, հանդարտ կիրքով ու յստակ սեւեռումով պատրաստուելու գալիք օրերու բախումին: Փորձով գիտէր, գրող բարեկամներու թելադրանքն էր, թէ նման հոգեվիճակէ մը ձերբազատուելու հոգեբանական ելքը, սպիտակ թուղթին յանձնելն էր սիրտը մակընթացութեան մէջ պահող տագնապները, նիհիլիստական ծայրայեղ գաղափարներն ու ձեւաւորել հոլթեանդ մէջ ծնունդ առած քառան ու խուճապը:

Ըսուած է, որ մտածելու ատակ ամէն զգայուն մարդ՝ չկայացած գրող է:

Գիտակցելով զալիքը, զգալով առնելիք անխուսափելի քայլին ահաւորութիւնը, Ֆրիվէյը քանդուած տեսնելու իր մէջ անզուսպ դարձած մոլուցքը, գործի չընտան հանդարտ մտքով նախաձեռնեց կտակին պատրաստութեան:

Սեւագրութիւնը կարդաց թուղթին յանձնուած գրութեան, որ հակառակ ակնկալածին, բանաստեղծական շունչ ու փիլիսոփայական խորք ստացած էր:

ԿՏԱԿ

Սաւառնորդն եմ ես
Ջախջախուած տիեզերանաւուն
Որ անհունին մէջ
Կը նաւարկէր
Փնտռելով մոլորակն այն
Որուն կուրծքին տակ էին թաքնուած
Սէրերը կորսուած
Իդէներն չիրականացած
Երագները խոշտանգուած
Յոյզերը ծով
Թրթիռներ չապրուած
Ու լկուած անմեղութիւնը մեր...

Որդայինէն
Շէմբանգէի տեսքով
Հագիւ երկոտանի դարձած
Գերմարդու կիրքերը շալկած
Փնտռեցի՜նք անտառը
Փնտռեցի՜նք
Ծագման մեր քարանձաւը
Կանգ առինք յանկարծ
Ծախու հանեցինք
Խիդձը մարդկային
Վրայ տալով
Բանականութիւնը...

Անհանգոյց ու դիրին չեղան
Մոլորակէ մոլորակ
Ոստումներս անջրպետային:
Կը վախճայի որ
Օր մը յանկարծ
Աստղանաւս բախէր
Մարդկային յոռի բնագոյներով սնած
Այն ահարկու երկնաքարին
Ու մենք փշուր-փշուր
Ինչպէս բոցավառ լեզուակներ
Սուգուէինք յատակը
Ապականած ովկիանոսի:
Միբոյ փնտռտութս մնար
Զգրուած արարը
Ջրամոյն եղած մարդկութեան
Տապանաքարին...

Այդպէս ալ, Արչի համոզում գոյացուցած էր, որ եթէ էթնիք խմբաւորումներու ծոցէն ներս գործող լրտեսներու ձեռքով, Միացեալ Ֆրիվէյներու կողմէրէն ղեկավարութեան ձեռքը իյնար կտակը, վստահ էր ան, թէ նախամարդու կիրքով ժողովուրդը շահարկող ու անոնց ստրկութիւնը յաւերժացնող հողատէրերը բան պիտի չհասկնային քիչ մը վերացական իր պատգամէն: Շատ շատ իբրեւ «օտարի հաշուոյն բանող գործակալի» տեղ առնելով զինք քիչ մը քաշկըտէին, կամ ալ ինքնավստահ իրենց հաստատած հողատիրական կարգ ու սարքին ու ամրագրած վարչակարգին յաւերժութեան, գուցէ վեհանձնօրէն արհամարհէին, չտեսնել ձեւացնէին սիմպոլիզմի սիրոյն կատարուող պոչ խաղցնելու իր աքտը:

Կեանք մը ամբողջ պատմութեան աշակերտած Արչակին մտաւորական աշխարհին մէջ ալլելս յստակ դարձած էր, թէ Ֆրիվէյներու կայսրութիւնն ալ իր նախորդներուն օրինակով, մեծապետական ամբարտաւանութեամբ գինովցած, դէպի անկում ու ինքնակործանում կ'ընթանար:

Թեւերը սոթած, պիտի արագացնէր բարոյապէս անանկացած Ֆրիվէյին անկումը: Սակայն իր էութեան անհարազատ կը գտնէր նախնական մարդու կիրքով Ֆրիվէյ-վիշապին հետ մենամարտի դուրս գալը: Կրկէսի լուսարձակներէն, հանրութեան ծափերէն, մետալէն ու փառքէն կը խրտչէր: Իսկ Ֆրիվէյը հրկիզելու եւ հրոյ ճարակ դարձնելու նախամարդու կիրքով արբենալ կամ բոցավառ անիւներով շուրջպար սարքել ու հրչէջներու առջեւ արծաթագոյն տոլարանոցներ ցանել ալլելս զինք չէին հրապուրեր, չէին առինքներ...:

Սողոմոնի Տաճարի կառուցումէն ի վեր, Փարաւոններու շրջանն ալ ներառեալ, մուրճն եւ թուրը որոշակիօրէն չէին փոխուած: «Համակարգիչն ու տիեզերանաւերը չկրցան փոխել նախամարդու մեր էութիւնը, չկրցան մեզ ձերբազատել նախամարդու մեր բնագոյնէն...», կը խորհրդածէր Արչի՝ մրճահալում-մտորումներու պահուն: Անշուք, առանց փողի ու թմբուկի, առանց շեփորումի, ծիսական ջերմեռանդութեամբ լուռ ու մունջ պիտի ձեռնարկէր իր աքտին...

1982ի տիպի Nissan Picը բարձրացաւ: Աշխատցուց ճափոնական մեքենան: Խաչակնքեց՝ աջ ձեռքով հայելին կախուած Սբ. վարդարանին հպելէ ետք ճանապարհ ինկաւ: Ինք չէր ընտրած, զինք Ֆրիվէյին կապող ժամանակն ու վայրը եւ իրեն վստահուած առաքելութիւնը: Այդ նոյն սիւնը զոր գիշերային դեզերումներուն, գառանցանքին մէջ բոցավառեր էր քարիւղած անիւներու օղակով եւ այդ բոլորը՝ հոն ուր քսան տարիներ առաջ, անդրանիկ որդիին անմեղութիւնը աճուրդի հանուելով պիտի նուիրուէր Ֆրիվէյ-վիշապին:

Քարակոփ հին վարպետներու նման կաշեծածկ գոգնոց մը անցուց վիզէն ու հասակի բարձրութեամբ խաչքար փորելու նման սկսաւ կոփել կրաղիւսեայ փարթամ սիւնը:

Դրացի անկրօններէն ոչ ոք ուշադրութիւն դարձուց վաղ առաւօտեան Արչակին ցուցաբերած ժրջանութեան, զինք քաղաքապետարանի մեքսիքացի բանուոր համարելով: Հեռուէն թուրին տրուած մուրճի հարուածներուն չոր արձագանգը, դուռ-դրացի տագնապեցնելու չափ մտահոգիչ չէր թուեր: Ահաբեկչութիւն կամ ոչ, հասարակ ամերիկացին առտնին իր փոքր հոգերով ու ապրելու կիրքով տարուած էր: Պիտի ապրէր, իրեն շնորհուած օրերուն տակէն մտնել,

վրայէն ելլելով: Սատտամ Հիւսէյնի եւ Պըն Լատէնի նման սպառնացողները կը փորձէին իրենց քարայրներէն ու ապաստաններէն խանգարել Ֆրիվէյժի ամէն տարիքի բնակիչներուն եւ մասնաւորապէս՝ թոշակառուներու վերջին տարիները: Կարծէք չեչտուող տնտեսական տագնապը բաւարար չըլլար: Առողջական տագնապ, խնամակալի տագնապ: Օրն ի բուն, ու հակառակ դուրսը տիրող թիւր կարծիքին, Ֆրիվէյժի քաղաքացիներն ալ հազար ու մէկ տագնապներ կը դիմագրաւէին, մարդավայել իրենց գոյութիւնը պահելու եւ պահպանելու համար:

Երկրի ամբողջ տարածքին, լիովին բաւարարուած, լիովին ուրախ մարդու չէր հանդիպած Արչի: Հոլիվուտեան ֆիլմերու մէջ անգամ, կատարեալին հասնելու համար, տասն անգամ կը նկարահանէին նոյն տեսարանը, բնութիւնն ու գեղուհի-Աստղիկին աչքերն ու հմայող ժպիտը: Կատարելութիւն կոչուածը թեւեւ միայն մարդոց երեւակայական աշխարհին մէջ գոյացած վերացական զգացում էր...

Այո՛, իտէալ հասարակութիւն չկար, բայց ամէն ըոպէ համընկերութիւններու կողմէ «կարգադրուիլ»ն ալ հաճելի զգացում եւ զբաղում չէր, բան մը, որուն խեղճ ամերիկացին ստիպուած էր ամէն ըոպէ գիտակցաբար ենթարկուիլ: Ահա այդ զգացումը գլուխը ծակ սա հայորդին խաչակրութեան կը մղէր համընկերութիւն-Ֆրիվէյժ համադաշնակցութեան գոյութիւնը խորտակելու, վերջ մը դնելու հասարակ ժողովուրդը արիւնաքամ ընող սանձարձակ համակարգ-գործելակերպին:

Ստանձնած առաքելութեան գիտակցութիւնը զինք կը ջլապնդէր, կ'ամրացնէր հաւատքը մարդու հանդէպ: Հարուածները աւելի դիպուկ, աւելի հատու, պինդ ու նպատակասլաց կը դառնային:

Սակայն այն նոյն պառւաւը, որ Արչիին մղձաւանջներուն մէջ յայտնուած էր իբրեւ ամբողջ Միացեալ Ֆրիվէյժի տարածքին ամէնէն արթուն ու երկրին կացութեամբ մտահոգ քաղաքացի, դարձեալ կը խիզախէր հայրենիքը փրկել ամէն գոյնի ու կրօնի ներխուժողներու ախորժակէն:

Ոսկրախտէ ու յօդացաւէ տառապող ազազուն մատներով ան կը վերցնէր հեռախօսի ընկալուչը եւ կը կազմէր Կլէնտէյլ քաղաքի ոստիկանութեան շտապ օգնութեան թիւերը: Առանց որեւէ փափկանկատութեան, գինետնային նոյն բառամթերքով, անգործ նստած ու լաւ սնած ՀԱՓը (Հայրենիքի Փրկութեան Զօրասիւն) տեղեակ պահելու մոլթին մէջէն կատարուող սաղրանքներու էութեան..

- Ահաբեկիչները Ֆրիվէյժ կը քանդեն կոր,- գոչեց պառւաւը խուճապային այն չեչտուով, որ յատուկ էր իր տարիքի կանանց:

- Ինչպէ՛ս թէ Ֆրիվէյժ կը քանդեն,- հարց տուաւ մղձաւանջային այդ նոյն կին ոստիկանին քնաթաթախ ձայնը:

- Այո՛, արաբի կամ լաթինոյի արտաքինով միջին տարիքի ահաբեկիչ մը մինակը, Ֆրիվէյժին սիւնը սկսած է քանդել:

- Ֆրիվէյժ կարենալ քանդելու համար արդի ինչպիսի՞ գործիք կ'օգտագործէ այդ քու ահաբեկիչդ,- հարց տուաւ ոստիկան կինը, թերահաւատութեան նոյն չեչտով: Նախօրօք պատրաստուած դիպաշարի հիման վրայ ամէն ինչ նոյնութեամբ կը կրկնուէր, բացի կրակի հեթանոս արարողութենէն:

- Ճարպակալած ձեր յետոյքները եթէ քիչ մը շարժէք, կու գաք կը տեսնէք, թէ ահաբեկիչը «դժոխային» ի՞նչ գործիք կը գործածէ... մարդը խելքը կը գործածէ, չնորհ մը, որմէ դուք մեծով պզտիկով զրկուած էք,- գոչեց պաղարիւնութիւնը կորսնցուցած պառաւը:

«Արդէն ամէն մղձաւանջ կոչուած է իրականութիւն դառնալու, եւ հայուն համար յաճախ՝ հակառակն ալ ճշմարիտ է...», կը խորհրդածէր Արչի ու կ'իջեցնէր մուրճի չոր հարուածները, ինչպէս վարժ քանդակագործը:

Անիկա, հասարակութեան ապագան կարծես կը քանդակէր:

Ոստիկանական մեքենայ մը, առանց աղմուկի ու «սիքատէլիք» լոյսերու, դանդաղ, անաղմուկ, մօտեցաւ ահաբեկչութեան թատերավայրը: «Պառաւր չէր զառանցեր», խորհեցաւ բարեձեւ արտաքինով շէկլիկը, որ աւելի մանրքէնի կը նմանէր քան ոստիկանի: Կանգնեցուց սպիտակ տանիքով սեւ մեքենան, հետաքրքրութեամբ դիտեց իր աչքին առջեւ պարզուող զուարճալի տեսարանը, վոքի-թոքիով Կեդրոնը կանչեց, ահագանգ հնչեցնելու, ապա ձեռքը կողքէն կախուած ատրճանակին մեկնեց եւ Ֆրիվէյը եզերող դերբուկ հողատարածքէն յառաջացաւ Արչին ուղղութեամբ:

Ամրացուած կրաղիւսը կոփելու իր աշխատանքով տարուած, քարակոփ հին վարպետներու նման, Արչի միայն վերջին պահուն գլուխը չըջեց, հազիւ նկատելի մեղմ ժպիտով ողջունելու հետաքրքիր նորեկը, ապա գործը շարունակեց կարծես բան մը պատահած չըլլար:

Կին ոստիկանը Արչին պաղարիւն, անտազնապ պահուածքէն ազդուած, ոստիկանական լկտի բառամթերքին չդիմեց, մտքով խախտուածի տեղ դնելով մարդուկը, որուն արտաքինը կը մատնէր իր արմէնոյի ծագումը:

- Hey, you, what are you trying to do... Ի՞նչ կը կարծէք որ կ'ընէք:

Արչի շարունակեց մրճահարել:

- Քեզի հետ կը խօսիմ, սըր...-

- Կը տեսնէք ինչ կ'ընեմ, Ֆրիվէյը կը քանդեմ...

- What you mean by «destroying the freeway», հարց տուաւ կին ոստիկանը բերանին մէկ անկիւնը չըջուած քմծիծաղով, թերահաւատ: Ծօ՛ւ խլլոտ, քու Պէն Լատինդ չկրցաւ քանդել այս երկիրը, միթէ անապատի ուղտապաններուն աչքին Ամերիկան խաղալիք կը թուի...

- Մենք տարբեր տեսակի քանդումի մասին կը խօսինք, տիկին, իմ քանդումս խորհրդանշական է... հի՛նը, նեխածը, ստորնացուցիչը քանդել տեղը նո՛րը, աւելի մարդկայինը կառուցել:

- The fellow seems to be a crazy man, վոքի-թոքիով հաղորդեց կին ոստիկանը, ահաբեկիչ է, թէ գիժ, կը յաւակնի ամերիկեան քաղաքացիներս ազատագրել Ֆրիվէյի շահարկումէն...: Ասոր հետ մէկտեղ, կարգին մարդ կը թուի, սակայն կը զգուշանամ առանձինս, առանց թիկունքի, ձերբակալութեան մասին մտածել...

- Շարունակեցէ՛ք զինք խօսեցնել շուտով կը հասնինք, տեսնեք ո՛վ է եղեր մեր նոր փրկիչը: «Օր նոր՝ փրկիչ նոր...», խորհրդածեց ՀԱՓ-ի չըջանային պատասխանատու սէրճընթը, ոստիկանի մը համար բաւական սուր հիւմորը ցոյց տալով:

Փրկիչներու առատութեան մէջ ուղեկորոյս կին ոստիկանը Արչին մօտե-

ցաւ, «գոհ» մօտէն քննելու: Կարեկցանքի պէս բան մը զգաց արմէնոյիտին դէմքին կանոնաւոր գիծերը, վառվռուն սեւ աչքերը, կիսով սպիտակացած գանգրահեր մազերը, մկանոտ թեւերը դիտելով: Ազնուական մարդու տպաւորութիւն թողուց «ահաբեկիչը» կին ոստիկանին վրայ, կամ աւելի ճիշդը՝ վերնատունը ճաթած, գիծացած փրօֆեսէօրի:

Եթէ հարկը ըլլար, ատրճանակի ուժով բռնի ծունկի կը բերէր ազնուատես տղամարդը, որ կը բռնանար Ֆրիվէյի դրոյթին, այլախոհական իր տեսակէտները պարտադրելու, եղածը քանդելու կ'ելլէր, բարոյական իր ըմբռնումներուն ներհակ գտնելով գոյութիւն ունեցող դրամատիրական անհոգի կարգերը:

Ահաբեկիչի մասին աւելին իմանալու մարմաջով կ'այրէր ան ու վստահ էր, ու լարուած հետաքրքրութեամբ, կին ոստիկանը խօսակցութեան նիւթը որոշ հեռաւորութենէ առաջ տանելով հանդերձ, աչքերը ճամբուն յառած, անհամբեր կը սպասէր ոստիկանական շտապ օգնութիւնը: Աւելի քան վստահ էր, թէ դիմացի տուներէն մէկուն պատուհանին ետեւը կանգնած, պատուհաս դարձած ամենատես պառաւը կը հետեւէր գործողութեան ընթացքին եւ հաշտ աչքերով չէր դիտեր երիտասարդ, բարեձեւ ամերիկուհիին ճիծի պիծիները ենթադրեալ ահաբեկիչին ու հայրենիքի թշնամիին դէմ:

Հակառակ կին ոստիկանին կողմէ ցուցաբերուած զգուշութեան եւ շեշտուած զգայնութեան, վիվլուկ փրցուցած ոստիկանական երեք մեքենաներ, հասարակ քաղաքացիին վախ ազդող լուսարձակներով ու ճչակներու զիւ ձայնը արձակած, իրարու ետեւէ հասան ահաբեկչութեան վայրը: Քիչ ետք արդէն հեռատեսիլի կալուածատիրական ցեղապաշտ FOX ընկերութեան ուղղաթիւը, Ֆրիվէյի վերեւ սկսաւ թրթռալ ու շուրջպար դառնալ լաւագոյն տեսանկիւնէն նկարահանելու համար օրուան ամէնէն զգայացունց լուր-եղելութիւնը:

Ոստիկանները, բեմականացնելով ամբողջ գործողութիւնը, աչքի պոչով կը դիտէին ուղղաթիւները, եւ դեռ պատշգամ թափած երէցներն ու տակաւին կանուխ գործի մեկնող ամէն տարիքի ու սեռի վարորդները:

Այդ ո՞ր օրուան Ֆրիվէյցի «եանքի» ոստիկան էին, որ առանց հայհոյանքի, առանց կոպտութեան ու թատերական թուիչքի մարդ ձերբակալէին, այն ալ միջինարեւելքցի տեսքով ահաբեկիչ մը:

Երեք հուժկու իրլանտացիներ, Արչակին վրայ յարձակելով զայն հպատակեցուցին:

Արչի չընդիմացաւ ձերբակալութեան:

Գրուած էր... պիտի պատահէր:

ՊՕՂՈՍ ԳՈՒԲԵԼԵԱՆ
Լոս Անճելըս

ԱՄԵՐԻԿԱ՝ ՔՈՅՐՄ

Լուսանկարը՝
ՀՐԱԶ ԱՅՆԹԱՊԼԵԱՆԻ

Ամերիկա քոյրս,
Թշնամացած բարեկները,
Կախեցիր մեր հին պատշգամի հին թելերուն...
Ուր մնացին պատառիկները մեր մանկութեան

...

Ամերիկա, քոյրս,
Կանգնեցայ Նիակարայի առաջ,
Ըսիր, ջրվեժը հզոր է, դիմացը Պուֆֆալոն...
Երազներդ մէկ առ մէկ
Հանեցին դեղին ծոցատետրէս ...

Ամերիկա, քոյրս,
Երազներդ մնացին մեծ մամայի հայատառ թրքերէն տողերուն մէջ,
Ուր դուն պոլսահայերու հետ նստած կլոր սեղանին,
Անոնց պատրաստած համադամները համտեսեցիր ...
Կանաչ եալանչիներ հիթեղ ...

....



Իբրեւ թէ քեզ չեն փնտռեր ...

....

Քեզ չեն փնտռեր,
Ամերիկա քոյրս,
Զեռքս Անդրանիկ քեռայրին կղպուած
Փոշոտած հեռախօսին չ'երթար լսելու համար ձայնդ...
Զայնդ հին եւ գունագեղ...
Կը պատմես կեանքէն... ու բառերդ ալիքներ...
Բառերդ տող-տող,
Բառերը հատիկ-հատիկ...
Հարց կու տաս Հայաստանի մասին
- Հայաստան պիտի չերթա՞ս Սագօ...
Ամերիկա քոյրս, ծալապատիկ կը սպասենք որ կանաչները երկրիդ
Գունատրեն պահարանները մամային...
Յիշողութիւնս կը պատռէ ցանցը ժամանակի...
Մենք կը մերկացնենք ապրումները մեր...
Տղաքս ֆրանսերէն կ'երգեն... ու մենք մեր լեզուն կը զեղծենք...
Երազս էր Ամերիկան, երազս Ամերիկա քոյրս.
Աշխարհը մեր հանդիպումը ինչո՞ւ ծրագրէ...
Ահաւոր է, երբ ես փակած եմ դռները երազիս...
Եւ հեռացումդ ծանր կը նստի սրտիդ....
Դէմքեր կը սեւնան, բանաստեղծները կը շիջին...
Կը զանգահարեն, կ'ըսեն որ էջերս դառն էին եւ վատ...
Մէկը կը փոնգտայ Աստուծոյ անունով,
Ուրիշ մը՝ բլուրին նստած, անօթեւան, կիսամերկ կաղնիի պէս
Կը սպասէ անձրեւը ... որ պիտի գայ
Անձրեւը այս յիմար աշնան,
Անձրեւ՝ այս տօթ յիմար աշնան...
Ուրիշ մը բարձր սարերուն վրայ վերջալոյսներ կը յօրինէ.

...

Ամերիկա՛ վիթխարի քոյրս,
Հիմա նստած եմ կայսրութեան փլուզումը նկարագրելու...
Ինչպէ՞ս խօսիմ հետդ...
Ըսէ՛....
Ըսէ ո՞ր լեզուովս,
Համբանալս վեհանձնութիւն սեպէ...
Լռութիւնս աղօթք թող ըլլայ քեզի,
Ու մեր սառնութիւնը ամերիկեան գէշ նկարուած ֆիլմերու նմանցոր:
Տասնըութ տարեկան չեմ այլեւս, որ նամակ գրեմ քոյրիկին...
Այս տարի, քոյրիկ, մի՛ նոռնար *Լէպթոփը*...

Այս տարի կաղանդ պապան ալ սեւ է.
Ուրախանալու ոչ մէկ տեղիք կայ հիմա, գիտես չէ,
Պուրձ Համուտի սեւ մայրերը ո՞ր կը տանին...
Հոն չեմ պիտի ըսես ... յանկարծ սխալներ չընես

Ամերիկա՛, դուն մեծ քոյրս,
 Քանի՞ տուփ Էտվիլ մնաց պայուսակիդ մէջ...
 Յիմար Էտվիլ,
 Առաջին տարիներուն գաղտնապահ Էտվիլ,
 Ու հիմա բացայայտ ու ներբաններուն վրայ քալող յիշատակ որպէս...
 Հինգշաբթի երեկոյ լիբանանեան լոթօ...
 Լոթոն բոլոր անտէր հայերուն հայրենիքն է...
 Յատկապէս հինգշաբթի իրիկուն
 Բոլոր հայերն աշխարհի
 Սեւ ներկուած, սեւով ծպտուած ու սեւ ձեւացող հայերը...
 Պիտի դառնան տուն ձեռք մը պլոթ խաղալու...
 Պահարանին միւս կողմը, կամ ետեւը միշտ կայ
 Յեղասպանութեան ուրուն, որ կը հալածէ գիրենք...
 Ու դիմացի անկիւնը ուրիշ վերանտայի մը վրայ
 Քաղաքական կիսամերկ բանտարկեալներ կը տեսնեմ...
 Պոյի՛դ մեռնիմ...
 Քոյրիկ, կը յիշե՞ս այդ *վերանտան*, ուր Սեդա քոյրիկս
 Հաւկիթ կը խաշէր պապային համար...
 Ու չէր մոռնար երկու սառած *ալմազա* բերել ընթրիքին...
 Կեցցէ՛ *փրոսթաթ* Ամերիկան

.....

Ամերիկա, քոյրս, նիհարցա՞ր...
Սուշի եւ *ֆաստ ֆուտ* չմնաց քաղաքին մէջ...
 Պատմէ՛ Ամերիկայէն...
 Հայտէ, նազ մի՛ ըներ...
 Պատմէ ինծի վերջին աղանին ո՞ր գնաց ձեր տունէն...
 Որուն նկարն անգամ չես դրկած
 Ի՛նչ անջրպետ մեր միջեւ...
 Մի՛ դժգոհիր, Քոյրիկ...
 Ամերիկա քոյրս պիտի սիրե՛մ քեզ անջրպետին չափ,
 Մեծ ու կապոյտ...
 Երկարող երազին պէս որ չունի աւարտ...

Ամերիկա՛ քոյրս...

.....

Ամերիկա՛ քոյրս,
 Կապոյտով գրեցի քու մասիդ,
 Կապոյտով
Էյջ Փի փրինթըրը չաշխատիր...
 Առաւօտեան վաղ՝ հինգուկէսն է...
 Եաննին միայն կայ դիմացս,
 Բաժակ մը կոնեակ,
 Ամերիկա՛ քոյրս,
 Ռ՞ր դրկեցիր մեծ քոյրերս...
 Հօրքորս որ Իրաքէն հազիւ պրծաւ,

Անօթեւան անջուր հիմա Հոլանտա...
 Անամուսին անմուրազ ու անխօս հէրն անիծած...
 Հին երգերը հօրքուրներու...
 Ո՛ր մնացին հին ձայները,
 Ամերիկան մեզ որբացուց
 Ըսին որ երազի երկիր է...
 Երազները վրայ տուինք ու մեռանք...
 Մենք չմեռանք...
 Հիմա արեւելքի պորտին
 Զաւակներու մրմունջ բառերը պատշգամէն կ'արձակեն...
 Իբրեւ մասունք աղօթքի,
 Ամերիկա՛ քոյրս,
 Մեր խէրիկը անիծեցիր...
 Աֆղանիստան, Իրաք,
 Հիմա ալ ելեր ես Հայիթիի
 Որբուկները գողնալու...
 Ամերիկա՛ սեւ *համպըրկըր* յիշատակիդ...
 Ընկերներս ետ դարձուր...
 Ես չեմ մեռնիր, մի՛ մտածեր այդ մասին
 Գիրգոր քեռայրը միզել չկրցաւ,
 Եւ *փրոսթաթի* խլիրդէն մեռաւ,
 Աւելի քան սէր, աւելի *քանսէր*էն մեռաւ...
 Ո՛վ գիտէ ինչ ձանապարհ էր Քէրքուքէն Հոլանտա...

...
 Անդրանիկ քեռայրս անյիշատակ կը պառկի
 Դազար ամոս, հարսքոյրիկս ու հիմա Սագոն
 Որ մէկը թուեն...
 Մեռելները կը հաւասարին ողջերուն
 ... Ինչ տեսակ երազ է ասիկա
 Սուտերդ քեզի թող մնան
*Տաունտաուն*ներդ սովալլուկ վիուկներու պէս,
 Բերանաբաց ու դատարակապորտ ուրուներ են միայն:
 Ամէն ինչդ գէշ է
 Ամէն ինչդ մահ է
 Ամերիկա՛...

Ամերիկա, քոյրս,
 Կը զանգեն Յարութին բարեւ ըսելու...
 Բարեւ ընկեր
 Բարեւ բոլոր ընկերներուն...

Ամերիկա՛ քոյրս,
 Կ'ըսես ուրուականը պիտի հիննայ ու անցնի...
 Ամերիկան մեծ երկիր է
 Թալէպները քանի-քանի օդանաւ վար կ'առնեն

Ամերիկացի խարտեաչ զինուորացիներ հողին կը տրուին...
 Ծօ՛, դուրս ե՛լ,
 Դո՛ւրս բեր զօրքերդ,
 Մեծ օդանավերդ ի՞նչի կը ծառայեն.
 Հարաւս սեւ մոխիր ըրիր,
 Բայց չիմկայ...
 Դուն նաւթ կ'ուզես խմել...
 Նաւթի ծարաւ ես
 Աշխարհս ծեր է,
 Վախնամ մեռնի
 Ծառերը սեւ հագնին...
 Զինի փոխարէն տեղայ կարկուտ կարմիր...
 Դուն նաւթէն չե՞ս կշտանար...
 Տես հնդիկները ինչպէս կը կառուցեն իրենց տունը
 Տես հարաւի բնակիչները,
 Տես չինացիները...
 Դուն կեսար կ'ուզես խաղալ,
 Երեխաներդ առանց ցաւի պիտի ծնին
 Առանց երկունքի,
 Աձին առանց արբունքի
 Զերմանոցի անհամ ելակներու պէս...
 Ո՛ր են բանաստեղծներդ, թող ապտակեն քեզ
 Ամերիկա՛ թող ապտակեն...
 Ո՛ր է Ալէն Կինգպըրկի ոգին
 Վա՛յ, մամա ձան:
 Մէզ կը հոտի երկիրդ...
 Ամերիկա քոյրս,
 Քիչ մը զգացում եւ սէր ուղարկեմ
Ուեսթերն Ունիոնով....
 Ըսէ՛, սորվեցնե՞մ
 Ինչպէս կը գուրգուրան հօր ու մօր վրայ
 Ըսէ՛, արցունք մի՛ թափեր
 Լէպթօփս չի հասկնար
 Ու աչքերուս մէջ տեղ չմնաց արցունքի...
 Ամերիկա քոյրս, կը լսե՞ս զիս,
 Հաւաքէ պայուսակներդ...
 Իրերդ
 Ըսէ՛ Ամերիկան ի՞նչ տուաւ քեզի...
 Ամերիկան բաց գերեզման է, գիտես...
 Հոն մեռելները կը պառկին գեղեցիկ գերեզմանատան մէջ...
 Մեծ կայսրութիւն Ամերիկա՛
 Մարդիկ թիւ, հազարումէկ թիւ ու թիւեր...

 Ամերիկա քոյրս,
 Սուրբ Սարգիսն ալ անցաւ,

Ոչ որ զանգ կու տայ
 Հասնող հեռախօսներուն համարները
 Երեք եօթը չորսով են միայն...
 Նախագահիդ կըսես
 Որ հոգս չէ թէ ի՞նչ բառ պիտի գործածէ... Ապրիլ 24ին...
 Միայն նաւթի համար,
 Պիտի գոջաս Ամերիկա քոյրս...
 Տունէն դուրս ել...
 Վերջացաւ մելանս որ գրեմ...
 Ամերիկայիդ մասին գրելէն յոգնեցայ...
 Ամերիկա քոյրս,
 Երթամ ապրելու...
 Դուրսը արեւն է...
 Կ'ուզեմ ապրիլ
 Կ'ուզեմ որ ապրիլ քոյրս,
 Կորքի չեմ որ նկարեմ քեզ...
 Տանս մէջ կ'ապրի նկարիչ մը հզօր...
 Մեծ ընկերս...
 Որ չի հաւատար Նոր Եորքի ցուցասրահներու սափրագլուխներուն...
 Վահան Ռումելեան...
 Հզօր գոյներով նկարէ գալուստը նոր պայթումներուն...
 Որ թերեւս արթննաս Ամերիկա քոյրս...
 Բանաստեղծիկները, որ բանաստեղծութիւն կը հազան,
 Կը փղձկին ու տրտում հոկտեմբերի խաղեր կը խաղան...
 Անոնց համար ալ կը գրեմ...
 Որ սորվին լաց չըլլալ ասկէ ետք...
 Կեանքը գեղեցիկ է...
 Կեանքը հզօր է Ամերիկա քոյրս...
Բարլուս...
Բարլուս բոլոր ապրողներուն...
Բարլուս Տիկին Արշալոյսին որ մեռաւ Ամերիկա երազելով...
Բարլուս անոնց որ գործէն գինետուն կը վազեն...
 Ամերիկա՛ ձանապարհ լինելութեան...
 Քու խաչերդ Երուսաղեմէն պիտի բարձրանան...
 Երթամ գրկեմ երեխաներս...
Բարլուս Ամերիկա...

Ամերիկա Քոյրս ` *Բարլուս*

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ
Պէյրութ

$\hat{U}, \delta - \mathcal{P} \mathcal{A} \mathcal{E} \delta \mathcal{A} \mathcal{E} \mathcal{O}^{\circ 2} \hat{U} \hat{E} \acute{u} \hat{e} \mathcal{O}^{\circ} \delta^a$ $\hat{i}^2 \hat{E} \mathcal{A} \hat{i}^2 \hat{U} \mathcal{A} \hat{U}$

Chanter, c'est être...
RILKE

Գարնանային բուրմունքի հետ յորդագել՝
Ներս կը մտնէ պատուհանէս երգըդ աղու,
Որ, ձայնանիշ առ ձայնանիշ,
Կը պարուրէ ներաշխարհն իմ՝
Հին տխրութեամբ մը անկէզ:

Ըսէ՛, ինչո՞ւ փեռեկտեցիր
Կեանքիդ ծաղիկը բուրեան,
Երբ բնութիւնը համայն
Վերապահած էր քեզի
Հազար ու բիւր վարդածիծաղ գարուններ,
Որոնք պիտի պսակէին օրերը քո՝
Ոսկեմարօտ վայելչութեամբ...

Ըսէ՛, ինչո՞ւ ընդհատեցիր
Կեանքիդ երգը տարփահոս,
Երբ քո ձայնըդ առաւել քաղցր էր ու թովիչ
Քան խոխոջներն աղուալուր
Քու հայրենի բնաշխարհիդ աղբիւրներուն:

Ճամբուդ վրայ թող որ մահը
Ըլլար անցորդ պատահական
Որ չունենար իշխանութիւն քո վըրայ.
Ճամբուդ վըրայ ոչ մէկ կասկած ախտավարակ
Բոյն չդնէր միջնաբերդին մէջ հաւատքիդ.
Զքայքայէր ոչ մէկ խորհուրդ երկդիմի՝
Կառոյցն ամբողջ ձգտումներուդ ոգեկան...

«Երածշտուիկներ»
ՍՈՒԲԷՆ ՈՍԿԱՆԵԱՆ



Որքան չքնաղ էիր դուն այն օրերուն,
Երբ դեռ կայտառ եւ կենսութիւն Երգչուհի,
Կը կանչէիր թեւատարած վերացումով
Ու զիլ ձայնով,
Բազում տաղեր ու սիրերգներ հոգեթով,
Որոնց զօրեղ եւ բոցաշունչ կախարդանքէն,
Ո՛վ Տալիտա, մա՛հն իսկ կարծես
Կըլլար անգօր եւ յուսաբեկ...

Եկո՛ւր կրկին եւ թարմացո՛ւր
Կենսաթրթիռ քու յոյզերուդ
Անրջային քաղցրութեամբ,
Հակատագրի խորշակներէն ընդարմացած՝
Երագանքիս ծաղիկները տարփանուշ...

Ա՛յ կը բաւէ,
Արթնցի՛ր դամբանային խոր քունէդ
Եւ առինքնող քու տեսքով,
Քու հայեացքովդ խորհրդալոյս՝
Ըսէ՛ մարդոց եւ աշխարհին բովանդակ,
Թէ էակից տարրն ես դուն
Եւ ապրումը կենսախայտ՝
Մայր Բնութեան լուսակարկաչ զեղումներուն...

Դուն խորհուրդն ես երգարուեստի,
Քու ձայնական շնորհներով սիրաբորբ՝
Յաւերթօրէն կը մնաս
Երգացանկին մէջ դարերու յիշողութեան,
Ու երգերուդ բալասանով,
Ո՛վ Տալիտա,
Դուն կը բուժես եւ կը սփռես դարէ դար՝
Անմխիթար սիրահարներն այս երկրի...



ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

28 Սեպտեմբեր, 2009

Պէյրութ

ՄՐՏԱՅՈՅՁ ԽՕՍՔԵՐ՝ ԺԵՐԱՐ ՏԸ ՆԵՐՎԱԼԻՆ*

Je suis le ténébreux,- le veuf,- l'inconsolé.
Le prince d'Aquitaine à la tour abolie:
Ma Seule étoile est morte,- et mon luth constellé
Porte le soleil noir de la Mélancolie.

GÉRARD DE NERVAL


7

Փողոցն այն հին,
Որ կը կոչուի Վիլէյ Լանթեռն,
Եղերական այն վայրն է,
Ուր առաւօտ մը Յունուարի,
Հակատագրի անմիտ խաղով մը յանկարծ
Դուն յանձնեցիր կեանքիդ ծաղիկը Բուրեան՝
Մահուան խելառ խորշակին...

Սակայն ինչպէ՞ս յանդգնեցար իջնել փողոց
Վաղ ժամերուն առաւօտեան,
Ուր ցրտաշունչ հողմերն անսանձ
Կը սփռէին մայրերն ի վար քաղաքին՝
Անդոհանք մը անորոշ,
Թախծութիւն մը անիմաց:

Համբուդ վըրայ
Գէթ անցորդ մը պատահական
Զսթափեցո՞ւց քեզ արդեօք
Խելացնոր վիճակէդ.
Կամ չսաստե՞ց քեզ երբեք
Վիլէյ Լանթեռն փողոցի
Աղբահաւաքն այդ պահուն:

Դուն չիմացա՞ր Սաքրէ Քէօրի կոչնակներուն
Ղօղանջները հոգեյոյզ,
Որ սանձէին քեզ կորստեան դատապարտող
Տագնապը քու հոգեկան
Եւ կանխէին արարքը քու մահացո՞ւ՝
Յորդաշունչ կանչերով...



Ո՞ր էր արդեօք երակներէդ հրահոսող
Վարար աւիշը կամքիդ,
Որուն հզօր ներգործութեամբ
Դուն կրնայիր հակակշռել
Մահածիծաղ փորձութեան քեզ ենթարկող՝
Ամէն ձգտում սանձազերծ...

Դուն մեկնեցար աստղի նման Գիսաւոր,
Առանց կարենալ մշակելու լիովին
Բուրաստաններն արուեստի
Եւ գեղապաշտ դպրութեան:

Գերեվարեց երազը քեզ
Եւ դուն դարձար երազներու ձանապարհորդ.
Բնակեցար խորհուրդներու աշխարհին մէջ,
Իբրեւ երազ խորհրդատու,
Քողարկելով անըջային թովչանքով
Յղացքն ամբողջ ու ոգին՝
Քերթողական տեսիլքներուդ անմեկնելի...

Սակայն պահ մը կը ներզգամ ես կարծես,
Թէ կը ծնիս իբրեւ տիպար խոհակերպ
Ֆաուսթի մէջ վերստին,
Որուն ձարտար թարգմանիչը հանդիսացար:

Ըսէ՛ ինծի, ըսէ՛, Ժերար տը Ներվալ,
Զգաստութեան քեզ հրաւէր չուղարկեցի՞ն,
Իրենց տարփոտ ժպիտներովն հեռակայ,
Արեւախանձ անդաստաններն Արեւելքի
Եւ ծաղկագեղ տեսարաններն Իտալիոյ,
Որոնց օր մը մտերմութիւնն ապրեցար
Երանական քու այցով:

Ըսէ՛ ինծի,
Զգաստութեան քեզ հրաւէր չուղարկեցի՞ն
Հնադարեան կոթողները Արուեստի,
Երբ Փարիզի Աստուածամօր Տաճարին
Սրբախորհուրդ վայելչութեան յանդիման,
Յուրտ առաւօտ մը Յունուարի,
Ով տարաբախտ բանաստեղծ,
Քու կարապի վերջին երգդ կ'երգէիր...

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

23 Յունուար, 2010 - Պէյրութ

*** ԺԵՐԱՐ ՏԸ ՆԵՐՎԱԼ**

(1808 - 1855)

Բանաստեղծ, արձակագիր եւ
թարգմանիչ Ժերար տը Ներվալ,
բուն անունով Ժերար Լապրիւնի,
ծնած է Փարիզ, 22 Մայիս 1808ին:
Հայրը գինուորական վիրաբոյժ
էր: Մայրը՝ Վալուա նահանգի
Մորթֆոնթէն գիւղէն էր: 1810ին,
Ներվալ երկու տարեկան էր, երբ կը մեռնի մայրը՝ Լեհաս-
տանի Սիլեզիա նահանգին մէջ:

1840ին, ան կը թարգմանէ Կէօթէի «Ֆաուսթ»ը: 1841ին
կ'ունենայ մտային առաջին խանգարումը: 1842ին կը ճամ-
բորդէ Արեւելք: Նախ կ'անցնի Եգիպտոս, Ադաքսանդրիա,
Ասուան, կը դիտէ Սփինքսը, բուրգերը, տաճարները: Ամիս-
ներ կը մնայ Գահիրէ: Ապա կու գայ Պէյրութ եւ կ'այցելէ Լի-
բանանի պատմական վայրերը, գիւղերը, ինչպէս՝ Պէյթ Մէ-
րի, Շուֆի շրջան, եւ այլն: Վերադարձի ճամբուն վրայ կ'այ-
ցելէ Մալթա կղզին եւ, ապա, Նափոլի: 1841ի Դեկտեմբերին
կը հասնի Փարիզ: Կը հրատարակէ «Ճամբորդութիւն դէպի
Արեւելք» նշանաւոր գործը:

1850ի աշնան կ'ունենայ մտային երկրորդ խանգարումը:
Ապրիլի գիշեր մը կը փորձէ ինքզինք նետել Սէն գետը: Ամիս
մը խնամուկէլ ետք բուժարանի մէջ, կը գրէ «Սիլվի» վիպա-
կը: 1853ին կը գրէ «Լէ Շիմէր» խորագրով քերթողագիրքը,
որ կը բաղկանայ 14 սքանչելի հնչեակներէ:

1854ին Ներվալ գրի կ'առնէ «Օրելիա» եւ «Փանտորա»
խորագրեալ արձակ գործերը:

1855ի Յունուարի առաւօտ մը վերջ կու տայ իր տառա-
պակոծ կեանքին՝ ինքզինք կախելով «Հին լապտեր» կոչուած
փողոցին մէջ:



ՄԵՏԱՄՈՐՖՈԶ

Առաջին ճիչս՝
 Օրորոցս լքելու փափաք:
 Առաջին բառս՝
 Անեզրութեան աւետիս:
 Առաջին լացս՝
 Անզօրութեան ամօթ:
 Առաջին սէրս՝
 Անթռչուն երկինք:
 Եւ ծիծաղս՝
 Միրաժ հորիզոնում:
 Ճամբորդութիւնս ինձնից՝
 Վերադարձ ինձ:

* * *

Թռիչքը չղջիկների՝
 Անելանելի լաբիրինթոս,
 Նրանց կակղամորթ թելերի
 Բախիւնից
 Ծեծկում է գիշերը,
 Եւ ջրահեղձ՝
 Յանձնում խաւարի
 Նժոյգներին:

* * *

Խնձորը համտեսեց.
 Եւ ծածկեց մերկութիւնը իր:
 Դրախտից արտածուող լոյսը
 Կանաչ շղարշ հագաւ:
 Ադամն այդպէս էլ չասաց.
 «Ես էլ եմ մեղաւոր»:

* * *

Որպէս աստղ
 Անապաստան երկրի,
 Թափառեցի երկնականարներում,
 Բազմացրի հացը,
 Բաժանեցի տնանկներին:
 Ես զսպեցի մոլուցքը գետերի,
 Ես լսեցի աղօթքը լեռան,
 Ես հասկացայ
 Նշանները Տիեզերքի...



Ինձ մնաց միայն մենակությունս...

**Ոչ որ,
Ոչ որ չասաց.
«Գոհանամք...»:**

* * *

**Ես յաւերժութիւնը փնտռեցի խօսքում
Եւ հոգիս վաճառեցի բառին...**

* * *

**Փառքի դեղին դափնիներ,
Դափի ձայն ուլորուն՝
Դէպի նեխած դափնեպսակը:
Հինգ քայլ այս կողմ՝
Հարուած,
Երկուսը՝ աջ՝
Վայրէջք,
Մի քիչ ետ՝
Շղթայ,
Երեքը՝ ձախ:
Խաւար:
Եւ դափնեվարդեր կը շարտունեն քեզ,
Դափնեպսակներ՝
Ուղիղ քո դիմաց:**

**Փառքի դեղին դափնիներ,
Դափի ձայն ուլորուն,
Հեշտանքով լի
Խռիւ արահետներ
Հինգ քայլ այս կողմ՝ խայթ,
Մի՛ քիչ ետ՝ դանակ,
Երկուսը՝ աջ՝ խաբկանք,
Երեքը՝ ձախ՝ անդունդ:**

* * *

**Գետը՝
Ուշացած մարգագետին:
Երկինքը՝
Խարոյկ աստղերի:
Ես՝
Երգը կեանքի:
Մահը՝
Յաղթուած ինձանից:**

Նայիրա Համբարձում-
եան ծնած է Երեւան: Բա-
նասիրական գիտութիւն-
ներու թեկնածու է: Հեղի-
նակ է բանաստեղծական
երեք ժողովածուներու՝
«Մտորումներ աշնան կէ-
սին», «Կանաչ կառեթներ»,
«Ես բառ եմ դարձել», մե-
նագրութեան մը՝ «Մարօ
Մարգարեանի քնարերգու-
թիւնը, մանկապատանե-
կան մէկ գրքի՝ «Կանաչու-
կը» եւ գիտական մօտաւո-
րապէս 30 յօդուածներու:

ՆԱՅԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Ծերուկներն մօտեցաւ հանրային պարտէզի նստարանին, գաւազանին ծայրով հեռացուց դեղնած տերեւները եւ գրաւեց անոնց տեղը: Յաւերթութեան մէկ ակնթարթի մասնակից ծերուկը աշխարհի տիեզերքի մէջ համախոհ չունէր:

Յանկարծ յայտնուեցաւ պառաւ մը, որ կարծես ծերուկին անցեալի ու ներկայի ուշացած զուգահեռն էր:

Ծերուկը դողդոջուն գաւազանին ծայրով կամացուկ մը դպաւ աննպատակ անցորդի յետոյքին:

Ա Շ Ո Ւ Ն

(Մնջախաղ)

Պառաւը անակնկալի եկած կանգ առաւ ու դարձաւ ծերուկին կողմը: Վերջինս հայեացքով հրաւիրեց պառաւը՝ նստելու քովը: Վերջինս աղջնակի ամօթիւսած հնազանդութեամբ յարգեց հրաւերը: Աչնան մեղեդիի կշռոյթով անոնց պաղ ձեռքերն ու հայեացքները հանդիպեցան իրարու, յետոյ դանդաղ շարժումները վերածուեցան պարի, որ զսպուած ճիչ մըն էր, ուշացած ճիչ մը՝ ճախրանքի կարօտ:

Կորսուած անցեալի ետեւէն վազողներ էին անոնք, որ կը փնտռէին անդառնալին...

Շուտով յոգնեցան եւ վերադարձան իրենց ցուրտ ներկային:

Ծերերը ձեռք-ձեռքի տուած քալեցին տերեւաթափ ծառուղիէն:

Երկու աշունները ներդաշնակօրէն ձուլուած էին բնութեան աչնան, որ չքերթի հանած էր իր դէպին տերեւները, ուշացած յուշերու պէս...



ԵՈՒՐՈՋ



Ծ Ո Ւ Կ Ը

(Հանելուկ)

Տարօրինակ թուշուն մըն էր: Ան մեր գիւղին մէջ յայտնուեցաւ վաղ գարնան. իր երամէն բաժնը-
լած ըլլալու էր: Մոխրագոյն էր, աղանիւի մեծութեամբ, սուր կտուցով, ոտքերուն՝ լողակներ: Օտար
թուշունը անմիջապէս շրջապատուեցաւ չարածճի մանուկներու աղմուկ-աղաղակով եւ զգաց, որ ինք
բարեկամներու մէջ չէ: Ոչ ոք գիտէր տարօրինակ թուշունին անունը: Ոչ մէկ հանրագիտարանի կամ
դասագիրքի մէջ կրցան գտնել անոր նմանող թուշուն մը: Երբ կենսաբանութեան ուսուցչուհին՝ տի-
կին Կոկոշն ալ զարմացած թօթուեց ուսերը, «պատանի բնասէրներ»ը որոշեցին անուն մը հնարել
առեղծուածային թուշունին:

Ճաքճած ձեռքերէն պաշտպանուելու համար, թուշունը շարունակ ձայն մը կը հանէր եւ կը սպառ-
նար խածնել: Այդ ձայնը նման էր «ծուկ»ի: Անունը պատրաստ էր՝ Ծուկ:

Տղոցմէ ամէնէն համարձակը, որուն ձեռքերուն մէջ բանտարկուած էր անհասցէ թուշունը, նկատե-
լով վերջինիս ոտքերուն լողակները՝ առաջարկեց ուղղուել դէպի մօտակայ լիճը, ստուգելու համար
Ծուկին լողալու կարողութիւնը: Ձէին սխալած, ջուրին մէջ Ծուկը վերագտաւ իր ազատութիւնը եւ
խաղաղ լիճին վրայ հետագիծ ձգելով, սուրաց դէպի հայելիին կեդրոնը: Աղմկարարներու խումբը
տեսնելով թուշունին ակամայ շնորհուած ազատութիւնը, սկսաւ քարերով հալածել զայն: Նկատելով
խուճապահար թուշունին եղէգներու մէջ ապաստան գտնելու ջանքերը, երկու չարածճի լողորդներ
նետուեցան ջուրին մէջ: Թուշունը գինքը հալածող ձեռքերու տակէն շարունակ կը սուզուէր եւ քանի
մը վայրկեան յետոյ կը յայտնուէր ուրիշ տեղ մը: Ջրամարտը, որ պոռչտուքով կը քաջալերուէր
ափէն, երկար չտեւեց: Նոր լողորդներ նետուեցան ջուրին մէջ եւ քանի մը վայրկեանէն հասան իրենց
ընկերներուն: Անոնցմէ մէկը որսալով ուժասպառ Ծուկը, ամուր բռնած ափ հանեց զայն եւ մինչ բո-
լորը կը հաւաքուէին, հանդիսաւոր կերպով բաժնեց թուշունին գլուխը՝
մարմինէն: Թփրտացող թուշունի թեւերու աստիճանաբար մարող ձայ-
նը կը խանգարէր խորհրդաւոր լռութիւնը: Բոլորը հեռացան գլխիկոր,
անյայտ բեռ մը չալկած, եւ աշխարհի խրթին հանելուկներու շարքին
հատ մը եւս աւելցաւ...

ՆՈՐԻԿԵԱՆ



ՌՈՊԵՐԹ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Պէյրուի

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԻՄ ԽՈՀԱՏԵՏՐԻՑ

(մենք, մեր վտարանդի գիրը, մեր ... երազները)



ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿ. ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

«...Երբ ինչ-որ բան եմ կորցնում, անպայման գտնում եմ մի օր. չէ՞ որ դա իմն է եղել, ինչպէ՞ս կարող եմ այլեւս չգտնել: Շատ տարիներ առաջ, երբ նոյնիսկ չէի ծնունել, տատս, որ եղել է հարուստ կալուածատիրոջ դուստր, կորցնում է ծնողներից իր հարսանեաց հանդէսի օրը նուէր ստացած ոսկեայ ակնագարդ գօտին: Տասնամեակներ շարունակ այդ թանկարժէք հին գարդը ընկելմնացել էր մեր գիւղական տան ձեղնայարկում՝ մաշուած սեւ սնտուկի մէջ, որի վրայ պապս ինչ-որ անպէտք իրեր էր լցրել: Կորսուած իրը անցեալ ամրանը՝ տանիքն աւելորդ իրերից մաքրելու ժամանակ, գտանք ես ու մայրս: Պատկերացնո՞ւմ էք մեր հրճուանքը: Տատս վաղուց չկայ (երեսունհինգ տարի), իսկ

այդ գօտին ծնողներս նուիրեցին ինձ: Նախնիներիս կողմից: Ես յաճախ վերցնում եմ ոսկեայ գոհարազարդ իրը, նրա վրայ մատնահետքեր եմ նշմարում. ազնիւ մետաղն իր վրայ տակաւին պահում է հարիւր եւ աւելի տարիներ առաջ ապրած արիւնակիցներիս մատների դրոշմը...

«Նոյն յուզմունքով ես այսօր իմ մէջ կրում եմ արեւմտահայերէնը: Ես ոսկեղնիկ հայերէնիս սրբազան կէսը կորցրել էի եւ գտայ. գուցէ կորցնողը ես չեմ, այլ իմ հայրերը, ես գտնողն եմ, ես չէի կարող չգտնել, չէ՞ որ այն իմն է, ոտքից գլուխ իմը...

«Այո՛, ես չեմ կարող կիսատ հայ մնալ: Ես ամբողջական հայ եմ:

«Հաւատացէ՛ք, շուտով կու գայ օրը, որ բոլոր հայերս կը մոռանանք «ձուլում» բառը կամ էլ կը գործածենք միայն «մետաղների ձուլում» արտայայտութեան մէջ: Մարդկային ձուլում, հայի ձուլում ուրիշին չի՛ լինելու...», տարիներ առաջ այս տողերը գրել էի Փարիզի «Մաշտոց» Հայ Լեզուի Պաշտպանութեան Միութեան նախագահ, Սորբոնի համալսարանի վկայեալ պրօֆեսոր յարգարժան տիկին Հիլդա Գալֆայեան-Փանոսեանին, որի շնորհիւ այսօր ՏԵՐ եմ դարձել մեր Մեծասքանչ արեւմտահայերէնին:

«Ես համբերութեամբ կը սպասեմ այն օրուան, երբ Հայաստանի նոր սերունդը քեզի նման վերագտնէ իր ժառանգութիւնը...: Զիրար անգիտանալով, զիրար ուրանալով տեղ չենք հասնիր: Միասնականութիւնն է, որ մեզ կրնայ փրկել: Հայաստան եւ Սփիւռք. մենք միասին է, որ զօրաւոր ենք, իսկ տկար՝ իւրաքանչիւրս առանձին-առանձին: Մենք բախտաւոր եղանք, որ 21րդ դարը թեւակոխեցինք որպէս ազատ ու անկախ հայրենիք եւ պետականութիւն ունեցող ժողովուրդ: ... Մերոպեան ուղղագրութեան եւ արեւմտահայ մշակոյթի ծանօթութեամբ է, որ Հայաստանի նոր սերունդը պիտի կարողանայ կապուիլ իր սփիւռքահայ ցեղակիցներուն, ինչպէս նաեւ 15 դարու ընթացքին ստեղծած վիթխարի գրականութեան եւ մշակոյթին, որ իր ազգային մշակոյթն է, ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹՆ է: Ուրիշինը չէ, այլ ի՛րն է: Ուրեմն, անհրաժեշտ է, որ ստանձնէ զայն, տէր կանգնի անոր եւ փոխանցէ զայն յաջորդ սերունդներուն: Ահա թէ ինչ պարտականութիւն կ'իյնայ ձեզի՝ ուսուցիչներուդ: Բացատրել, փոխանցել, տարածել: Զանքերը չխնայել, մինչեւ որ ամէն Հայաստանցի զգայ, որ կարելի չէ «կիսատ Հայ» մնալ, ինչպէս որ կ'ըսես դու. չատ սիրեցի այդ բացատրութիւնդ...»: Հիլդա Գալֆայեանի խօսքերն են:

ՈՍԿԵԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ

«Ու թէ քեզ դաւենք, ուրեմն չունենք
հող ու հայրենիք,
Ու թէ քեզ դաւենք, ուրեմն
չկանք»
ՎԱՀԱԳՆ
ԴԱԽԵԱՆ

Հինգերորդ դար. ծաղկում են ինքնուրոյն ե՛ւ թարգմանական գրականութիւնը, պատմագրութիւնը, ե՛ւ շարականներ են երգւում եկեղեցիներում: Աստ-

ւածաշնչի թարգմանութիւն՝ «Թագուհի թարգմանութեանց» ... Միջնադար: Նարեկացի, Շնորհալի, Ֆրիկ, Քուչակ, Մեսրոպի գրերով ռամկօրէն գրող պատմիչներ ու երգիչներ: Յետոյ՝ նոր ժամանակներ: Արեւմտեան Հայաստան: Օսմանեան տիրապետութիւն: Աշխարհաբարի արեւմտահայ ճիւղը վտանգւած է... Գաղտնի ուսուցում դպրոցներում...: Սակայն Մեսրոպի գրերով Պոլսում ստեղծուող գրականութիւնը հասնում է Թիֆլիս, իսկ Սիամանթոն ու Վարուժանը Տէրեան են կարդում... Սեւ ժամանակներ: Այբ-բեն-գիմը գրւում է ...աւագի վրայ...: Հայրենիքի, հայրութեան կարեւոր հատուածի եւ մշակութային յենարանների կորուստ...: Սփռւում է հայն աշխարհում, սակայն նորէն որդուն հայկազեան դպրոց է տանում: Որ հայ դպրութեան ծառը չչորանայ...: Տարագրեալները կորսուած հայրենիքի յիշատակը վերապրում են միայն լեզուի մէջ...: Արեւմտահայերէնը դառնում է ինքնութիւն, հոգեւոր սնունդ, բռնագրաւուած Արեւմտահայաստանի ապրող յուշ: Սուգից ու կականից անդին՝ վերականգնումի աննահանջ պայքար...

Արեւելեան Հայաստան: Չարաբաստիկ 1922, ապա 1940: Ընդունւում են ուղղագրական «բարեփոխումները»: Ժողովրդի արեւմտեան հատուածը չի՝ համաձայնում որեւէ կանոն ընդունել:

Ունեցանք երկու ուղղագրութիւն: Երբեմն նորը կործանարար է լինում, իսկ կորուստները՝ անդառնալի...: Այդ թուականներից մինչեւ հիմա արեւմտահայը խորշում է հայաստանեան ուղղագրութիւնից, իսկ արեւելահայը չի ճանաչում այն, ինչը ԻՐԵՆՆ է...

ՕՏԱՐՆԵՐ ՈՒ ՄԵՆՔ

Սիրում ենք, չէ՞, մեր ազգային խնդիրներով օտարներին դիմել...: Յիշեցի՝ ինչպէս է արձագանգել Անտուան Մէյէն Մ. Աբեղեանի՝ ուղղագրական բարեփոխումների վերաբերեալ գրութեանը. «...Ստացայ հայերէնի ուղղագրութեան վերաբերեալ շրջաբերականը: Օտարազգին չի կարող այսպիսի խնդիրներին միջամտել: Ես ինձ թոյլ եմ տալիս միայն նշելու, որ այնպիսի ազգի մէջ, որտեղ չկայ որոշակի ուղղագրութիւն պարտադրելու ընդունակ հեղինակութիւն, ամենախելացի բանը աւանդական ուղղագրութեամբ բաւարարուելն է...: Մի խօսքով, բարեփոխման մէջ ես աւելի շատ վտանգ եմ տեսնում, քան օգտակարութիւն...: Ուն, իւր, եւր յստակ են, եւ դրանք փոխելով՝ ոչինչ չէք չահի...» (1913 թուական):

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ԶՕՐԱՎԱՐԻ ԲԱՆԱԿԸ ԿԱՄ ԶՐՈՅՅ ԼԵՋՈՒԻՍ ՀԵՏ

Դու ոգին ես եղել մեր եղբօն փողի,
Ոգու կանչն ես եղել մեր պայքարող...
Կարող էինք ապրել անգա՛մ առանց հողի,
Բայց առանց քեզ ապրել չէինք կարող...
ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

Մեծերն այսօր ինձ «Հանգիստ չեն թողնում»։ Համաստեղն է «խօսում», «Սուրբ Մեսրոպ, բանակի մը գլուխ անցած, արշալեց՝ տէր դառնալու Հայաստանին։ Ան այրուձի չունէր, ոչ ալ գէնք ու թնդանօթ. անոր բանակն իր աշակերտներն էին։ ... Յաւիտենական է հայ ժողովուրդը. ան կոչուած է պատմութեան մէջ դեր մը կատարելու։ Ոչ թէ իշխելու եւ բանակներ կազմելու, այլ ջա'հ մը բռնելու։ Ազգը կրնար հզօր բանակներ ունենալ եւ սակայն պարտուիլ, եթէ զօրաւոր չէ հոգեպէս։ Մեր գոյութեան գաղտնիքը այդ հոգեկան մշակոյթին ուժն է, որուն ոչ մէկ թշնամի կրցաւ հասնիլ...»։

Երկիւղածօրէն ծունր դնելով Օշականի ամենաթանկ շիրմի առջեւ՝ զրոյց եմ սկսել քեզ հետ, իմ աստուածային լեզու, եւ ուզում եմ մաքրել քո ուսերից դարերի փոշին այնպիսի՝ քնքշութեամբ, որ ցաւ չզգաս յանկարծ, այլ ժպտաս զաւակից սիրուող մօր բարի ժպիտով։ Մեր անգուգակա՛ն լեզու, որ արարուել ես բզբտուած ժողովրդիս ցաւից ու արիւնից, երազանքից ու յոյսից, ապրի՛ր յաւերժ։ Դու մեր առաջին ու վերջին սէրն ես, քանզի էլ ի՞նչ ունենք աշխարհում, «որ այսքան մերը լինի»։ Որ այսքան մերը լինի...։ Հայ քերթողի երազներից հիւսուած երգի այս տողը պոկուեց ու թեւածում է մտքերիս մէջ...։ Ի՛նչ լաւ է ասել բանաստեղծը՝ մեր լեզուն մենք ենք, որ կանք...։ Իսկապէս, չեմ գտնում սահմանը, որով անջատում ենք ես ու դու, մենք ու դու...։ Յաւերժ պատանի, ալեհէ՛ր իմաստուն մանուկ, քեզնով ենք երգում մեր սիրոյ ու կարօտի երգերը, հիւսում մեր անուրջների ու թախծի բանաստեղծութիւնները, պատմում մեր հերոս հայրերի ու եղբայրների մասին իրապատում հէքեաթները, աղօթք մրմնջում առ Աստուած...։

ՀԱՅԻ ԱԶԳԵՐ

... Ես Հիլդա Գալֆայեանի աչքերում արցունքներ տեսայ. սովորական ուղղադրական օրէնք էր ներկայացնում, բայց արցունքներ կային նրա աչքերում։ Մարդիկ կան, որ սիրում են իրենց ցեղի հոգեւոր արժէքները ... արցունքոտւելու աստիճան։

Երբեւէ նկատե՞լ էք, որ մենք՝ հայերս, մեր մշակութային արժէքների մասին խօսելիս դառնում ենք խի՛ստ քնարական։ Տեսնես ուրիշները երբեւէ ... զրուցո՞ւմ են իրենց լեզուի հետ։ Լեզուի հարցերի շուրջ խորհրդածելիս մենք առաջնորդւում ենք ո՛չ միայն բանականութեամբ։ Նաեւ զգացմունքներով։ Անանձնակա՛ն զգացմունքներով։

ԳՐԱԲԱՐՆ ՈՒ ԱԾԽԱՀԱՐԱՐԸ

Յիշեցի Սարոյեանի սարսուզող տողը՝ «այս ցեղը, որի գրքերը չընթերցւած, եւ երգերը լուծ են...»։ Յիշեցի եւ ... սարսափեցի...

Փարիզի «Մաշտոց» Հայ Լեզուի Պաշտպանութեան Միութիւնը (նախագահ՝ դոկտոր Հիլդա Գալֆայեան-Փանոսեան) Երեւանի Խ. Աբովեանի անուան Մանկավարժական Համալսարանի «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի (տնօ-

րէն՝ պրոֆեսոր Սուրէն Դանիէլեան) հետ համատեղ արեւմտահայ լեզուի եւ գրականութեան դասաւանդման փորձնական ծրագրեր է իրականացնում Հայաստանի եւ Արցախի դպրոցներում: Ինձ բախտ է վիճակուել այդ ծրագրի շրջանակում ուսումնասիրել արեւմտահայերէնը, իսկ արդէն մի քանի տարի է՝ մէկն եմ ծրագրի աշխատանքները իրականացնող-վերահսկողներից: Անցեալ տարի այցելել էի երեւանեան մի դպրոց՝ տեսչական պարտականութիւններս կատարելու: Դպրոցի մուտքի մօտ կանգնած էր մի տղամարդ. տնօրէնն էր կամ փոխ-տնօրէնը: Ներկայացայ եւ թոյլտուութիւն խնդրեցի՝ դասին ներկայ գտնուելու: Ժպիտով ասաց. «Հա՛, գրաբարի դասն էք լսելու»: Նոյնպէս ժպիտով ուղղեցի. «Գրաբարի չէ, արեւմտահայերէնի՛»: «Նոյնը չէ՞», զարմացաւ մարդը:

Ես չեմ ճշդել՝ ինչ մասնագիտութիւն ունէր նա, սակայն անյարմար եմ զգում այն բոլոր հայ մարդկանց, մասնաւորապէս մտաւորականների փոխարէն, ովքեր չեն տարբերում իրենց մայրենի լեզուի գրաբարն ու աշխարհաբարը...

ՀԱՅՐ ՀԱՅԵՐԷՆ Է ՍՈՎՈՐՈՒՄ ԿԱՄ ԵՒՍ ՄԻ ՔԱՆԻ ԿԱԹԻԼ ՍԷՐ

Բայրոնեան ջանասէր խանդավառութեամբ սովորում եմ արեւմտահայերէն: Հայր հայերէն է սովորում. բախտի չար կատակ: Մէջս անյազ սէր է ծնուել առ լեզուիս՝ Մեսրոպից աւանդուածը: Արագութեամբ սովորեցի դասական ուղղագրութիւնը, իսկ մեր լեզուի արեւմտահայ տարբերակի խոր շերտերի իւրացումը շարունակում է: Նոյնիսկ մէկ կեանքը բաւական չէ, որ խորութեամբ ուսումնասիրենք հայերէնը. որքան շատ ենք սովորում, այնքան տեսնում ենք՝ զենոնեան «գիտելիքի օղակը» ինչքան աւելի է շփւում հայերէնի իմացութեան անսահման տարածութեանը...: Ինձ հարցնում են յաճախ՝ ինչո՞ւ ես գրում դասական ուղղագրութեամբ: Ես նախ ժպտում եմ՝ ասելով. «Որովհետեւ շատ գեղեցիկ է դասական ուղղագրութեամբ գրութիւնը, աչքիս համար հաճելի է»: Յետոյ շարունակում եմ. «Որովհետեւ սիրում եմ. սէրը չի մեկնաբանում»: Ընդունուած է յաճախ մէկին «վիրաւորելու» համար ասել. «Այսինչը սիրողական մակարդակի մասնագէտ է...»: Իսկ ես չեմ թաքցնում, որ ամէն ինչ սկսուեց սիրուց: Գիտական կոչումներ չունեմ, դափնիների երբեւէ չեմ արժանացել. սովորական մանկավարժ եմ եւ անհունօրէն սիրում եմ իմ լեզուն, ուզում եմ, որ բոլորը սիրեն...: Ես հպարտ եմ իմ սիրոյ համար, իսկ գործընկերներիցս շատերը խոստովանում են, որ իմ խորին հետաքրքրութիւնը արեւմտահայերէնի հանդէպ մասնագիտական առաւելութիւն է: Ստացւում է՝ ոչ միայն «ամբողջական հայ» եմ դարձել, այլեւ ամբողջանում եմ նաեւ որպէս մասնագէտ: Շատ ուրախացայ վերջերս, երբ հայերէնի մի տարեց ուսուցչուհի, որի հետ տարիներ առաջ աշխատել եմ դպրոցում, ասաց. «Շատ ուրախ եմ, որ գործածում ես դասական ուղղագրութիւնը. դրանով իմ աչքում տարբերում ես միւս երիտասարդ մասնագէտներից...»: Աւագ ընկերոջս քաջալերանքից շատ ոգեւորուեցի. երանի՛ բոլորս այսպէս մտածենք եւ գործենք. ախր ամէն ինչ այնքան դիւրին է, ինչո՞ւ ենք «վախենում» սեփական լեզուից: Առաջին հեր-

Թին մենք՝ հայերեն դասալսողներս, պիտի սովորենք եւ տարածենք: Այս առումով ուզում եմ նշել, որ շատ-շատ հայերենի ուսուցիչներ, Հիլդա Գալֆայեան-Փանոսեանի եւ Սուրեն Դանիէլեանի ջանքերով վերապատրաստուելով «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնում», սիրով արեւմտահայերեն են դասալսողել եւ շարունակում են դասալսողել Հայաստանի եւ Արցախի դպրոցներում:

Միայն պէտք է տեսնել աշակերտների խանդավառութիւնը, լսել նրանց բազմաթիւ «ինչու»ները...

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԷՆԸ ԼԵՋՈՒ ԵՒ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳՈՒ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆ

Յաճախ զարմանում եմ, երբ լսում եմ՝ ինչպէս են ոմանք սառնօրէն արձանագրում, թէ մեր ժողովրդի երկու հատուածներն ունեն հոգեբանութեան տարբերութիւններ: Լեզուամտածողութեան տարբերութիւններ իսկապէս կան, բայց ի՞նչ ասել է՝ հոգեբանութեան տարբերութիւն, եթէ բոլորիս հոգիները նոյն բաղադրութիւնն ունեն...

Նորութիւն չէ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի՝ լեզուամտածողութեան տարբերութիւններ ունենալու մասին խօսելը: Այո, արեւելահայ մարդը չի մտածում արեւմտահայերէն (եւ հակառակը): Մենք սովորութիւն ունենք հայերէնի հետ կապուած հարցեր քննարկելիս անպայման վկայակոչել այլ լեզուներ՝ անգլերէն, ֆրանսերէն...: Հարցնում են՝ իսկ ինչպէս ենք անգլերէն խօսում առանց անգլերէն մտածելու: Յիշենք՝ հայերէնը անգլերէն կամ ֆրանսերէն չէ՝: Հայերէնը ուսումնասիրման առումով բարդ լեզու է: Եւ եթէ եւրոպական շատ լեզուներ կարելի է սովորել ուսումնական ձեռնարկների օգնութեամբ, նոյնիսկ ինքնուրոյն, ապա հայերէնը (երկու ճիւղերն էլ) սոսկ գրքերի օգնութեամբ հնարաւոր չէ իւրացնել: Կոնկրետ արեւմտահայերէնի դէպքում ասենք, որ անգամ արեւելահայը առանց իր արեւմտահայ ազգակցի հետ կենդանի շփման չի կարող տիրապետել խօսքի այն նրբութիւններին, որոնք առկայ են արեւմտահայ չքնաղ լեզուում: Ես սկզբունքօրէն չեմ գործածում արեւմտահայ բանաւոր խօսքը. չեմ ուզում աղաւաղել Մեծասքանչը: Կը խօսեմ այն ժամանակ, երբ կը զգամ, որ մտածում եմ արեւմտահայերէն: Հասկանալի է, որ խօսքը բաղաձայնների առողանութեան մասին չէ (պարզ խոլ/ձայնեղ, ձայնեղ/չնչեղ խոլ. արեւելահայերէնը կարողացել է պահպանել եռաշարք բաղաձայնների արտասանական ճշգրտութիւնը. ափսո՛ս, որ ուղղադրութիւնն է աղաւաղուել): Փորձում եմ շփուել Սփիւռքից Հայաստան ժամանող մեր հայրենակիցներից ոմանց հետ, սակայն, չգիտեմ ինչու, Հայաստան մտնելուն պէս նրանք սկսում են խօսել արեւելահայերէն. խօսքը դառնում է արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի տխուր խառնուրդ...: Նման դէպքերում Վարուժանի, Ռուբէն Սեւակի, Միամանթոյի, Օշականի, Համաստեղի, Շահնուրի, Իշխանի, Շուշանեանի, Մնձուրու, մեր շքեղ հայերէնը ... սեղմւում է հոգուս պատերին...

Երկուսն էլ ինքնատիպ են եւ առանձնապատուկ, զարգացել են տարբեր բար-

բառային հիմքերի վրայ. կարծում եմ՝ նրանցից իւրաքանչիւրը պէտք է սիրել, ճանաչել, մշակել ու յղկել իրեն յատուկ առանձնութեան մէջ, անխա՛ռն:

Բայց չմոռանանք մեր հոգիների նո՛յն բաղադրութեան մասին:

ՄԵՁ ԲԻՒՐ ԴԱՐԵՐ ՀԱՅ Է ՊԱՀԵԼ ԿԱՄ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Օտար երկինքների տակ, պետականութեան բացակայութեան պայմաններում մի կերպ գոյատեւող արեւմտահայերէնը ոչ միայն չի զարգանում, այլեւ վտանգի մէջ է, կարօտ մեր օգնութեանը: Սրտի ցաւով պէտք է արձանագրենք, որ հայերէնը որոշ գաղթօջախներում հայ մարդու համար արդէն դարձել է ... օտար լեզու...: Լա՛ւ, Սփիւռքի հայ մանուկը այլեւս չի ուզում խօսել, գրել, սովորել հայերէն (սա ասում եմ խորի՛ն մորմոքով), ուրեմն պատրաստուենք պատմութեան վիճե՞րը նետել մեր մշակութային հզօր արժէքներից մէկը՝ արեւմտահայ լեզուն: Ո՛չ, արեւմտահայերէնը պիտի իր զարգացումն ունենայ Հայաստանի Հանրապետութիւնում: Հայաստանի Հանրապետութիւնը պարտաւոր է պետական մօտեցում ցոյց տալ եւ սատարել նրան: Ո՞րն է ՊԵՏԱԿԱՆ մօտեցումը: Առայժմ ես դա ընկալում եմ այսպէս՝

1) Պիտի ստեղծուի լեզուաբանական համապատասխան մարմին: Արեւմտահայերէնի կանոնակարգումը պէտք է յանձնել մասնագէտ-լեզուաբանների հոգածութեանը, ովքեր այն կը յղկեն, կը մշակեն այն նոյն սիրով, ինչպէս վարւում են արեւելահայերէնի հետ: Ոչ միայն Հայաստանում, այլեւ Սփիւռքի տարբեր գաղթօջախներում կան տաղանդաւոր հայ լեզուաբաններ. կարծում եմ՝ միասնաբար կարող են լուծել այս խնդիրը:

2) Հայաստանի Հանրապետութեան հանրակրթական դպրոցներում պարտադիր դասընթացների շարքում պէտք է ներառել արեւմտահայ լեզուի ուսումնասիրութիւնը. սա՝ լեզուն՝ որպէս կորսուող մշակութային արժէք Հայրենիքում պահպանելու եւ սերնդէ-սերունդ փոխանցելու նպատակով: Հայաստանի կրթօջախներում սովորող դպրոցականը պէ՛տք է կարողանայ բնագրով կարդալ արեւմտահայ եւ սփիւռքահայ գրողների գործերը: Հայաստանում եւ Արցախում ապրող պատանին ու պարմանուհին ուզում են նաեւ հաղորդակցուել Սփիւռքի իրենց հասակակիցների հետ, ուզում են նամակներ գրել նրանց ու պատասխաններ ստանալ:

3) Որպէսզի դպրոցականը սովորի, նրան ուսուցիչ է հարկաւոր. պէտք է նպաստել հայերէնի ուսուցիչների արեւմտահայագիտական համընդհանուր վերապատրաստութեանը:

Ես խորին համոզում ունեմ՝ ՀՀ իշխանութիւնները դէմ չեն, մնում է լեզուաբան-մասնագէտների հաւանութիւնը, եւ հարցի հանդէպ պետութիւնը հոգածութիւն կը ցուցաբերի...: Չարժի այլեւս պատրանքներ ստեղծել, գործել է հարկաւոր...: Լեզուի հարցում մոռանանք, խնդրում եմ, «չոուների» քաղաքականութիւնը, որը մերը չէ եւ չգիտես ինչ ճանապարհներով է սողոսկել մեր երկիր: Մերը գնահատենք ... ուրիշինը երկրպագելու փոխարէն:

Մեր ժողովուրդը «մէկ ազգ» կը դառնայ այն պահին, երբ միասնական դառնայ լեզուի երկու ճիւղաւորումներն էլ ՄԵՐԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԳԻՏԱԿՑՈՒՄԸ:

Լեզուի պահպանութիւնը գոյապահպանութիւն է եւ ազգապահպանութիւն:

ԲԱՆԱՍԷՐՆԵՐ, ԲՆԱԳՐՈՎ ԸՆԹԵՐՅԷՔ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ

Երբ տարիներ առաջ ուզում էի գրականութիւն ուսումնասիրել առաւել խորութեամբ եւ այդ կապակցութեամբ դիմեցի մանկավարժական համալսարանի իմ դասախօսներից մէկին, նա հարցրեց, թէ ո՞ր հայ գրողի ստեղծագործութեան քննութեամբ կ'ուզենայի զբաղուել: Անմիջապէս ասացի՝ Սարոյեան, թէ՛ եւ գիտէի, որ Սարոյեանն ամերիկեան գրական ընտանիքի անդամ է: Նա ասաց. «Դու անգլերէն այնքան լաւ չգիտես, որ Սարոյեանի ստեղծագործութիւնները կարդաս բնագրով: Գրողի գործը գիտականօրէն քննելու համար հարկաւոր է անպայման բնագրի՛ն ծանօթ լինել, ո՛չ թարգմանութեանը...»: Ես այսօր գիտեմ, ճանաչում եմ բազմաթիւ բանասէրների, ովքեր ատենախօսութիւններ են պաշտպանում, գիտական յօդուածներ են հրատարակում արեւմտահայ եւ սփիւռքահայ գրողների ստեղծագործութիւնների վերաբերեալ. նրանցից շատերը չգիտեն արեւմտահայ լեզուն եւ դասական ուղղագրութիւնը: Օգտւում են հիմնականում Խորհրդային Հայաստանում լոյս տեսած գրքերից, եւ աշխատանքների մէջ առկայ մէջբերումներում տեղ են գտնում ուղղագրական բազմաթիւ վրիպակներ:

Յարգելի՛ բանասէրներ, համոզուած եմ, որ ձեզնից շատերը բնագրով կարդացել են Շեքսպիր եւ Բալզակ, Հայնէ եւ Պուշկին. խնդրում եմ, գոնէ դո՛ւք արեւմտահայ եւ սփիւռքահայ գրողների ստեղծագործութիւններն ուսումնասիրելուց առաջ սովորէք արեւմտահայերէն եւ ծանօթացէք դասական ուղղագրութեանը, մեր գրողների երկերը կարդացէք բնագրո՛վ:

ՓՐԿԵԼ ՎՏԱՆԳՈՒԱԾ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Մասնագէտները շատ լաւ գիտեն՝ «Խորհրդային» ուղղագրութեան հետեւանքով որքա՛ն բառեր կորցրել են իրենց ստուգաբանութիւնը եւ բառից վերածուել սոսկ պատկերի, որքան խաթարումներ, չեղումներ եւ անհարթութիւններ են առաջացել արեւելահայերէնում, չեն գիտակցւում շատ բառերի արմատները. բաւական է նշել համանուն բառերի հսկայական բանակի ծնունդը...: Լա՛ւ, եկէք շատ չքարկոծենք Խորհրդային ուղղագրական դեկրետները եւ չմեղանչենք ճշմարտութեան դէմ. ուղղագրական փոփոխութիւնների հարցը իսկապէս լրջօրէն բարձրացուել է տակաւին 19րդ դարի կէսերին: Մեր լեզուի եւ ուղղագրութեան շուրջ ստեղծուած տարաձայնութիւնների «պատմութիւնը» չէր հիւսուի, եթէ ճակատագիրը մեզ այդքա՛ն վտանգների չենթարկէր: Հաւանաբար, եթէ մենք երջանիկ լինէինք մշտապէս պետականութիւն ունենալու աստիճան, մեզ երբեւէ չբաժանէին մասերի, այսօր այս խնդիրները չէին լինի: Մեր լեզուն ու գրերը միշտ նեցուկ են եղել մեզ, սակայն անիշխանութեան պայմաններում մատնուել են քաոսի: 12րդ դարից սկսած՝ քաոսը խորանում է մեր լեզուի մէջ: Եւ չկար որեւէ ուժ, որ կարողանար այդ վիճակը կանոնակար-

գել...

Ինչեւէ, եղածը եղած է, եւ հարկաւոր չէ լուտանքներ թափել պատմութեան գլխին. դրա փոխարէն պէտք է ելք գտնել: Լեզուաբաններից շատերը զարմանում են. «...Ոչ մի հասարակական խնդրի լուծում այդպէս սուրիների վրայ չընդունուեց, ինչպէս ուղղագրական ռեֆորմի հարցը» եւ անվերջ յիշատակում են եւրոպական տարբեր լեզուների «կեանքում» եղած համանման «բարեփոխումները»: Պէտք է համեմատել եւրոպական լեզուների եւ հայերէնի խնդիրները: Երեւի ողջ աշխարհում ոչ ոք չի կարող մատնացոյց անել մէկ այլ լեզու, որ այդքան բախտորոշ նշանակութիւն ունեցած լինի իրեն ստեղծող ժողովրդի համար: Այդ ժողովուրդները ազգային մտահոգութիւններ չունեն, օտարներին ձուլուելու վտանգ չունեն...: Եւրոպական ո՞ր ազգի բանաստեղծը այսպէս կը գրէր. «Իրենց հոգիին ամբողջականութիւնը պահող ազգեր պէտք չունին կրթելու զաւակը այնպէս, ինչպէս մենք դեռ պարտական ենք ընել. անոնք ամէնէն աւելի կը ձգտին մանուկին մէջ փրկել Մարդը, իսկ մենք Մարդը փրկելու համար պարտաւոր ենք փրկել անոր մէջ վտանգուած Հայութիւնը, քանի որ նախ եւ առաջ ատոր պէտք ունինք...» (Դանիէլ Վարուժան, «Վէրքը կ'արիւնի», յօդուած):

Եւրոպացիներեք վտանգի պահին չի ապաւինել իր մշակոյթին կամ գրերին: Իսկ մեզ մանկութիւնից սովորեցրել են՝ Մաշտոցը տեսաւ երկրի քաղաքական ծանր կացութիւնը եւ զգաց գրի ստեղծման անհրաժեշտութիւնը...

ԴԱՍԱԿԱՆ ԱՁԳ ԵՆՔ՝ ԱՌԱՆՅ ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ

Հետաքրքիր ժողովուրդ ենք. բողոքում ենք ընկերային վիճակից, հազար ու մէկ չլուծուած կենցաղային խնդիրներից, բայց երբ խօսք է բացւում ազգի կենսունակութիւնից կամ գոյատեւման խորհրդից, անպայման լայնօրէն ժպտում ենք եւ մեզ յատուկ սիրելի սնապարծութեամբ ասում. «Մենք հզօր մշակոյթ ունեցող ժողովուրդ ենք, թրի դէմ գրի՛չ ենք ճօճել...: Եւ կանգո՛ւն ենք...»: Անպայման յիշատակում ենք ռազմատենչ ու հզօր բանակներ ունեցող Ասորեստանին, որը ջնջուել է աշխարհի երեսից, որովհետեւ այդպէս էլ չհասկացաւ, որ գրչի դէմ անզօր են բոլոր թրերը...: Մոռացայ ասել, խօսակցութեան վերջում էլ Արեւմտեան Հայաստանի ու Արցախի հողերն ենք պահանջում, բայց ... նեղութեան մէջ գտնուող մեր ոսկեղնիկ արեւմտահայերէնը չենք փայփայում, չենք գուրգուրում: Մեզ դասական ազգ ենք համարում, բայց ... չենք ընդունում մեր դասական ուղղագրութիւնը: Տօնում ենք Հայ Գրերի գիւտի 1600ամեակը, բայց ... չենք ուզում մեր գրերն իրենց անուններով կոչել՝ այլ, բեն, գիւմ...: Այլեւս չեմ ուզում խօսել...: Լուում եմ:

ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ

Եւ ես, ահաւասիկ, հին գրերով այս մեր

Իմ տողերը կոփող մի պոետ»,

Ե. ՉԱՐԵՆՑ

Զարմանալի է, բայց յաճախ են մարդիկ չփոթում արեւմտահայ լեզուն դասական ուղղագրութեան հետ: Նրանք, ովքեր չեն չփոթում, երբեմն կասկածներ են յայտնում՝ դասական ուղղագրութիւնը կարո՞ղ է յարմարուել արեւելահայերէնին: Թումանեանը, Տէրեանը, Զարենցը արեւելահայեր չէի՞ն, չէի՞ն գրում դասական ուղղագրութեամբ: Որքան էլ երկու լեզուաճիւղերի բարբառային հիմքերը տարբեր լինեն, նրանք արմատներով խորանում են դէպի մի ընդհանուր մայր լեզու:

Ի հարկէ, դասական ուղղագրութիւնն էլ կարօտ է շտկումների: Սփիւռքի պայմաններում այն երբեմն զարգացել է տարերայնօրէն՝ յաճախ ուղղագրական տարբերակներ առաջացնելով: Այս առումով արեւելահայերէնի «բախտը բերել է», քանի որ զարգացում է ապրել եւ ապրում է Հայոց պետականութեան պայմաններում, կայ Լեզուաբանական մարմին, որն զբաղւում է լեզուի կանոնակարգման հարցերով:

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ
ԿԱՄ ՄԻԱՅՆ ՄԻՐՏՆ Է ՍՐԱՏԵՍ...**

Յիշո՞ւմ էք Դեմիրճեանի յայտնի պատմուածքը: Զուարթ պատանու «Գիրք ծաղկանցը» այրել չկարողացան անգամ օտարազգի զինուորները, գիրքը տարիներով շրջում էր, ձեռքից ձեռք անցնում եւ, վերջապէս, հանգրուան գտաւ Յուսիկի մօտ. երիտասարդը փոխարէնը վճարել էր ապրուստի վերջին միջոցները...: Էքզիլայէրիի հերոսը կ'ասէր. «Միայն սիրտն է սրատես...»: Մենք մեր սրտի աչքերով կարողանում ենք տեսնել՝ ո՞րն է մերը...: Ովքեր 90ականների սկզբին ապրել են Հայաստանում, կը յիշեն՝ անկախութեան բերկրանքից ծընւած ի՛նչ աւիւնով ասպարէզից հեռացրինք այն բոլոր գրքերը, որոնց ամէն մի տողից ժպտում էին Լենինը, Մարքսը, Էնգելսը, եւ որովհետեւ յոգնել էինք Կոմկուսի ուրուականին երկրպագելուց՝ այդ գրքերով ... տաքանում էինք. գրքի պաշտամունք ունեցող մեր ժողովուրդը անզուսպ հրճուանքով վառարանների երախներին յանձնեց 70 տարուայ գրական արտադրանքի առիւծի բաժինը: Աւելացնե՞մ, որ հենց այսօր էլ Մարքսի եւ Էնգելսի մանիֆեստից մէջբերումներ ունեցող գրքերը, գիտական կոմունիզմի «փառահեղ» հատորները համապատասխան տեղերում յանձնւում են որպէս թղթի թափօն: Մէկ քիլոկրամ գրքի արժէքը 20 կամ 25 դրամ է...: Կարողացանք, չէ՞, հարիւրաւոր գրքերից էլ, մասնաւորապէս դասագրքերից շատ հեշտութեամբ եւ արագօրէն հանել այն նախադասութիւնները կամ պարբերութիւնները, որոնք եօթ տասնամեակ անընդմէջ բանտել էին մեր ուղեղները...: Կարողացանք, որովհետեւ մերը չէին. օտար էին եւ օտարի՛նն էին...

Իսկ ինչո՞ւ Մատենադարանի ձեռագրերը չենք յանձնել որպէս ... կաշուի թափօն: Որովհետեւ մեր սիրտը աչքեր ունի...: Ի դէպ, նոյն 90ականների սկզբին Հ.Յ.Դաշնակցութիւնը, մեր միւս կուսակցութիւնները Մեսրոպեան ուղղագրութեամբ թերթեր էին հրատարակում Հայաստանում: Այսօր նոյնպէս Նրեւանում գրքեր եւ տարբեր նիւթեր են հրատարակում ազգային ուղ-

ղազրույթեամբ:

Գ. Սարգսեանը 1922 եւ 1940 թուականների ուղղադրական «բարեփոխումները» համարում է «պատմական անհրաժեշտութիւն»: Ընդունենք, որ այդպէս **ՀՈԳԻՆԵՐԻ ՄԷՋ ԿԱՄՔԸ ՓՆՏՈՒԵԼՈՒ ԿՈՉ** մտածել, որ այսօրուայ «պատմական անհրաժեշտութիւնը» պարտադրում է ... վերադարձնել մերը՝ ազգային դասական ուղղադրութիւնը:

Մեր վտարանդի գրերն այսօր դարձել են հայութեան երկու հատուածներն իրարից բաժանող անջրպետ...: Ուզում եմ բարձրաձայն ասել, որ Հայաստանում դասական ուղղադրութեան դէմ մղուող պայքար չկայ, ինչպէս յաճախ լսում ենք. անտարբերութիւն եւ անպտուղ քննարկումներ գուցէ եղել են...: Եւ կան մարդիկ, ովքեր «գիտական» ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ են շարադրում՝ փորձելով լարուածութիւն առաջացնել եւ վէճեր սերմանել այս հարցի առնչութեամբ: Ինչո՞ւ: Չէ՞ որ կարելի է լեզուն դուրս բերել անիմաստ հարցերի ու անմիտ գաղափարների թնջուկից՝ նրա մասին խորհելով սիրող որդու նման, զերծ մնալով հարցին քաղաքական պիտակներ տալուց:

Պարզապէս եթէ այս հարցում միասնական դիրքորոշում չցուցաբերենք, աւամայ կը դառնանք դաշնակիցն ու յանցակիցը մեր ա՛յն հակառակորդների, ովքեր մշտապէս օգտուել են մեր թուլութիւնից եւ անմիաբանութիւնից, որոնց յաջողուել է երկատել մեզ: Կը դառնանք համախոհ մեր դաժան կենսագրութեան...

Սխալները պէտք է ուղղել. այն, ինչ դարերով թրծուել է ժողովրդական մտածողութեան հնոցում, չի կարող սխալ լինել...: Ես ուրախութեամբ ուզում եմ նշել, որ մեր Հայրենիքում շատ են նաեւ այն մարդիկ, ովքեր ձգտում են դասական ուղղադրութեան հարցին իսկապէս արդարացի լուծում տալ: Սակայն **Ի՞ՆՉ ԱՆԵԼ. ՕՐՈՒԱՅ ԹԵԼԱԴՐԱՆՔԸ** կոյթի լիակատար մերձեցումը, լեզուի մէջ փնտռելու ... Կամքը: Իսկ Կամքը կա՛յ բոլորիս հոգիներում, հաւատացէ՛ք...

չորս ծագերուն,

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս

Ուր կը մտնէ ամէն հայ իբրեւ տանտէր
հարազատ...

Մ Ո Ւ Հ Ե Ղ

ԻՇԽԱՆ

Այնքան էլ դժուար չէ դասական ուղղադրութեան՝ Հայրենիք վերադարձի ճամբան, ինչպէս շատերը պատկերացնում են: Նախ հարկաւոր է վերացնել փոփոխութեան դէպքում հայրենի ժողովրդի՝ անգրագէտ մնալու «վախի» բար-

դոյթը: 1922 թուականին համատարած անգրագիտութեան մէջ ապրող հայ ժողովուրդը (ասում են՝ այդ ժամանակաշրջանում Հայաստանի բնակչութեան սոսկ 17 տոկոսն էր գրագէտ) չվախեցաւ բարեփոխումներից, կարողացաւ յաղթահարել գործընթացի ծանրութիւնը: Պէտք է նախապէս ստեղծել որեւէ հաստատութիւն, որը կարող է տնօրինել փոփոխութիւնների գործընթացը: Հիմա «յանդգնօրէն» ասում եմ իմ եւ իմ սերնդակից բազմաթիւ մտաւորականներից շատերի անունից՝ պէտք է փոփոխել ՀՀ Լեզուի մասին Օրէնքը՝ ՀՀ պետական լեզուն արեւելահայերէնն է, իսկ ուղղագրութիւնը Ազգային ուղղագրութիւնն է: Բոլորովին միտք չունեմ ասելու, թէ անմիջապէս պէտք է դէն նետել «խորհրդային» կոչուած ուղղագրութիւնը. այս ամէնը կարելի է կատարել աստիճանական ձեւով՝ ընդգրկելով հանրային կեանքի բոլոր բնագաւառները: Դասական ուղղագրութիւնը պէտք է հասցնել ժողովրդին, պատրաստել մասնագէտներ, հրատարակել պարբերականներ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկ-

ՄԻ ՀՐԱՇԱԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Վերադառնալով ազգային ուղղագրութեանը՝ աշխարհին կ'ապացուցենք ոչ միայն մեր ազգային եւ մշակութային միասնութիւնը, այլեւ քաղաքական հզօրութիւնը:

Ինձ թւում է՝ ընդհուպ մօտեցել ենք այս օրուան:

Այդ դասն ինձ համար չէր: Ես պատահական այցելու էի: Լսել էի Նիւ Եորքից ժամանած մեր հայրենակցի մասին, բարեպատեհ առիթ եղաւ ներկայ գտնուել նրա մի դասախօսութեանը:

Հրանտ Մարգարեանի ձայնը մինչեւ հիմա ունկերումս է: Նա իր ունկնդրին տարաւ հայոց պատմութեան խորքերը, հասցրեց Բարի Երուանդական Արտաշէսին, պատմեց, թէ բազում դարեր թշնամու ոտքի տակ տրորուած, անգթօրէն բզբտուած հինաւուրց այս երկիրը իր ստեղծած գրերով ինչպէ՛ս կարեցկարկատեց-միացրեց մի հասարակ դպիր՝ Մեսրոպ անուամբ:

Ունկնդիրները աշխարհի տարբեր ծագերից Հայրենիք եկած ուսանողներ են, ուզում են իրենց ակունքներին հաղորդակից դառնալ: Հրանտ Մարգարեանը պատմում է, որ դեռ գրերի գիւտից շատ առաջ Արտաշէսի Հայաստանում հսկայական մի տարածքի վրայ ապրող մարդիկ միմեանց հետ հայերէն էին խօսում. «Ի՛նչ հպարտութիւն, իմ լեզուն՝ վս կը խօսէին», - ասում է հպարտութեամբ, եւ այդ զգացումը կարծես լցնել է ուզում պատանի մարդկանց երակների մէջ, ովքեր այստեղ են, որովհետեւ հայ են...

Ես գիտեմ այն ամէնը, ինչ ասում է նա՝ ե՛ւ գրերի գիւտին նախորդող ու յաջորդող թուականների քաղաքական կացութիւնը, ե՛ւ Մեսրոպ Սրբի կենսագրութիւնը, ե՛ւ խոնարհւում եմ արքայ Վռամշապուհի ու Սահակ Պարթեւի առաջ նոյնչափ պատկառանքով, ինչպէս Մեսրոպի առաջ: Մանկութիւնից լսել եմ, սովորել, այսօր ինքս եմ մեր մշակոյթի՝ սխրանքներով լեցուն «առասպելը» պատմում սաներիս: Բայց կարծես մեր յաղթանակների՝ այս մարդու շուրթե-

րից հնչող պատմութիւնը նոր է ինձ համար, այնպէս է խօսում, կարծես գիր-
գինուորների բանակի հրամանատար Հացեկացցին ներկայ է այս փոքրիկ դահ-
լիճում, նստած է մեր կողքին...

Հրանտ Մարգարեանն իր կերպարով իմ մտապատկերում մարմնաւորեց
Սփիւռքում ապրող հայ գրագէտին: Գրագէտ՝ բառի լայնածաւալ իմաստով:
Գրող, գրամատուրգ, բանաստեղծ, մանկավարժ, հայագէտ, քիմիկոս, ազգա-

ԽՆԵՆԹԻ ԵՐԱՋԸ ԿԱՄ ՀՐԱՇՔՆԵՐ ԱՐԱՐՈՂ ՀԱՅԸ

նի քանի որ Սփիւռ-
քեան հնարաւոր ասպարէզներում, սեփական վերելքի մէջ աւելի՜ հոգալ միւս-
ների քայլերը շուայլ սիրով...: Դժուար է, բայց նաեւ շատ դիւրին՝ լինել Մարդ,
որը մշտապէս հայ կեանքի յորձանուտում է: Մարդ, որի հոգին համազգային
է՝ Հայաստանում եւ Սփիւռքում ապրող բոլոր հայրենակիցների կողքին...

«Կարծես դարերը մի քանի շրջան առաջ էին գնացել, եւ նա տեսնում էր Հա-
յաստանը, աւերակ եւ անապատ դարձած Հայաստանը այժմ բոլորովին կեր-
պարանափոխուած, բոլորովին վերանորոգուած: Այդ ի՞նչ հրաշալի փոփոխու-
թիւն էր: Մի՞թէ կորած դրախտը կրկին վերադարձել էր այդ երկրի վրայ...»:
«Ահա այդպէս, բարեկամ,- խօսեց պարոն Սալմանը՝ չթողնելով Վարդանի աջը
իր ձեռքից,- մենք դարձեալ տեսնուում ենք միմեանց հետ ուղիղ երկու հարիւր
տարուց յետոյ... Բաւական երկար ժամանակ է...: Այս երկու դարերի ընթաց-
քում մեծ փոփոխութիւններ եղան մեր երկրում...: Յիշո՞ւմ ես, Վարդան, մի
անգամ քեզ ասում էի, թէ Հայաստանը մարդկութեան տղայական հասակի
օրօրոցն է եղել, նրա անմեղութեան ժամանակների դրախտն է եղել, բայց մի օր
կը դառնայ նրա այրական հասակի, նրա զարգացման ժամանակների դրախտը:
Այժմ բոլորը կատարուեցաւ: Այժմ հայ մարդու ապրուստը խիստ ապահով, ու-
րախ ու խաղաղ է հայրենի հողի վրայ: Բայց եթէ գիտենայիր, թէ որքա՛ն աշ-
խատեցինք մենք, մինչեւ նրան այս վիճակին կարողացանք հասցնել ... շա՛տ աշ-
խատեցինք ... այս երկու հարիւր տարուայ ընթացքում հազարաւոր փորձանք-
ների միջից անցանք ... արեան եւ առատ քրտինքի գնով գնեցինք մեր հանգրս-
տութիւնը...»: ԲաՖֆին մեր պատմութեան մեծագոյն գիտակ տեսանողն է,
մարգարէն ու ամենամեծ իրապաշտը. ինչո՞ւ ենք նրան համարում վիպա-
պաշտ, այն էլ՝ հայկական ռոմանտիզմի հայրը: Չկատարուե՞ց նրա Խենթի
երազը, չխորտակուե՞ց տարիների բռնութիւնը: Մարմին չառա՞ւ հայի դարա-
ւոր իղձը. տասնամեակներ շարունակ անարգուած Եռագոյնը այսօր ծածան-
ւո՞ւմ է Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան շէնքի ճակատին:
Մի՞թէ այսօր Խենթի երազի Հայաստանում բոլորս մէկ բռնեցք չենք դար-
ձել...: Մի բան է մնում մեզ՝ արդար լինենք սեփական արժէքների հանդէպ...

Հրաշք լինէր, չիմանայինք՝ ինչ է Սփիւռքը, աշխարհի բոլոր հայերով հա-
ւաքուէինք Հայաստանում՝ մայր յարկի տակ, ամէն երեկոյ աշխարհի բոլոր
հայերով հրապարակի կենտրոնում հսկայակաաաաա՛ն խարոյկ վառէինք, տա-
քանայինք...: Մե՛ծ խարոյկ վառէինք, բոլորով նստէինք շուրջը...: Որքա՛ն ու-

ԵՒ ՎԵՐՋՈՒՄ...

Ժամ կը կարողանայինք ՀԱՅԱՍՏԱՆՍՓԻԻՌՔԱՐՑԱԽը սգրական սխալ չհամարել...: Արթնանում եմ երջանիկ թմբորդեալ եւ ... սրբան եմ ուզում. թող խաղաղ լինեն աշխարհի բոլոր անկիւնները, որովհետեւ համոզուած եմ՝ չկայ մի կէտ, որտեղ «հայու բեկոր» չլինի: Խաղաղութիւն եմ ուզում, որովհետեւ այդ դասախօսութեան ժամանակ Հրանտ Մարգարեանն ասաց. «Եթէ հայը խաղաղ պայմաններու մէջ ըլլայ, հրաշքներ կը գործէ»:

Իմ խոհատեստրում գրառուած մտքերի այս պատառիկները «Բագին»ի էջերում լոյս աշխարհ եկան մի ինքնատիպ մարդու յորդոր-թելադրանք-օգնութեամբ: Պատահաբար (կամ թերեւս՝ անհրաժեշտաբար) համացանցի արտասովոր աշխարհում ծանօթացայ այդ հետաքրքիր ու վառ անհատականութեանը: Սեդա Գրիգորեան. զարմանահրաշ եւ քնքուշ տողերի հեղինակ բանաստեղծուհի, որի սիրտը ջերմօրէն տրոփում է հայրենեաց արժէքների սիրով: Մեր միջեւ ծայր առաւ մի սքանչելի նամակագրութիւն: Այդ գրութիւններում ես Հայաստանն եմ, Սեդան՝ Սփիւռքը: Ես Հայաստանի մայրական կանչող գիրկն եմ, Սեդան՝ Հայաստան-մօրը փարուելու վառուող յոյսը ... Սեդայի շնորհիւ առաւել պարզ ու յստակ տեսայ հայկական հոգու նո՛յն բաղադրութիւնը, հասկացայ, օ՜խք, Զ. Հ. Մահմանադրութեան մէջ՝ ըստած է, որ պետական լեզուն հայերէն է, անթափ: որ մենք հայերս, որտեղ էլ բնակուենք, ապրում ենք նոյն մտահոգութիւններ:



ՄԱՐՕ ԽԱՉԱՏՐԵԱՆ Ծնած է Հայաստանի Հանրապետութեան Իջեւան քաղաքը, 1973ին: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն հանրակրթական դպրոցներէն մէկուն մէջ, ապա բարձրագոյն բանասիրական կրթութիւն ստացած է Երեւանի Խ. Աբովեանի անուան հայկական մանկավարժական համալսարանի մէջ, զոր աւարտած է 1996ին:

Մասնագիտութեամբ մանկավարժ՝ դասաւանդած է ԵՊՀ Իջեւանի մասնաձիւղի հումանիտար գիտութիւններու բաժանմունքը, Երեւանի հանրակրթական դպրոցներ, ներկայիս կ'աշխատի «Եւրասիա» միջազգային համալսարանի մէջ՝ որպէս հայոց լեզուի դասախօս եւ «Եւրասիա» գիտամեթոտական հանդէսի փոխ խմբագիր: Նաեւ՝ կ'աշխատակցի Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփիւռք» Գիտաուսումնական Կեդրոնի եւ Փարիզի «Մաշտոց» Հայ Լեզուի Պաշտպանութեան Միութեան՝ հայրենի ուսուցիչներու արեւմտահայագիտական վերապատրաստութեան համատեղ ծրագրին:

Հայաստանի եւ Սփիւռքի մամուլի էջերուն ան հանդէս եկած է հայ գրականութեան եւ լեզուի հարցերուն առնչուող շարք մը յօդուածներով: Ել-նամակ՝ marx-ach@mail.ru, marxach@gmail.com

ըով, հաւատի նո՛յն աչքերով ենք տեսնում մեր Սէր-Հայրենիքի գալիքը...

ՄԱՐՑ ԽԱՉԱՏՐԵԱՆ
ԵՐԵՒԱՆ

**ԱԶԱՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ
(VERS LIBRE)
ԼԵԶՈՒԱԿԱՆ ՓՈԽՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅ ԶՆԱՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՍԷՉ**

Բանաստեղծութեան տաղաչափութիւնը պատմագեղարուեստական ժամանակաշրջանի մասին պատկերացում է տալիս աւելին, քան նրա գաղափարը, իմաստն ու բովանդակութիւնը: Այն զարգանում է մարդու հոգեւոր կառոյցի որակափոխմանը համընթաց՝ այդպիսով արտացոլելով հանրային-հոգեբանական, պատմական-հասարակական այս կամ այն միջավայրը: Ազատ բանաստեղծութիւնը չափածոյ խօսքի բնաշրջային զարգացման վերջին աստիճանն է, որն արտայայտում է տաղաչափութեան ձեւերի ու եղանակների գրեթէ ողջ փորձը: Հետեւաբար խօսել ազատ բանաստեղծութեան մասին՝ նշանակում է որոշ իմաստով անդրադառնալ նաեւ մարդկութեան ու քաղաքակրթութեան պատմութեանը, նրանց զարգացման օրինաչափութեանն ու տրամաբանութեանը: Իր զարգացման տարաստիճան դրսեւորումներով՝ ազատ բանաստեղծութիւնը, որպէս այդպիսին, ներքին համակարգման վերջնական փուլ մտաւ 20րդ դարում՝ կապուած գոյապաշտական մտածողութեան եւ նրանով պայմանաւորուած մարդկային գոյութեան վերացարկուած ներմբռնման հետ: Գոյութեան նոր իմաստի մէջ ներսեւեռուած մարդու հայեացքը կորցրել է իր յենակէտը, քայքայուել՝ տարրալուծուելով ինքնմբռնման ապաբովանդակ ոլորտներում: 20րդ դարի վերացապաշտական նկարիչներից մէկը մերժել է բնորդի՝ վերջինիս դիմանկարում աչքերի գոյնը փոխելու խնդրանքը՝ պատճառաբանելով, որ մոռացել է, թէ ... որտեղ է նկարել աչքերը: Ինչպէս գիտենք, աչքերն իրականացնում են արտաքին աշխարհի տեսողական գործառույթը, եւ երբ «տեղում չեն», նշանակում է՝ աշխարհը յաղթահարուած է. առարկան սպառել է իր տեղեկատուական նշանակութիւնը, եւ աչքերն արդէն այլ տարածութիւն են փնտռում՝ շարունակելու իրենց դերակատարութիւնը: Գեղարուեստական հարթութեան մէջ այդ տարածութիւնը ազատ բանաստեղծութեան ներքին համակարգն է, որտեղ վերակառուցուելով՝ լեզուն յաղթահարում է բանաստեղծական արտաքին ձեւերը, նրանց միջոցով նաեւ՝ տեղեկատուական այն ազդեակները, որոնք այլեւս հետաքրքրութիւն չեն ներկայացնում անհատականութեան հոգեւոր նոր բովանդակութեան համար: «Լեզուն այն իրականութիւնն է, - գրում է Հ. Էդոյեանը, - դէպի որն ուղղուած է բանաստեղծի մտաւոր եւ զգայական շարժումը, նրա բանաստեղծական ներքին նպատակը: Լեզուական կառուցուածքները գրականութեան, յատկապէս քնարերգութեան համար դառնում են գործողութիւնների եւ զարգացումների միակ հնարաւոր վայրը, որից դուրս բանաստեղծը ոչինչ չունի, քանի որ նրա ստեղծագործական ուժը

լեզուի ստեղծագործական ունակութիւնների մէջ է» /Հ. Էդոյեան, «Շարժում դէպի հաւասարակշռութիւն», «Ս. Խաչենց» հրատ. 2009թ., էջ 269/:

Գեղարուեստական տեղեկատուութիւնը, որն իր մէջ կրում է հեղինակի հոգեւոր նկարագիրը, աշխարհայեցման կերպն ու մտաւոր փորձը, գտնւում է նիւթի ներքին մակարդակում, որտեղ նրան կեանք են տալիս լեզուական յարաբերութիւններն իրենց տարբեր աստիճաններով՝ կապուած գեղարուեստական հնարքի եւ դրանով պայմանաւորուած լեզուական միաւորի բազմանշանակութեան հետ: Գեղարուեստական հնարքը բոլոր իրավիճակներում գործում է յանուն իրեն՝ այդ ընթացքում նիւթի մէջ տեղի ունեցող բոլոր տեղաշարժերը ներառելով իր կողմից սկսած խաղի մէջ, որի դրսեւորման տարբեր շերտերում էլ տեղեկատուութիւնը բացւում է իր նոր կողմերով: Այն, ինչ ձեռք է բերում տեղեկատուական ներկառուցուածքային յարաբերութիւններում՝ պայմանաւորուած է այդ խաղի բնոյթով, նրա կազմակերպման եղանակներով, որոնց արդիւնքի իրացման աստիճաններում էլ սկսւում է լեզուի շերտաւորման գործընթացը: Ազատ բանաստեղծութեան մէջ տեղեկատուութեան ծաւալման ուղղութիւնը կանխորոշում է գեղարուեստական հնարքը կամ, այլ կերպ ասած, հեղինակի ներքին շարժումը, որը «կազմակերպում է» լեզուական նշանակեալի կիրառական մեխանիզմները՝ փոխանցելով նրանց բառի պատմութեան իր ունեցած փորձը: Ի տարբերութիւն դասական տաղաչափութեան՝ ազատ բանաստեղծութիւնն ունի այդ փորձն իրացնելու առաւել մեծ հնարաւորութիւններ, քանի որ, զերծ լինելով բառի ինքնադրսեւորման արտաքին քմահաճոյքներից, իր մէջ նա վկայակոչում է նրա պատմութեան այն «դրուագները», որոնցում նա ենթարկուել է մաքրման (catharsis)՝ իր կառուցուածքային նշանակութեան մէջ պահպանելով այդ դրուագների իմաստն ու խորհուրդը: Գեղարուեստական հնարքի շնորհիւ բառը երբեմն դիմակաւորւում է՝ կապուած հեղինակի ներքին շարժման եւ նրանով պայմանաւորուած լեզուական իրավիճակի նպատակի եւ ուղղութեան հետ: Այս հանգամանքը շատ առաւել ակնյայտ է դառնում Յովհաննէս Գրիգորեանի ստեղծագործութեան մէջ, որը կառուցուած է լեզուական իրավիճակի արտաքին հարթութիւններում՝ նպատակ ունենալով բառիմաստային փոխանցումների արտաքին ձեւախեղմամբ այլընտրանք ապահովել նրանց նոր յարաբերութիւնների համար:

Յետոյ գալիս է Կիրակի օրուայ ամենահրաշալի պահը՝
 ես մաքուր սափրում եմ, հագնում եմ տօնական
 կոստիւմ եւ օղակն անցկացնելով վիզս, հրում եմ
 աթոռը ոտքերիս տակից եւ սկսում եմ խախտող ձօձուել
 առաստաղի կեռիկին ամրացուած պարանից, մինչեւ որ
 կիցս վերադառնում է խանութից, զգուշօրէն իջեցնում է
 ինձ, յարմար նստեցնում է աթոռին ու միասին
 անշտապ վայելում ենք
 մեր հրաշալի իրիկնային սուրճը,
 նայելով, թէ ինչպէս է մութը խտանում
 պատուհանից այն կողմ:

Իրենց տրուած ազատութեան շնորհիւ բառերն այստեղ գտնուում են միմեանց հետ հաղորդակցուելու այնպիսի եզրեր, որոնցում աղաւաղուում է իրենց պատմական-իմաստային նշանակութիւնը, առանց որոնց եւ նրանք ձեռք են բերում թեթեւ խաղի մէջ մտնելու հնարաւորութիւն՝ յանձն առնելով իրենցից ակնկալուող իրավիճակի կայացման պատասխանատուութիւնը:

Նիւթը երբեք չի կարող լինել ծաղրական. այն այդպիսին դարձնում է լեզուն՝ մտնելով փոխկապակցական այնպիսի յարաբերութիւնների մէջ, որոնցում ձեւաւորուած տեղեկատուութիւնը ձեւախեղում է նիւթի առարկայական մարմինը՝ այն դարձնելով արտաքին ընկալման համար անբնական, ինչն էլ զաւեշտ է յարուցում կամ պարզապէս դառնում ծիծաղելի: Միեւնոյն նիւթը լեզւական տարբեր յարաբերութիւններում ձեռք է բերում ինքնադրսեւորման տարբեր եղանակներ եւ, անկախ իր իմաստային նախնական նշանակութիւնից, մտնում այնպիսի հարթութիւն, որն ուղեւորում է այդ յարաբերութիւնների կողմից: Այս դէպքում նիւթը, չկարողանալով պահպանել իր կառուցուածքն ու բովանդակութիւնը, վերափոխւում է իրավիճակի՝ ակամայից մտնելով նիւթի վերջինիս ստանձնած դերակատարութեան մէջ:

Յովհ. Գրիգորեանի վերոյիշեալ հատուածում, օրինակ, նիւթն արդէն գործում է իրավիճակի ներսում, ուստի եւ, որպէս այդպիսին, տեղ չի զբաղեցնում կառուցուածքային համակարգում: Իրավիճակը նիւթից վերցրել է նրա այն մասը, որը նրան անհրաժեշտ էր՝ իրականացնելու գեղարուեստական հնարքի ծրագիրը, իսկ մնացած մասը նա դուրս է մղել նիւթից՝ որպէս աւելորդ հանգամանք: Նիւթի եւ իրավիճակի փոխյարաբերութեան բնոյթը պայմանաւորուած է հեղինակի հոգեկերտուածքով՝ կապուած գեղարուեստական հնարքի տիրապետման նրա ձիրքի եւ օժտուածութեան հետ, իսկ վերջիններիս իրացումը՝ լեզուական փոխհաղորդակցութեան բազմափլան համակարգումների: Այս տեսակէտից այլ հարթութիւն է տեղափոխւում Արտէմ Յարութիւնեանի բանաստեղծութիւնը՝ հիմնական դերակատարութիւնը վերապահելով նիւթին, որը եւ հիմք է հանդիսանում բանաստեղծի հոգեկերտուածքի եւ դրանով պայմանաւորուած լեզուական համակարգի իրացման համար:

Ես յոյս ունեի
պոեզիայով բարիացնել եւ ընտանի դարձնել
համալսարանի շուրջը պտտուող կիսավայրերի շներին,
բարիացնել սեւ տուֆէ շէնքերի մէջ աշխատող
բազալտահոգի բիրոկրատ հրէշներին
(որ կարողանում են գտնել-ամուսնանալ նրանց
դաւաձանող կանանց
եւ ունենալ հայրատեսաց երեխաներ),
բարիացնել զօրքի գամած-արձձէ դոփիւնը,
որ գնում էր որոշուած տեղում
արիւն ոթելու եւ յետոյ շտապ արդարանալու
ասուլիսի մաքուր սեղանների առաջ:

Նիւթն այստեղ յանձն է առել ինչպէս իրավիճակի, այնպէս էլ, առհասարակ, բառերի փոխյարաբերութիւններում նրանց վերաիմաստաւորման պատասխա-

նատուութիւնը: Այդ իսկ պատճառով բառերը մնացել են գամուած իրենց սկզբնական իմաստին ու նշանակութեանը, քանի որ նիւթից դուրս նրանց գոյութիւնը կարող էր երաշխաւորուել միմիայն իրավիճակում, որն էլ, տուեալ դէպքում, ներկայ է նիւթի որեւէ շերտում:

Լեզուամտածողութեան փակ համակարգն ազատ բանաստեղծութեան մէջ առաջադրում է խնդիրներ, որոնց լուծումը պայմանաւորուած է լեզուական նշանների ճշգրիտ փոխանցումներում տեղեկատուութեան բազմակողմանի տարածուածութեամբ, որի ժամանակ լեզուական նշանը դուրս է գալիս ընկալման արտաքին մակարդակ՝ ներքին մակարդակում տարածութիւն ապահովելով իր իսկ ֆիկուրի նշանակիչ բազմաձայնութեան համար: Քնարերգութիւնն, առհասարակ, ծածկում է լեզուի «արատները», որոնք գոյութիւն չունեն նախքան բանաստեղծական ներքին տարածութիւն մուտք գործելը: Լեզուի նշանակեալ տարրերի հակադրութեան եզակի գեղագիտութիւն, ուր բանաստեղծութիւնը ձեռք է բերում նիւթ, լեզուն՝ այն փորձութեան ենթարկելու իրաւունք: Լեզուի միջոցով բանաստեղծութիւնը ձգտում է նիւթի իմաստագերծման՝ փոխարէնն առաջարկելով լեզուական առարկայի՝ գրական տարբերակներում փոխառուած ներիմաստային շարժիչներ, որոնց շնորհիւ նա կարողանում է ազատորէն շնչել: Կառուցուածքաբանութեան մէջ իմաստի նախաձեռնութիւնը վերապահում է խօսքային պայմանանիշի միջոցով լեզուական առարկայի վերալիցքաւորման նպատակին, որը ենթադրում է գեղարուեստական նիւթի արտամղում՝ արտայայտուած բառիմաստի գրաւեալ փաստացի տարածութեամբ: Կառուցուածքային համակարգում արտաքին նմանութեամբ տարածք չզբաղեցնելու նպատակով՝ լեզուն իր փոխհաղորդակցութիւնն իրականացնում է ներքին պայմանանիշի միջոցով՝ նիւթի անշարժ վիճակից գերադասելով ձայնային միջոցով ընտրութեան ազատութիւնը: Գրականութեան մէջ, ինչպէս գրում է Ռոլան Բարթը, «երկու (լեզուական) առարկաները համընկնում են, բայց գոյութիւն ունի տարնմանութիւն իրականի եւ նրա գրական տարբերակի միջեւ, որովհետեւ կապն այստեղ իրացում է ոչ թէ նմանաբանական ձեւերի միջոցով, այլ՝ խօսքային պայմանանիշի» /Ռ. Բարթ, «Գրականութիւնը եւ ճշմարտութիւնը», «Ապոլոն» հրատ., 1999թ., էջ 114/: Զարգացնելով յիշեալ միտքը՝ Փրանսիացի կառուցուածքաբանն ու փիլիսոփան առաջադրում է «վատ» եւ «լաւ» գրականութեան իր ուշադրաւ սահմանումները, որոնց համաձայն՝ ««վատ» գրականութիւնն այն է, ուր գործում է լիիմաստ բառերի գիտակցութիւն, այնինչ «լաւ» գրականութիւնը հակառակն է, որը բաց է բաց պայքարում է իմաստի փորձութեան դէմ»:

Բանաստեղծի առաջնահերթ խնդիրներից մէկը փոխաբերական իրադրութիւններում առարկայի նոր յատկանիշների բացայայտումն է լեզուահոգեբանական բազմաշերտ տեղեկատուութեան վերապայմանանշման միջոցով, ինչի արդիւնքում ընթերցողը ձեռք է բերում նոյն առարկայի հետ տարբեր իրավիճակներում յարաբերուելու ընտրութեան ազատութիւն: Լեզուն իր մէջ կրում է հոգեւոր կառոյցի կերպարանափոխման բոլոր տարրերն ու միջոցները եւ երբ հասնում է իր հնարաւորութիւնների սահմանագծին (ինչը կարող է տեղի ունենալ միայն փոխաբերութեան միջամտութեամբ)՝ սկիզբ է դնում իր հետ յարա-


բերուելու նոր եղանակների, որոնք կոչուած են լեզուագիտական խնդիրն իրացնելու ընկալման բարձրագույն կազմակերպութեան մակարդակում, որտեղ տրոհուած են բառիմաստներն ու լեզուական կառույցի նշանակիչ գործառնությունները՝ փոխաբերական անըմբռնելի տարածութիւն մղելով ընթերցողի մտահայեցողական ճիգը: Այդ տարածութեան որեւէ յստակ կէտում ստեղծագործութեան ներքին մակարդակին մօտենալ հնարաւոր չէ, քանի որ մտքի ամենաթեթեւ հպումից անգամ նա յետ է քաշուած դէպի նոր թաքստոցներ, եւ այս գործընթացը կարող է տեւական բնոյթ կրել՝ կապուած ժամանակի ու տարածութեան մէջ բառիմաստների փոփոխութեան, նրանց ներքին յարաբերութիւններում լեզուական նոր ենթաշերտերի առաջացման ու ծաւալման հետ: Ժամանակակից քնարերգութեան գեղագիտական խնդիրը լեզուահոգեբանական կառուցութեամբային տարրերի ներքին համագործակցութեան ապահովումն է՝ արտայայտուած փոխաբերական իրադրութեան բազմափափակումով: Խօսքի բազմիմաստութեան եւ նրանով պայմանաւորուած հոգեւոր նոր շերտերի յայտնաբերման գործօնը ժամանակակից իրականութեանը դիմադարձում է մարդու ինքնաճանաչման նորայայտ հնարաւորութիւնները, ինչը եւ իւրովի ապահովում է նրանց երկուսի՝ իրականութեան եւ մարդու երկկողմանի դիմադրութեան «ուժային» հաւասարակշռութիւնը: Արդի բանաստեղծութեան բազմակողմանի բարդացումները բխում են հենց այդ հաւասարակշռութեան պահպանման ներքին մղումից: Հանգամանք, որը ենթադրում է հոգեւոր արժեհամակարգի որակափոխութիւն (transmutacia), ըստ այդմ նաեւ՝ լեզուամտածողութեան նոր համակարգ: Լեզուն իր ներշարժական լուծութեան մէջ կարող է արտայայտել աւելին, քան իր կառուցութեամբային նշանակեալի եւ նրանով արտայայտուած առարկայի իմաստային նշանակութեան: Լեզուի նիւթը հենց ինքը լեզուն է, որն իր մէջ իրացնում է այն ամէնը, ինչը դուրս է մնում ստեղծագործութեան նպատակից: «Գրականութիւնն ինքնին համակարգուած լեզուն է, - գրում է Յ. Թոդորովը, - որը մեր ուշադրութիւնը սեւեռում է իր վրայ, ինքը՝ չարժուած դէպի իր նպատակը», /«Semiotika», «Raduga», M., 1983g., s. 361/:

Ազատ բանաստեղծութեան հիմնական խնդիրը լեզուական ներքին տեղաշարժերի ազատութեան ապահովումն է, մնացածն իրականացնում է լեզուն՝ պայմանաւորուած գեղարուեստական հնարքի՝ այդ տեղաշարժերում կիրառման հեղինակի հոգեւոր փորձով, մտաւոր պատրաստութեամբ եւ այլն: Այս առումով զգալի դերակատարութիւն ունեցաւ անցեալ դարի 60ական թուականների հայ բանաստեղծութիւնը՝ իր ներսից վերանորոգելով բառի էութեան պատմութիւնը, նրա գաղտնի խորքերը, ինչի շնորհիւ եւ արդի հայ քնարերգութիւնը մոտաք գործեց պատմական նոր ժամանակաշրջան:

ՅՈՎԻԿ ՄՈՒՍԱՅԷԼԵԱՆ

Արցախի պետական համալսարան
Բանասիրական գիտութիւնների թեկնածու, դոցենտ

«ԱՇՈՒՂ ԶԻՎԱՆԻ. ԱՆՅԱՅՏ ԵՐԳԵՐ» ՀԵՂԻՆԱԿԻ ԹՈՎՄԱՍ ՊՕՂՈՍԵԱՆ



2009 թվականը Աշուղ Զիւանիի մահուան 100ամեակն էր: Տարին չլրացած, Երեւանի մէջ լոյս տեսաւ «Աշուղ Զիւանի. Անյայտ Երգեր» խորագիրով ստուար հատոր մը, որ թանկարժէք յաւելում մը կը կազմէ մեր ժողովրդական եւ աշուղական երգարուեստի գրադարանին:

Հատորը լոյս ընծայած է «Սայաթ Նովա» Մշակութային Միութիւնը, «Լուսակն» հրատարակչատունէն. հատորը պատրաստած է բազմալստակ արւեստագէտ եւ սիրուած երգիչ Թովմաս Պօղոսեան, խմբագիրն է Ալվարդ Ղազինեան, երկուքն ալ բանասիրական գիտութիւններու թեկնածու:

Հատորը կարելի է դասել կոթողական գործերու շարքին: Արդարեւ, Թովմաս Պօղոսեան ոչ միայն հաւաքած, որոշ վերծանումի աշխատանքէ անցուցած ու հրատարակութեան յանձնած է հայ մեծ աշուղին ցարդ անծանօթ մնացած գործերը, այլ նաեւ հատորին մէջ տեղ տուած է Զիւանիի անաւարտ գործերուն ու տարբերակ-պատառիկներուն. ան հատորի աւարտին ներկայացուցած է ամբողջական ցուցակը աշուղին բոլոր ստեղծագործութիւններուն, թիւով՝ 1188:

Անծանօթ մնացած երգերը՝ այս հատորով լոյս տեսնող երգերը կը կազմեն ընդհանուր թիւին մօտաւորապէս մէկ-երրորդը: Յուցակին կը հետեւի յատուկ անուններու բառարան մը (տեղանուններ, անձնանուններ կամ այլ), ուր իւրաքանչիւր անունի դիմաց արձանագրուած է այն էջ(եր)ը, ուր ընթերցողը պիտի գտնէ տուեալ անունը:

Կ'ուզենք կանգ առնել հատորին արժէքներէն գոնէ երկուքին վրայ. առաջինը, բնականաբար, հայ մեծագոյն աշուղներէն՝ Զիւանիի, դարակներուն մէջ մնացած գործերուն լոյս աշխարհ բերուիլն է. այլ խօսքով, այս հրատարակութիւնը կը լրացնէ Զիւանիի տափթարը եւ հոսմ ատաղձ կը տրամադրէ բոլոր անոնց, որոնք պիտի ուսումնասիրեն Զիւանին: Յառաջաբանին մէջ կը նշուի, թէ երգերը դասուած են այբուբենական կարգով, յիշատակուած է երգի ստեղծման թուականը, պահուած է հեղինակի լեզուն (չէ պահուած սակայն ուղղագրութիւնը), տրուած են նաեւ այս երգերուն պահպանման վերաբերող բացատրութիւնները:

Երկրորդ արժէքը՝ հատորին առաջին շուրջ հարիւր էջերն են: Հոն, ի յայտ կու գայ արուեստագէտ Թովմաս Պօղոսեանի բանասէրի արժանիքը, որ ցարդ մնացած է Սայաթ Նովայի երգի սքանչելի մեկնաբանի ու «Սայաթ Նովա» մշակութային միութեան ղեկավարի իր արժանիքի շուրջին: Արդարեւ, գիրքին մինչեւ 106րդ էջը տարածուող այս բաժինով՝ ընթերցողը կը ծանօթանայ Զիւանիին, սկսելով անոր կենսագրութենէն, անցնելով ստեղծագործական հանգրուաններէն ու յանգելով աշուղին տարբեր լարերուն ներկայացման, արժեւորման ու ցարդ դարակը պահուած երգերու ողիսականին:

Ուսումնասիրական-բանասիրական այս բաժինը կը բաղկանայ ներածութենէ մը, որուն կը յաջորդեն վեց գլուխներ, ապա նաեւ եզրակացութիւններու թուագրեալ ցանկ մը, որ ձեւով մը ամփոփումն է կատարուած քննարկումներուն ու արժեւորումին:

Թ. Պօղոսեան առաջին հերթին վեր կ'առնէ Աշուղ Զիւանիի հիմնական արժանիքը, որ է՝ մեր աշուղական երգին հայացումը: Պատմական յետադարձ ու արագ ակնարկով մը, ան կը բացատրէ, որ մեր աշուղական գրականութիւնը արուեստի կալուածը աւելի քան 500 տարիներու ճամբայ կտրած է մինչեւ Զիւանի, սակայն նախընթաց դարերու ստեղծագործողները, ներառեալ Սայաթ Նովան, այդքան ալ հոգածու կամ մտահոգ չէին ազգային պատկանելիութեամբ. աշուղները ժողովրդական երգիչներ էին, որոնք կը ստեղծագործէին Հայաստանի ու շրջակայ երկիրներու ընդհանուր աշխարհատարածքին մէջ. հոն հայը, քիւրտը, պարսիկը, թրքախօսներն ու վրացին, քիչ մըն ալ արաբները կ'ապրէին կողք կողքի, հետեւաբար ժողովրդային երգիչներն ալ ընդհանուր առմամբ պատկանած են այս ժողովուրդներուն, շրջագայած են իրարու դրացի այս երկիրներուն մէջ, Սայաթ Նովայի բառերով՝ հասած են մինչեւ «հինդ, հապաշ ու արաբ» (գիտենք, որ Սայաթ Նովայի տափթարը կազմուած է հայերէն, վրացերէն ու թրքերէն ստեղծագործութիւններէ, որոնց շարքին, հայերէնները ամէնէն փոքրաթիւն են): Մինչդեռ, 19րդ դարու կէսերուն, Հայաստանի Զաւախք աշխարհին մէջ ծնունդ առած Զիւանին՝ Սերոբ Լեւոնեանը (ծանօթ նաեւ Բենկոյեան անունով), իր ստեղծագործական առաջին տարիներուն յիշեալ ականգնութեան հետեւելով հանդերձ, շուտով յարած է դէպի սեփական ժո-

ղովուրդը, այնուհետեւ ոչ միայն բացառապէս ստեղծագործելով հայերէնով, այլ նաեւ զարգացնելով հայկական երաժշտութեան լարը: Այլ խօսքով, Զիւանիի հետ, աշուղական մեր երգարուեստը գտած է հայկական հունը ու հետեւաբար, բանաստեղծը դարձած է նոր դպրոցի մը հիմնադիրը: Անոր բացած ճամբան տասնամեակներու ընթացքին զարգացած է ու ընդարձակւած՝ հասնելով մինչեւ մեր օրերը:

Կ'արժէ հոս փոքր փակագիծ մը բանալ եւ լուսարձակի տակ բերել Զիւանիի ժամանակներուն պատկանող երեւոյթ մը, որ անփոխարինելի բարիք բերած է մեր մշակոյթին ու պատմագիտութեան: Այդ ալ, մեր բանասիրութեան ու արւեստի տարբեր կալուածներուն մէջ ազգային գիծի որոնումն ու յստակացումն է 19րդ դարու կէսերէն սկսեալ, բայց մանաւանդ երկրորդ կիսուն: Այդ ալիքին բարձրացման մասնակից եղած են գրողներ՝ Խաչատուր Աբովեանէն սկսեալ մինչեւ Ղազարոս Աղայեան, Սրուանձտեանց եւ այլք, առանց անտեսելու Նալպանտեաններն ու Գամար Գաթիպաները, երաժիշտներ ու երգահաններ՝ սկսելով Կարա Մուրզայէն մինչեւ Կոմիտաս, ու տակաւին, մեր ճարտարապետութիւնը ուսումնասիրողներ, համաշխարհային ճարտարապետութեան պատմութեան մէջ անոր տեղը ճշդողներ:

Հատորը բացող ուսումնասիրական յիշեալ բաժինը մատչելի ու հաճելի յղացքով կը ներկայանայ, թէեւ ունի գիտական ուսումնասիրութեան մը բոլոր տուեալները: Թ. Պողոսեան ծալ առ ծալ կը պարզէ Զիւանիի օգտագործած լարերը, որոնք կը թրթռան սիրոյ զգացումներով, կը փոթորկին հայրենասիրութեամբ, կսկիծ կ'ապրին պանդուխտներու մորմոքներով ու տակաւին, ծաւալ կը ստանան անսպառ փիլիսոփայութեամբ, խրատականներով, կեանքի ուրախ եւ դառն փորձառութիւններէ ծնած հոգեկան ելեէջներով:

Կարդալով այս էջերը՝ լոյս աշխարհ վերադարձած բանաստեղծութիւնները, ընթերցողը ամբողջական պատկերը կ'ունենայ այն արուեստագէտին ու բանաստեղծին, որուն հետ ինք ցարդ երգած է «Ձախորդ օրերը ձմրան նման կու գան ու կ'երթան», կամ՝ «Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն...» եւ այլ երգեր: Աւելին, Զիւանին կը պատկերանայ իբրեւ հարազատ մէկ ձայնը իր ժամանակներուն, ձայն մը՝ որ կ'արտայայտէ ժողովուրդին հայրենասիրութիւնը, զայն կը մղէ հայրենիք ու մարդկային արժէքներ սիրելու, զանոնք պաշտելու այնպէս՝ ինչպէս որ պիտի պաշտէր զԱստուած:

Զիւանիի քամանիին լարերէն արձակուած են նաեւ ողբասացութեան ու զաւեշտական թրթիւններ: Ողբացած է հայրենիքին համար զոհուածներու կամ վաղահասօրէն կեանքէն բաժնուած ծանօթներու կորուստը, փառաբանած է ազգային հերոսներ, սակայն նաեւ ունի այլ ու կնոջ միջեւ վէճերու արձագանգ եղող եւ ժպիտ առթող երգեր, որոնց տարբերակները մինչեւ այսօր ալ մաս կը կազմեն հայկական երգացանկերու:

Թ. Պողոսեան քողագերծած է նաեւ հետաքրքրական գաղտնիք մը. Զիւանիի այս գործերուն մէկ կարեւոր մասը անցեալ տասնամեակներուն հրատարակչէն հեռու պահուած է՝ անոնց ազգայնական-հայրենասիրական նկարագիրին պատճառով: Մեծ աշուղին մահէն հազիւ տասնամեակ մը ետք, մեր հայրենիքը ինկաւ կարմիր կայսրութեան ապագայնացնող եւ ժողովուրդը ինզինքէն, իր իսկութենէն հեռացնող հոսանքին գիրկը (որոշ գիծեր դժբախտաբար կը շարու-

նակուին վերանկախացումէն ասդին ալ)։ Խորհրդային Հայաստանի մէջ, գրաքննիչին պարտականութիւնն էր զգուշ ըլլալ, որ ազգային ու «յետադիմական» գաղափարներ, «մանր պուրժուական տրամադրութիւններ» չդրսեւորուէին գիրով, գիծով ու ձայնով-երաժշտութեամբ։ Նոր ստեղծագործութիւնները ա՛յս մօտեցումով գրաքննութեան ու, ի հարկին, բանադրանքի կ'ենթարկուէին։ Համայնավարութիւն չեփորահարող Չարենցներ անգամ դատապարտուած էին նոյն գլանին։ Զիւանիի նման հայրենասէրներու եւ ազգային գիծի հաւատարիմներու գործերը եւս պիտի ենթարկուէին լուսանցքայնացումի, անոր մէկ ստուար բաժինը պիտի ենթարկուէր բանադրանքի։ Այս իմաստով ալ, այս հատորին հրատարակումն ու Թ. Պօղոսեանի պատրաստած ուսումնասիրութիւնը պերճախօս պատգամներ են, որպէսզի Զիւանիի ու ժամանակակիցներու բացած ուղեգիծերը վերականգնին իրենց ամբողջական տարողութեամբ, ազգային ժառանգութիւններն ու սեփական ժառանգութիւնները վերարժեւորուին լիովին, որպէսզի հայկական հարուստ գանձարանը, ժամանակի ու այլ փոշիները թօթափելով, իբրեւ բարիք բաշխուի նոր սերունդներուն, զանոնք առաջնորդէ սեփական ուղիով, սեփականը զարգացնելու եւ այժմէականացնելու կամքով, մնալով հանդերձ Աբովեաններու եւ Պարոյր Սեւակներու կողմնացոյցներուն հաւատարիմ։

Այս քանի մը գիծերէն անդին, անշուշտ կարելի է խօսիլ հատորին ստեղծած այլ պատեհութիւններուն մասին։ Այսպէս, էջերը կարդալով աշուղական արւեստի ու բանաստեղծական յատկանիշներու որոնման մօտեցումով՝ ընթերցողը կը ծանօթանայ Զիւանիի տաղաչափութեան, լեզուի եւ այլ իւրայատկութիւններուն, որոնք զինք կը դնեն մեր արդի գրականութեան խմորումի ու հայերէնի մաքրագտման տարիներուն մէջ։ Ծիշդ է, որ Զիւանիի լեզուն ունի գրաբարեան արտայայտչաձեւեր, սակայն անիկա ըստ բաւականին մաքուր արեւելահայերէն մըն է, հեռու՝ օտարաբանութիւններէ, որոնք երեւցած են Սայաթ Նովայէն առաջ ու մինչեւ իսկ Զիւանիի յաջորդող սերունդներու տաղերուն մէջ։ Այս իմաստով, Զիւանին ակամայ պատգամաբեր մը կը հանդիսանայ նա'եւ այսօր, եթէ աչքի առջեւ ունենանք հայրենի բանաւոր ու գրաւոր արտայայտութիւններուն մէջ առատօրէն տողանցող օտարաբանութիւնները...

Հատորը առաջին հերթին լոյս ընծայուած է փոքր տպաքանակով, յարգելու համար Զիւանիի մահուան 100ամեակը։ Կը սպասուի, որ սկսուած երախտաշատ գործը շարունակուի ու Զիւանին իր ամբողջական հասակով մատչելի ըլլայ մեր ժողովուրդի զանգուածներուն, աշուղական արուեստի համակիրներուն։

Յանկալի պիտի ըլլայ նաեւ, որ երգերուն ըստ կարելւոյն ընկերանան երաժշտական խազերը (գիտենք, որ ինչպիսի՜ հսկայական գործ է ատիկա, ու թերեւս մեծ մասն ալ անկարելի է, ինչպէս է պարագան Սայաթ Նովայի տաղերու մեծագոյն մասին), որովհետեւ երգը սոսկական գիրէ անդին է, խազերու պակասը բան մը կը պակսեցնէ անոր արժէքէն, ինչպէս որ թատերական գործ մը իր ամբողջական արժէքը կը ստանայ բեմ հանուելով։

Ս. ՄԱՀՍԻՐԻՃԵԱՆ

Լոս Անճելոս

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԻ «ՆԱՄԱԿՆԵՐ»Ը

Նոր ձեռքս անցաւ անմահանուն գրագիտուի Զապէլ Եսայեանի «Նամակներ» հատորը, տպուած՝ Երեւան, 1977ին: Այս թուականին Լիբանան կ'ապրէր պատերազմական անյոյս վիճակ մը, կտրուած էինք արտասահմանի հետ թղթատարական կապերէ, ուր մնաց գիրք ստանալը ... Հայաստանէն:

Վերջերս բարեկամ մը յայտնեց, թէ լսած է Զապէլ Եսայեանի այս հատորին մասին, բայց կարելիութիւն չէ ունեցած օրինակ մը ունենալու: Հետաքրքրական էր տեղեկութիւնը, փափաքեցայ օրինակ մը ունենալ: Բարեկամուիս Հայաստան պիտի երթար Յուլիսին, պատուիրեցի իրեն, որ բարեհաճի օրինակ մը բերել ինծի: Բարեկամուիս վերադարձաւ, հետը բերելով սպասուած հատորը, նոյն ատեն բացատրութիւններ փոխանցեց.

- Շատ դժուար գտայ այս օրինակը, որովհետեւ գրախանութներու մօտ չկար: Հանդիպեցայ ընթերցասէր երեսանցիներու, որոնք ժխտական պատասխան տուին: Կը թուի թէ 32 տարի առաջ լոյս տեսած այս հատորը սպառած է,- աւելցուց բարեկամուիս,- բայց ի վերջոյ գտայ ուսուցչուի մը մօտ, որուն ծանօթ էի:

Ուսուցչուի Արփին յանձնած է գիրքը մեր Արշոյին, մակագրուած, նուէր՝ դրկուած ինծի: Ընտրեալութիւն սիրելի ուսուցչուի Արփի:

Մաքուր պահուած հատոր մը, հայաստանեան ուղղագրութեամբ:

417 էջերէ բաղկացած հատոր մը, որուն վերջին էջերուն տպուած են անձնանուններ, տեղանուններ եւ այլ անուններ, պոլսական եւ Կիլիկիոյ տարածքին տեղի ունեցած իրադարձութիւններուն ծանօթացնող:

Զապէլ Եսայեանի խառնուածքը, անձը ճանչնալու համար վաւերական փաստագրութիւն մըն է՝ ազգային, մարդասիրական խոր գգացողութեամբ շնչած գրագիտուհիին այս հատորը, ընտանեկան եւ ընկերային անմիջական տրամադրութիւններով թաթաւուն:

1873ին Պոլիս ծնած Զապէլ Յովհաննէսեան տիրացած է բարձրագոյն ուսման: Հետեւած է Ֆրանսայի մէջ Սորպոնի համալսարանին գրականութեան Ակադեմիայի դասընթացներուն: Տիրապետած է ֆրանսերէնի ու գրականութեան: Ամուսնացած է Տիգրան Եսայեանի հետ, որ երկար տարիներ ապրած է Փարիզ: Ունեցած է աղջիկ մը՝ Սոֆի եւ մանչ մը՝ Հրանդ: Շատ կը գուրգուրայ իր աղջկան՝ Սոֆիի, որմէ բաժնուած կ'ապրի երկար ատեն, որովհետեւ իր գրականութիւնը, ազգային կեանքը, հայակերտումի ջանասիրութիւնը, Ատանայի կոտորածը, որբահաւաքի յանձնառութիւնը, մամուլի մէջ յօդուածներ գրելու ստիպողութիւնը, ու ասիկա Պոլսոյ, Թիֆլիսի, Փարիզի եւ Ամերիկայի «Հայրենիք»ի աշխատակցութեամբ, իր կեանքին մաս կը կազմեն: Ասոնց վրայ կ'աւելնան՝ գաղութներ իր այցելութիւնները, ճամբորդութիւնները՝ նաւով, շոգեկառքով, ձիով եւ տարբեր միջոցներով: Հեւքոտ կեանք մը զինք կը տանի Հա-

յաստանի գաւառները, Կիլիկիա, Թիֆլիս, Եգիպտոս, Մոսկուա, Ռոստով, Պոլկարիա եւ այլ վայրեր, ուր որ հայու շունչ մը կայ:

Իր նամակները գրուած են պարզ ոճով, ընտանեկան տրամադրութեամբ, մասնաւորաբար ամուսնոյն եւ հարազատներուն գրած նամակները, Այդ ժամանակաշրջանի գրագէտներուն, մտաւորականներուն, թուրք մեծամեծներուն հետ ունեցած յարաբերութիւնները արձագանգ գտած են իր նամակներուն մէջ, որոնք յաճախ երկար գրուած են, յօդուածի բնոյթ ունին: Այս մասին ամուսնոյն գրած իր նամակին մէջ կ'ակնարկէ. «Նամակներս պահէ, օր մը պէտք կ'ըլլայ, որովհետեւ իբրեւ յօդուած կարելի է օգտագործել»:

Ամուսինը՝ Տիգրան Եսայեան, կ'ապրի Փարիզ, ուր կը շարունակէ իր աշխատանքները: Զաւակները՝ Սոֆի եւ Հրանդ, մերթ փարիզ են, մերթ՝ Պոլիս, մեծ մայրիկին, մօրաքոյրին եւ հարազատներուն խնամքին յանձնուած:

1909ի ժամանակաշրջանին իր գրած նամակները Ատանայի կոտորածին եւ Կիլիկիոյ հայութեան ապրած ողբիսականին կը վերաբերին: Մերսինէն Ատանա կ'երթեւեկէ, տեղեկութիւններ կը քաղէ անձամբ եւ ականատեսներէ: Որբերու հարցով կը զբաղի: Գրագիտուհին կը յիշէ թուրք անձնաւորութիւններու եւ մտաւորականներու հետ իր ունեցած տեսակցութիւնները: Նախքան այդ թուականը, սակայն, Զապէլ Եսայեան չի հաւատար որ թուրքիոյ մէջ հայերուն հանդէպ գէշ կամ ոճրային տրամադրութիւններ կը ստեղծուին: Լաւատես է եւ հաւատք ունի դէպի բարեկարգում դիմող թուրքիոյ վարչակարգին նկատմամբ, բայց այս բոլորը ի դերեւ կ'ելլեն, երբ կը պատահի Ատանայի կոտորածը, որուն ընթացքին կը սպաննուին 30,000 անմեղ հայեր: Այնուհետեւ որոշ հանդարտութիւն մը կը տիրէ Կիլիկիոյ մէջ, բայց հայ ժողովուրդը կասկածի եւ անվստահութեան ներքին տրամադրութեամբ մը կ'ապրի: Զապէլ Եսայեան նոյնպէս կը զգայ թէ թուրք պետական աւագանին այնքան ալ վստահելի քաղաքականութիւն մը չէր կիրարկեր հանդէպ իր քրիստոնեայ հպատակներուն, այսուհանդերձ եղած չարիքը անցած-գացած հարց կը նկատէր մինչեւ 1914ի ժամանակաշրջանը: 1915ի Ապրիլին Զապէլ Եսայեան դուրսէն կ'իմանայ հայ մեծամեծներու, մտաւորականներու ձերբակալութիւնը, եւ սրտի դողով, արկածախնդրութեան վտանգին ենթարկած ինքզինք, կը յաջողի պրծիլ թուրք սահմանապահներու ձեռքէն եւ ապաստանիլ Եւրոպա: Կ'անցնի Ռուսիա, Մոսկուա եւ այլ ռուսական քաղաքներ, կը հանդիպի հարուստ հայերու, անոնց հետ կը գործակցի՝ տարագրուած, ցեղասպանութեան ենթարկուած ու հրաշքով փրկուած հայորդիներու անհրաժեշտ պատսպարան եւ այլ կարիքները ապահովելու նպատակով:

Իր տաժանագին գործունէութեան ընթացքին յաճախ կը հիւանդանայ: Տենդ, կուրի, գլխացաւ, նոյնիսկ կը գանգատի երիկամնային անհանգստութենէ: Բազմաթիւ թերթերու կ'աշխատակցի: Թիֆլիսի մէջ կը հանդիպի Յովհաննէս Թումանեանի, Շանթի, տեղ մը՝ զօր. Անդրանիկի, կը թղթակցի փարիզաբնակ գրագէտ Արշակ Զոպանեանի եւ այլ մտաւորականներու հետ: Մամուլի ջերմ եւ յանձնառու աշխատակից մըն է: Յօդուածներ կ'առաքէ Փարիզի, Եգիպտոսի, Թիֆլիսի եւ այլ գաղութներու թերթերուն, մինչեւ Ամերիկայի «Հայրենիք»ին:

Վերջապէս կին է, փափուկ սեռի անդամ է, կ'արհամարհէ անձնականը,

հիւանդութիւնը, «հազար կտոր կ'ըլլայ» օգնութեան փութալու համար տառապող իր ժողովուրդին:

* * *

1907 թուագրութեամբ սկսած եւ մինչեւ 1933-34 տեւած նամակագրութիւնը կանգ կ'առնէ՝ այս թուականին Երեւան հաստատութիւնը ետք: Երեւանէն հազիւ քանի մը նամակ՝ Արշակ Չոպանեանին եւ տիկին Բուդաղեանին: Այնուհետեւ Երեւանի քաղաքացի, իր երկու զաւակներուն հետ հոն հաստատուած, Սոֆին մատենադարանի մը գրադարանավարուհին դարձած, իսկ Հրանդը գիտական կեդրոնի մը մէջ կարեւոր պաշտօն ստանձնած է: Զ. Եսայեան Երեւանի համալսարանի դասախօս է Փրանսերէն լեզուի եւ գրականութեան: Շատ ուրախ են երեքով եւ կը շարունակեն կեանքը՝ Հայրենիքի մէջ:

1936էն ետք կը սկսին հալածանքները, հայ գրողներու եւ մտաւորականներու ձերբակալութիւնները: Չարենց, Բակունց, Թոթովենց եւ ուրիշներ կը բանտարկուին նախ Երեւանի բանտին մէջ, ապա ո՛ւր կը սպաննուին՝ յստակ չէ կամ կցկտուր վկայութիւններ կան, թէ չարչարանքով սպաննուած են բանտին մէջ: Զապէլ Եսայեան, նախկին դաշնակցական, համայնավարութիւնը պաշտած, հայրենասէր գրագիտուհին կ'ենթարկուի բանտարկութեան: Իր յուշերուն մէջ կը կարդանք այս մասին եւ կը փշաքաղուինք: Հայաստանի վարչակարգը գովաբանած, «հոս ամէն մարդ ազատ է» գրող գրագիտուհին չարչարանքներու կ'ենթարկուի: «Աղջիկներ, դժոխքէն կու գամ», գրած է ան իր յուշերուն մէջ: Տպուած՝ տարիներ ետք: Այդ «աղջիկները» իր բանտակիցներն էին, որոնց քով կը վերադառնայ անլուր չարչարանքի ու ծեծի հարուածներով բզբտուած հագուստներով, գգգգուած վարսերով՝ իր վիճակը ներկայացնող:

Սեպտեմբեր 2009ի երեկոյ մը Երեւանի «Հ1» պատկերասփիւռի կայանէն յատուկ յայտագիր մը ներկայացուեցաւ, ուր խօսնակը ըսաւ. «Երեւանի բանտէն Զապէլ Եսայեանը փոխադրեցին Ազրպէյճանի բանտը, որպէսզի առաւել չարչարանքով, թուրքերուն իրազործած «գերագոյն» չարչարանքով նահատակէր անմահանուն գրագիտուհին»:

Եթէ ընթերցող մը չկարդայ աւելի քան 400 էջերէ բաղկացած Զապէլ Եսայեանի ՆԱՄԱԿՆԵՐԸ, ամբողջովին չի կրնար ճանչնալ զայն: Նամակներով լաւ կը ճանչնանք Զապէլ Եսայեանը, որ զոհը եղաւ իր պարզամտութեան, փոփոխական տրամադրութեան:

Հազար ողորմի իր հոգւոյն:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

Պէյրութ

Յ.Գ.- Վերջերս իմացանք, որ անցնող ամրան Իտալիոյ մէջ լոյս տեսած է Զապէլ Եսայեանի «Անրակներու մէջ» յուշագրական գործին իտալերէն թարգմանութիւնը: Թարգմանութիւնը կատարած է նախկին լիբանանահայ, այժմ Իտալիա բնակութիւն հաստատած Յարութիւն Մանուկեան:

ՆՈՅՆ

**ՄՈՒՍԹԱՅԱ ԼՈՒԹՅԻ ԱԼ ՄԱՆՑԱԼՈՒԹԻՆ՝
1909 ԹՈՒԱԿԱՆԻ
ԿԻԼԻԿԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ**

1909 թուականի կիլիկեան կոտորածները մեծ յուսախաբուրթին առաջացուցին օսմանեան կայսրութեան այլացեղ ժողովուրդներուն մօտ, որոնք հազիւ ողջունած սահմանադրութեան խաբուսիկ լոյսը, իրենք զիրենք գտան համիտեան ռէժիմը յիշեցնող ու անոր վարքագիծը կրկնող նոր դէպքերու առջեւ:

Արաբ բանաստեղծներ, ինչպէս նաեւ ամբողջ արաբ ժողովուրդը, մեծ խանդավառութիւն ապրած էին սահմանադրութեան հռչակումով:

Ժամանակակից արաբական մամուլը հարուստ է պատմական այդ իրադարձութիւններուն նուիրուած բազմաթիւ բանաստեղծութիւններով: Դժուար է մատնանշել այդ օրերուն Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի կամ Եգիպտոսի մէջ ապրած արաբ բանաստեղծ մը, որ ձեւով մը անդրադարձած չլլայ քաղաքական այդ վերիվայրումներուն եւ մանաւանդ սահմանադրութեան հռչակման ու Համիտի պաշտօնանկութեան թեմային:

Թերթատելով օրուան արաբական մամուլը, քերթողագիրքերն ու գրականութեան պատմութեան նուիրուած աշխատասիրութիւնները, ցարդ կրցած ենք ի մի բերել 1909 թուականի Կիլիկիոյ հայոց կոտորածներուն նուիրուած տասը արաբ գրողներու 14 գեղեցիկ բանաստեղծութիւններ, որոնք իրենց գրական մեծ արժէքին կողքին, ունին նաեւ քաղաքական ու ճանաչողական յատուկ նշանակութիւն, մանաւանդ երբ ի մտի կ'ունենանք այն իրողութիւնը, որ անոնցմէ շատերուն հեղինակները կրօնակիցներ էին ցեղասպանին ու անոր անմիջական հարեւանութեամբ ապրող օսմանահպատակ քաղաքացիներ:

Հետաքրքրական է կիլիկեան կոտորածներուն անդրադարձող արաբ բանաստեղծներու այս մեծ թիւը: Մենք չենք հանդիպած այս ջարդերուն առիթով գրուած օտարալեզու այլ բանաստեղծութիւններու, իսկ հայերէն լեզուով եղածներուն թիւին (եւ որակին) հետ համեմատած՝ արաբերէնները կը ներկայացնեն պատկառելի արժէք ու կը մատնեն հայութեան ցաւերով տազնապող ճակատագրակից ժողովուրդի մը գոյութիւնը, մանաւանդ որ ան եւս զերծ չէ մնացած թրքական հալածանքներէն, սպառնալիքներէն ու կոտորածներէն:

* * *

Այս բոլորին մասին մանրամասն խօսիլը ձգելով այլ առիթի, հոս՝ թարգմանաբար կու տանք կիլիկեան կոտորածներուն անմիջական տպաւորութեան տակ ստեղծուած արաբ մեծ գրող՝ Մուսթաֆա Լուրֆի Ալ Մանֆալութիի մէկ արձակ բանաստեղծութիւնը:

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ
Հալէպ

ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ ԻՍԼԱՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ո՛վ իսլամներ, եթէ կը կարծէք որ ամենակարողն Աստուած քրիստոնեաները ստեղծած է միայն անոր համար, որ սուրերով մորթուին, նետերով բզբտուին եւ կրակով այրուին՝ ապա այդ պարագային սխալ մտածած կ'ըլլաք Տիրոջ մասին եւ ուրացած՝ Անոր գործերուն իմաստուն կարգադրութիւնը ու կ'իջեցնէք Ձայն այն անպէտ ու խաղամոլ մարդու մակարդակին, որ չէնք կը կառուցէ՝ քանդելու համար, ցանք կ'ընէ այրելու համար, հագուստ կը կարէ՝ բզբտելու եւ հատիկներ կը շարէ՝ ցիրուցան ընելու համար:

Ամենակարողն Աստուած, մարդը՝ մօր արգանդին մէջ սաղմ եղած օրէն տակաւին, կը պարուրէ իր կարեկցանքով ու գթասրտութեամբ, կը շնորհէ իր բարիքներն ու ողորմութիւնը եւ մովթ «արգելանոց»ին մէջ, նեղ անցքերէն օդ կ'առաքէ զայն եւ ուղիներէն՝ սնունդ: Անկէ կը վանէ կեանքի դժբախտութիւններն ու դժուարութիւնները եւ կու տայ կենդանութեան բոլոր ազդակները՝ սերմ, սաղմ, պտուղ եւ ապա՝ կատարեալ մարդ:

Եթէ այն Աստուածը, որուն վերաբերումը ա՛յս է իր ստրուկներուն հանդէպ, եւ ա՛յս է իր ողորմութիւնն ու կարեկցանքը անոնց նկատմամբ, անկարելի է որ հրամայէ մարդուն խլել ուրիշին հոգին, զոր ի՛նք շնորհած է անոր, կամ ընդունի հեղումը այն արեան՝ զոր ի՛նք տուած է մարդուն, որպէսզի հոսի անոր երակներով մէջ եւ ո՛չ թէ թափի աւազի բլուրներուն եւ լեռներու գագաթներուն վրայ:

Աստուծոյ ո՛ր գիրքին կամ անոր մարգարէներէն ու առաքեալներէն ո՛ր մէկուն հաստատած օրէնքին մէջ կարդացած էք, որ մարդ յարձակի իրեններուն հետ խաղաղօրէն ապրող մենակեաց մարդուն վրայ, խլէ անոր հոգին, դժբախտացնէ անոր ընտանիքն ու բարեկամները, եւ այս բոլորը անոր համար որ ան չի հետեւիր իր կրօնքին կամ չի հաւատար իր սկզբունքներուն:

Եթէ արտօնուէր, որ իւրաքանչիւր մարդ սպաննէր անոնք՝ որոնք կը դաւաճեն իրմէ տարբեր գաղափարներ եւ ունին տարբեր հաւատամբ, ապա այն ատեն աշխարհը պիտի դատարկուէր իր բնակիչներէն ու անոր մակերեսը աւելի՛ ամայի պիտի ըլլար, քան՝ լերկ լեռներուն ամայութիւնը:

Մարդոց միջեւ հաւատամբի, կրօնքի, սովորութեանց ու բնազդի տարբերութիւնները մաս կը կազմեն տիեզերքի օրէնքներուն զորս կարելի չէ փոխել կամ փոխարինել: Եթէ աշխարհի վրայ մնայ նոյնիսկ մէկ հատիկ մարդ, ապա ան ինքնիրմէ պիտի ստեղծէ երկրորդ մը, պիտի վիճի անոր հետ ու պայքարի անոր դէմ. «Եթէ Տէրդ ուզէր՝ ապա մարդիկը մէկ ազգ կը ստեղծէր»*:

Աշխարհի վրայ կեանքը ջերմութեան նման է. առաջ կու գայ լոկ երկու տարբեր մարմիններու շփումէն, իսկ հաւատամբներն ու կրօնները միացնելը փորձ մըն է այս աշխարհը կործանելու եւ զայն իր ոգիէն ու կարգ-կանոնէն զրկելու:

Ո՛վ իսլամներ, իսլամութեան սկզբնական շրջանին քրիստոնեաներուն դէմ մղուած պատերազմները չէին միտեր վրէժխնդիր ըլլալ եւ հաճոյք ստանալ

քրիստոնեաները կոտորելէն կամ՝ զանոնք ոչնչացնելէն, այլ անոնց նպատակն էր՝ պահպանել իսլամի վարդապետութիւնը, որպէսզի ոչինչ խոչընդոտէր անոր ճանապարհը կամ արգելակէր անոր տարածումը դէպի արեւելք ու արեւմուտք:

Այսինքն՝ պատերազմը ինքնապաշտպանութեան համար էր եւ ո՛չ թէ վրէժխնդրութեան:

Այս խօսքին լաւագոյն վկայութիւնը այն է, որ զօրաբանակ մը դէպի իր թիւրախը քայլ մ'իսկ առնելէ առաջ, արդէն իսկ իրեն կ'իմացուէր օրուան խալիֆային հրահանգը՝ չանհանգստացնել վանքերուն մէջ ապաստանած վանականներն ու մենաստաններուն մէջ ապրող քահանաները եւ պատերազմիլ միայն անոնց դէմ, որոնք կը դիմադրեն իրենց, կամ կռուիլ միայն անոնց հետ՝ որոնք իսլամութեան յառաջխաղացքը կ'արգելակեն: Եթէ քրիստոնեաներուն դէմ իսլամներուն կռիւին նպատակը ըլլար վրէժխնդրութիւնն ու զանոնք ոչնչացնելը, ապա այդ պարագային աւելի ճիշդ պիտի ըլլար հեղել քրիստոնեայ կրօնապետներուն արիւնն ու խլել անոնց հոգին:

Եթէ երբեք ոչնչացնէիք անոնք, որոնք ձեր կրօնքէն տարբեր կրօնք կը դաւանէին, ապա այն ատեն ամբողջ երկիրը ձերը պիտի ըլլար եւ դուք ձեր մէջ տարբեր համայնքներու եւ վարդապետութիւններու պիտի բաժնուէիք եւ ձեր համայնքներուն ի խնդիր պիտի կռուէիք այնպէս՝ ինչպէս մարդիկ կը կռուին իրենց կրօնքին համար, մինչեւ որ աշխարհի մակերեսին վրայ չմնայ ո՛չ համայնք եւ ո՛չ ալ համայնքի հետեւող:

Ո՛վ իսլամներ, իսլամութիւնը եկաւ անո՛ր համար, որ վերջ դնէ նոյնանման բարբարոսութիւններու եւ գազանութիւններու, զորս դուք կը դաւանիք թէ՛ իսլամութիւնն իսկ են:

Իսլամութիւնը եկաւ միայն որպէսզի մարդոց սրտերէն վանէ քէնն ու ատելութիւնը, ապա՝ զանոնք ողողէ իմաստութեամբ ու գլխաւորութեամբ, եւ մարդիկ ապրին երջանիկ ու բարգաւաճ: Այս նպատակին համար, անոր հեղած արիւնի կաթիլները կը նմանին վիրաբուժական գործողութեան ժամանակ հիւանդը բուժելու նպատակով բժիշկին հեղած արեան կաթիլներուն:

Կ'արդարացնէի ձեզ, եթէ անոնք՝ որոնց արիւնը կը հեղէք, ձեր կեանքի մէկ չրջանին բռնութիւն բանեցուցած ըլլային ձեր վրայ կամ ըրած ըլլային այնպիսին, որուն հետեւանքը վատ ազդեցութիւն ձգած ըլլար ձեր վրայ եւ դուք վախճանայիք անոր անդրադարձէն, մանաւանդ որ այդ մարդիկը ձեր հովանիին տակ կ'ապրին եւ անկարող են որեւէ ձեւով ձեզի վնաս հասցնել կամ նպատակադրած ըլլալ ձեզի չարիք պատճառել: Այնպէս որ ինքնարդարացումի ոչինչ ունիք:

Նաեւ մասամբ կ'արդարացնէի ձեզ, եթէ չկոտորէիք մանուկները, որոնք մինչեւ հասունութեան տարիքը հասնին, Տէրը չի հարցներ անոնց իրենց կրօնքն ու դաւանանքը: Կ'արդարացնէի նաեւ, եթէ սպաննած չըլլայիք անկար կիները, որոնք ո՛չ մէկ դերակատարութիւն ունին կեանքին մէջ, կամ այն ծերունիները, որոնք արդէն իսկ գերեզման կ'ուղղուին ձեր՝ իրենց վրայ յարձակելէն ու իրենց կեանքին վերջ տալէն առաջ:

Ո՛ր ժայռերէն կամ ո՛ր սարահարթերէն քանդակած էք ձեր սրտերը, որոնք չեն ազդուիր ո՛չ որդեկորոյս ու սգաւոր կիներուն հառաչանքներէն, ո՛չ ալ որ-

բերուն աղաղակներէն:

Ինչպիսի՞ քարերով սարքուած են ձեր աչքերը, որոնցմով կը հանդուրժէք դիտել այն մանուկը, զոր կրակը կը պատէ ոտքերն ու ձեռքերը, եւ մօրը աչքերուն ու ականջին դիմաց կ'առաջանայ դէպի փորոտիքը եւ մայրը անկարող կ'ըլլայ օգնելու անոր, որովհետեւ կրակը ո'չ ձեռք ձգած է մօրը որ շարժէ եւ ո'չ ոտք՝ որ քալէ:

Չե՛մ կրնար շնորհաւորել ձեզ այս նուաճումին ու յաղթանակին համար, որովհետեւ կը հաւատամ, որ տկարներ սպաննելը երկչոտութիւն է ու անկարողութիւն, եւ առանց յանցանքի ու պատճառի արիւն հեղելը՝ գազանութիւն է, որուն համար աւելի ճիշդ կ'ըլլար ցաւիլ գործողին համար եւ ոչ թէ շնորհաւորել զայն:

Ո՛վ իսլամներ, կոտորեցէ՛ք քրիստոնեաները, կոտորեցէ՛ք զանոնք որքան որ կ'ուզէք եւ որքան որ միջ ձեզ այդ մէկուն ձեր անգլթութիւնն ու գազանութիւնը, բայց չըլլա՛յ որ այդ մարդկային գոհերուն ողջակիզման պահուն ձեր բերանը առնէք ամենակարող Աստուծոյ անունը, որովհետեւ Աստուած աւելի՛ վեհ է, քան՝ անմեղ մարդոց ջարդը հրամայելը, կամ ընդունիլը՝ որ տկարներ աղերսեն ուրիշներու գուլթը, որովհետեւ Ան իշխողներուն մէջ մեծագո՛յն իշխողն է եւ ողորմածներուն մէջ՝ մեծագո՛յն ողորմածը:

ՄՈՒՍԹԱՅԱ ԼՈՒԹՅԻ ԱԼ ՄԱՆՅԱԼՈՒԹԻ (Հայացուց՝ Մ. Մ.)

*) Չակերտուած նախադասութիւնը առնուած է Քուրանէն, սուրահ «Հուտ», թիւ 118:

ՄՈՒՍԹԱՅԱ ԼՈՒԹՅԻ ԱԼ ՄԱՆՅԱԼՈՒԹԻ մէկն է արաբական ժամանակակից գրականութեան մեծագոյն դէմքերէն:

Ծնած է Եգիպտոսի Մանֆալութ քաղաքը, 1872 թուականին: Զաւակն է Հուսէյնէն սերած եւ դարերով բազմաթիւ բարձրաստիճան իսլամ կրօնաւորներ ու դատաւորներ տուած ծանօթ ընտանիքի մը: Մայրը եղած է թրքուհի:

Ուսումը ստացած է Գահիրէի նշանաւոր Ալ Ազհար մզկիթէն եւ սերտ յարաբերութիւններ մշակած է արաբ ծանօթ գրող ու ազատական հասարակական գործիչ՝ շէյխ Մուհամմէտ Ապտոյի հետ:

Որպէս գրող, ծանօթ անուն դարձած է 1907 թուականէն ետք, երբ սկսած է «Ամուայէտ» թերթին մէջ լոյս ընծայել իր յօդուածները:

Մանֆալութի յայտնի է առաւելաբար որպէս արձակագիր եւ պատմութեան գիրք: Իր պատմութեան մէկ մասը եթէ ազատ փոխադրումներ են ֆրանսերէնէ, ապա միւսները ինքնագիր ստեղծագործութիւններ են:

Գրած է բանաստեղծութիւններ, որոնք մէկտեղուած են առանձին հատորի մը մէջ: Անոնցմէ մէկը գրուած՝ Եգիպտոսի խըտի* Ապպաս Հըլմիի դէմ, պատճառ դարձած է, որ անոր հեղինակը բանտարկուի վեց ամիս:

Երկար տարիներ աշխատած է Եգիպտոսի Կրթական Նախարարութեան եւ Խորհրդարանի գրասենեակներուն մէջ: Ունի իւրապատուկ ոձ ու գեղեցիկ լեզու:

Իր կենսոյի ու գրականութեան մասին լոյս տեսած են բազմաթիւ գիրքեր ու յօդուածներ, իսկ գործերը արժանացած են տասնեակ վերահրատարակութիւններու:

Մահացած է Գահիրէ, 1924 թուականին:




* Եգիպտոսի խըտի-կառավարիչը

ՀԱՅԻԹԻՑԻ ԳՐՈՂԸ՝ ՏԱՆԻ ԼԱՖԵՐԻԵՐ՝ ԻՐ ԵՐԿՐԻՆ ԱՐՁԱՆԸ ԵՒ ՀԱՅԵԼԻՆ

Եթե պատահած չըլլար Հայիթիի ահեղ երկրաշարժը, այդ երկիրը պիտի չողողէր մեր հեռատեսիլի պզտիկ պատուհանները եւ մարդկութեան ստուար մեծամասնութիւնը անտեղեակ պիտի ըլլար միլիոնաւոր մարդոց ամէն օր ապրուող ողբերգութենէն: Պատահական կերպով ինծի բերին, 2010ի Կաղանդին, Տանի Լաֆերիէրի գիրքը, վէպ մը, մտածման խտիղ տուող անունով մը: Վերադարձի առեղծուածը (*Dany Laferrière, L'énigme du retour, Editions Grasset, 302 էջ*): Վերադարձ՝ ապրեցնող յոյս, նաեւ յաճախանքը բոլոր անոնց, որոնք արմատախիլ ըլլալու ցաւը ունին: Բանաստեղծութեան ինքնատիպ էջեր, ազատ տողերու եւ արձակի համադրումով, ապրումի շնչառութեամբ: Ընթերցումը սկսած էի, երբ իմացուեցաւ ահեղ երկրաշարժին լուրը: Պատկերները, զորս կրաւորականութեամբ դիտեցինք, ունեցած են իրենց նախերգանգը գրողներու, բանաստեղծներու արուեստագէտներու ստեղծագործութիւններուն մէջ: Այս գիրքը արժանացած է Մետիսիս գրական մրցանակին:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ



Ծնած է Ապրիլ 1953ին, Փորթ-օ-Փրէնս: Մանկութիւնը կ'անցընէ մեծ մօր քով, վախճալով որ բռնատէր Տիւվալիէ հօր քաղաքական գաղափարներուն համար իր կեանքին կը սպառնայ: Հայրը, Ուինգտոր Քլեյերդ Լաֆերիէր, եղած է Փորթ-օ-Փրէնսի քաղաքապետ եւ նախարար: Ապրած ու մեռած է աքսորի մէջ: Ինք գործած է գրական թերթերու եւ ռաժիոյ մէջ: Տարեկից իր բարեկամը կը սպաննուի իշխանութեան ուժերուն կողմէ, 1976ին: Խորհելով որ ինք ալ ցանկի վրայ կրնայ ըլլալ, կը մեկնի Մոնթրէալ, ոչ ոք տեղեակ պահելով, բացի մօրմէն: 1979ին վեց ամիս կու գայ Փորթ-օ-Փրէնս, կը հանդիպի իր կնոջ: Կաշխատի գործարանի մէջ մինչեւ 1985, երբ լոյս կը տեսնէ իր առաջին վէպը՝ **Ինչպէս սիրաբանի խափշիկի մը հետ առանց յոգնելու**, որ կը թարգմանուի բազմաթիւ լեզուներով եւ կը վերածուի շարժանկարի: Կը դառնայ յայտնի դէմք: Այժմ Կաշխատի հեռատեսիլի կայաններու մէջ: Հրատարակած է բազմաթիւ գիրքեր եւ արժանացած է մրցանակներու:

Դիպուած մը. Տանի Լաֆերիէր Փորթ-օ-Փրէնս կը գտնուէր երկրաշարժի օրը, 12 Յունուար 2010ին: Ել-մամակով տեղեակ կը պահէ կինը, որ ողջ է:

ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՌԵՂԾՈՒԱԾԸ

(Հատուած)

ԱՆՕԹՈՒԹԻՒՆԸ

Արթնցայ՝

կէս գիշեր էր:

Ջիւղերս կծիկ եղած:

Գիշերանոցս ամբողջովին թրջուած:

Կարծէք լողացած ըլլայի

աղմուկի ծովուն մէջ:

Տեսայ որ դուրս կու գային պզտիկ

երեք սենեակնոց տունէն,

հազիւ պաշտպանուած

այնքան բարալիկ պատերով

որքան բարակ թուղթով,

աւելի քան երեսուն վեց հոգի

մէկ ժամէ նուազ ժամանակի մէջ:

Ոչ իսկ մէկ միլիմետր որ գրաւուած չըլլայ:

Ոչ իսկ երկվայրկեան մը լռութիւն, կ'ենթադրեմ:

Կեանքը կը փնտռենք

խեղճերուն մօտ

Ժխորին մէջ բացարձակ:

Հարուստներ լռութիւնը գնած են:

Աղմուկը կը կեդրոնանայ

յստակօրէն ճշգրտած շրջագիծէ մը ներս:

Հոս այնքան հազուադիւտ են ծառերը:

Արեւը՝ անողոք:

Անօթութիւնը՝ մնայուն:

Այս տարածութեան մէջ մարդոցմով վիտացող:

Նախ մտասեւեռումը փորին:

Լեցո՞ւն թէ պարապ:

Անմիջապէս ետք սեռն է որ կու գայ:

Վերջապէս՝ քունը:

Երբ մարդ մը կը նախընտրէ
կարմիր լուբիայէն պնակ մը բրինձ
կնոջ մը սիրական ներկայութեան փոխան
կը նշանակէ որ բան մը կը պատահի
ճաշակի կարգին մէջ:

Տեսարանը սովորական դարձած է: Հարուստները, փախչելով աղքատներէն, կը լքեն քաղաքը երթալ բնակելու համար գիւղական շրջաններու միշտ աւելի նուազ աչքառու անկիւնները: Այդ երկար չի տեւեր մինչեւ որ լուրը տարածուի բնակչութեան գերաճած շրջաններու մէջ: Եւ այն ատեն կը սկսի պաշարումը: Պզտիկ խրճիթ մը հեղեղատին մէջ: Ուրիշ մը՝ այս վարդագոյն առանձնատան ստորոտը: Եւ երկու տարի չանցած թիթեղաւան մը կայ հոն, որ շնչահեղձ կ'ընէ ճոխ թաղամասը: Ամէն պատերազմ այլ նպատակ չունի քան հողամասի գրաւումը:

Խօսքի տարածութիւնն ալ կրնայ գրաւուիլ: Աւելի քան մէկ ժամէ ի վեր այս ժողատ ծեր կիրն ինծի կը պատմէ պատմութիւն մը, որմէ ոչինչ կը հասկնամ: Բայց կը զգամ որ այդ իր պատմութիւնն է, եւ ան իր աչքին կ'արժէ նոյնքան որքան ոեւէ մէկու պատմութիւնը:

Հոս օրը կեանքի մը չափ կը տեւէ:
Կը ծնին առաւօտեան:
Կը մեծնան կէսօրին:
Աղջամուղջին կը մեռնին:
Եւ վաղը հարկ է մարմինը փոխել:

Ճշակը ամէն բանի կը ծառայէ: Երբեմն կը փոխարինէ աքաղաղին կանչը: Կը ցնցէ ցրուած անցորդը: Կը ծանուցանէ մեկնում մը կամ ժամանում մը: Կ'արտայայտէ ուրախութիւն կամ զայրոյթ: Անդադար կը մենախօսէ խճողումներու ընթացքին: Փորթ-օ-Փրէնսի մէջ ճշակը արգիլել գրաքննութիւն պիտի ըլլար:

Մտայ այս սիպերքաֆէն դէմ դիմաց գտնուելու համար բարեկամիս հետ, որուն չեմ հանդիպած բաւական ատենէ ի վեր: Իմ հին մեղսակիցս՝ Կարի Վիքթոր՝ իր լուսնային դէմքով ինծի կը յիշեցնէ բարի ժամէն ժողճի մասին, ան որ կը նկարէր միայն ճագարներ: Կարի Վիքթոր ամէն անգամ իր գլխարկէն կը հանէ սատանաներով, գողերով, մեռելներու ուրուականներով, ծիծաղող ոգիներով եւ խնդացող գոյներով բարեկենդանային պարզունակ պաստառով լեցուն վէպ մը: Բայց այնքան բեռնաւորուած յաճախանքով՝ նոյնքան սեւ, որքան պատանիի մղձաւանջ մը: Պահ մը զրուցեցի իրեն հետ թէ ի՞նչ կրնար ըլլալ հայիթեան մեծ վէպի նիւթը: Նախ աչքէ անցուցինք միւս ժողովուրդներու մտասեւեռումները: Հիւսիսային ամերիկացիներուն համար այդ տարածութիւնն էր (Far West եւ լուսնի գրաւումը, թիւ 66 ճանապարհը*): Հարաւային ամերիկացիներուն համար՝ ժամանակն է (Հարիւր տարի առանձնութիւն**):

Եւրոպացիներուն համար՝ այդ պատերազմն է (Երկու համաշխարհային պատերազմ մէկ դարու ընթացքին կը դրոշմէ ուղեղ մը): Մեզի համար անօթութիւնն է: Մեզի համար, կ'ըսէ Վիքթոր, դժուար է այդ մասին խօսիլ, երբ այդ չեն ապրած: Եւ անոնք, որոնք այդ մօտէն տեսած են անպայման գրող չեն: Չենք ըսեր որ անօթի ենք երբ կարճ ժամանակէ մը ի վեր չենք ճաշած: Կը խօսինք անձի մը մասին որ երբեք կշտանալու չափ չէ ճաշած, կամ այնքան որ կարենայ վերապրիլ եւ ուտելու մտասեւեռումը ունենալ:

Յամենայն դէպս զարմանալի է բացակայութիւնը անօթութեան նիւթին, որ ներշնչման առարկայ փնտռող արուեստագէտները կրնար հետաքրքրել: Փոքրաթիւ վէպեր, թատերական երկեր, օփերաներ եւ պալէներ անօթութիւնը ունին որպէս կեդրոնական նիւթ: Մինչդեռ այսօր աշխարհի մէջ կան մէկ միլիառ սովահարներ: Միթէ՞ այս շատ ցնցող է որպէս նիւթ: Կ'օգտագործենք պատերազմը, համաճարակները, մահը իր բոլոր ձեւերով: Շատ կոպի՞տ է որպէս նիւթ: Սեռը կը փռուի մոլորակի բոլոր պաստառներուն վրայ: Այն ատեն ինչո՞ւ: Որովհետեւ ան կը վերաբերի միայն անոնց, որոնք զնման կարողութիւն չունին: Սովածը չի կարդար, թանգարան չ'այցելեր, չի պարեր: Կը սպասէ որ սատկի:

Մնունդը թմրեցուցիչներու ամէնէն սարսափելին է: Միշտ կը վերսկսինք ոմանք օրական երեք անգամ, ուրիշներ մէկ անգամ երբեմն: Կարի Վիքթոր ինծի ըսաւ որ ինք չէ տեսած մեծ սովը: Նաեւ ես: Ինչ որ մեզի ներշնչած է այն զգացումը որ երբեք պիտի չըլլանք հեղինակը հայրիւթեան մեծ վէպին որուն նիւթը կրնայ ըլլալ միայն անօթութիւնը: Ռուսներն*** այդ մասին հպանցիկ կերպով անդրադարձած էր իր Յօղի Կառավարիչները երկով: Երաշտը ծարաւն է: Հողը որ ծարաւ է: Ես կը խօսիմ մարդուն մասին որ անօթի է: Ճիշդ է որ հողը կը սնուցանէ մարդը: Ես փորձած եմ զայն միտքով անդրադառնալով նիւթերու թերեւս նոյնքան հետաքրքրական ինչպէս աքսորը, բայց անոնք նոյն կշիռը չունին այն մարդուն դէմ որ անօթի է: Վիքթոր ինձմէ բաժնուեցաւ աչքերուն մէջ տեսակ մը տխրութեամբ:

Բայց այս նիւթը չէ վէպի մը սոսկ:
Կարելի է անայլալ մնալ
սեփական անօթութեան դէմ բայց ի՞նչ կ'ընենք
երբ մանուկ մը անօթի է
եւ որ ձեզի կ'երկարէ իր ձեռքը ինչպէս
այդ պատահեցաւ այս առտու շուկային մօտ:
Անոր կու տանք քանի մը դահեկան
գիտնալով հանդերձ որ խնդիրը
պիտի կրկնուի քանի մը ժամ ետք:

Այս մարդը նստած ստուերին
պանդոկի պատի երկայնքին:
Թաշկինակի մը վրայ կը դնէ՝

մեծ ավոքա**** մը երկայն հացի մը կողքին:

Հանդարտօրէն կը հանէ իր գմելին:

Այս օրուան իր առաջին ճաշն է:

Նման հրճուանք կը մնայ անծանօթ

անոնց որոնց համար ուտելը

գերագոյն նպտակ չէ կեանքի:

Այս տարեց կինը աշխոյժ եւ զուարթ

որ կը պահէ Իֆէ պանդոկը ութսուն հինգ տարիքին

եւ դեռ ամէն օր կը պաքարի

գլուխը ջուրէն վեր պահելու

այս ժպիտով որ իրմէ երբեք չի հեռանար

մայրն է բարեկամի մը բանաստեղծ:

Այս երկրին մէջ մայրը բանաստեղծին

պէտք է որ աշխատի մինչեւ իր օրը վերջին

որպէսզի վարդերը կարենան ծաղկիլ

տողերուն մէջ իր գաւկին:

Այս վերջինը կը նախընտրէ երթալ բանտ

քան աշխատանքի:

Ահաւասիկ հիմա մենք սեղմուած՝ իմ հին թաղամասիս պզտիկ ճաշարանի մը մէջ: Պարզ ճաշ մը. բրինձ, ավոքա, հաւ: Կը սիրեմ այս ճաշարանները միակ ճաշով մը: Կը հասնիք եւ կը զրուցէք սպասելով որ բերեն ուտելիքը: Կ'ուտէի, գլխահակ, ժամանակէ մը ի վեր, երբ տեսայ այս մուրացիկը, որ աչքերը մեծ բացած ինծի կը նայէր ապակիին ետեւէն թրջուած աչքերով, որոնք այնքան նման էին մօրս աչքերուն:

Հայացուց՝ Թ. Պ.

Տանի Լաֆերիէր, «Վերադարձի առեղծուածը», վէպ, 2009, 137-142

* U.S. Route 66, Ծիքակոն Լոս Անձելըսի միացնող 4000 ք.մ. երկարութեամբ առաջին կայրապատ միջ-ցամաքային ձաճապարհը, որ ամերիկացիներուն համար ունեցաւ եւ ունի առասպելական նկարագիր: Այսօր ցուցանակներ կը նշեն զայն որպէս «պատմական»:

** Անկնարկութիւն քոլոմպիացի գրող Կապրիէլ Կարսիա Մարքէզի գիրքին, գրուած սպաներէն, որ վէպ է, պատմութիւն, առասպել, ձեռն ուր հարաւ-ամերիկեան ժողովուրդներու դիցազներգութիւնը:

*** Ժագ Ռումէն (1907-1944) հայիթիցի գրող եւ համայնավար քաղաքական դէմք: Մեծ եղած է իր ազդեցութիւնը իր երկրի գրականութեան վրայ: Կանկարկուի իր **Յօղի Կառավարիչները** (Les Gouverneurs de la rosée) գիրքին:

**** Արեւդարձային պտուղ մը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ
ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ՆՈՐԻԿԵԱՆԸ**

11 Նոյեմբեր 2009ին, Կաթողիկոսարանի մէջ կայացած հանդիսութեան ընթացքին ներում մտաւորական Անդրանիկ Տաղէսեան անդրադարձաւ Գրիգոր Նորիկեանի անձին ու վաստակին: Նաեւ, լիբանանցի արեւտարան ժողէֆ Թարրապ, ֆրանսերէնով վեր ածաւ Գրիգոր Նորիկեանի ստեղծագործութեան յատկանիշները: Արպէս հայ գեղանկարիչը ձանձնալու փորձ, ԲԱԳԻՆ այս համարով կը հրատարակէ Անդրանիկ Տաղէսեանի խօսքը, որ գեղանկարիչն ու մարդը ըմբռնելու փորձ մըն է:



**ՏԵԻԱԲԱՐ ՎԿԱՅՈՂ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ՝
ԳՐԻԳՈՐ ՆՈՐԻԿԵԱՆ**

Խօսք՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆԻ

Փաստ է թէ Եղեռնի յիսնամեակը շրջադարձային հանգրուան եղած է Սփիւռքի համար: Անտարակոյս, սփիւռքեան այդ յեղաշրջումի գլխաւոր գործօններէն մին ատենի նորահաս սերունդն էր, որ 1960ականներու կէսերէն սկսեալ նոր որակ ու թափ, նոր մօտեցում ու դրսեւորում ցուցաբերեց սփիւռքահայ աւանդականացած իրականութեան: Նորիկեան կը պատկանի այս սերունդին:

Մարդիկ կան, որոնք բախտաւորութիւնը կ'ուենան հակասական ու շէն, սքանչելի, ներշնչող, լիցքաւորող միջավայրի մէջ ապրելու՝ պարագաներու բերմամբ: Սակայն անոնցմէ քիչեր այդ հոյակապ միջավայրի կրողներն ու փոխանցողները, յուշագրողները կ'ըլլան եւ այդու կը բախտաւորեն իրենց յաջորդ միջավայրը: Շատ աւելի քիչ է թիւը անոնց, որոնք այդ միջավայրին մէջ կը զատորոշեն էականը. փրփուրը՝ վճիտ հոսքէն, որոմը՝ ցորենի հասկէն, աղմուկը՝ մեղեդիէն, մակերեսը՝ ենթակա-

ռոյցի խուլ բանում էն ու կ'իւրացնեն:

Դեռ աւելին, անոնք ինքնաշխատ ինքնամշակումով ոչ թէ առկայ մտայնութեան ու ապրումներու կրողն ու փոխադրողը կը դառնան, այլ զանոնք վերստեղծող, վերամշակող ու առաւել յառաջացեալ դրսեւորումով նորովի կը յանձնեն գալիքին ու կը դառնան մասնակիցը գալիքի ստեղծութեան: Գալիքին յատուկ դրոշմ ու կնիք դնող երախտաւորներէն են անոնք:

Այս ծիրին մէջ պէտք է դիտել Նորիկեանի 1966ին տուած անհատական առաջին ցուցահանդէսը: Ատենի հայ, չեչտակիօրէ՛ն պահպանողական հաւաքակա՜նութեան դիմաց 25ամեայ Նորիկեանի նետած գեղանկարչական այս ձեռնոցը նկատուեցաւ յախուռն ու յանդուգն քայլ: Բայց լիբանահայութեան իմաստուն խաւն ու գեղարուեստասէրները ընդունեցան զինք, որովհետեւ իր մէջ տեսան տաղանդաւոր, իրաւ արուեստագէտը, որ կու գար ահա իր գեղանկարներով ինքզինք պարտադրել:

Եւ իրաւ, Նորիկեան ատենի ազգային նոր խօսք բերող ըմբոստ հայ երիտասարդութեան գեղանկարչական ուղին առաջին հարթողներէն եղաւ: Նո՛ր սերունդ էին ասոնք, հասակ նետած ու թրծուած լիբանանեան իւրօրինակ միջավայրի մը մէջ, ուր կային առանձին համայնքային հաւաքականութիւններ, տեղայնացուած դարաւոր մտայնութիւններ, պապենական Արեւմտահայաստանէն փչող ռոմանթիք անցելապաշտութիւն, եւ լիբանանեան համակեցութիւն:

Նորիկեան գոյն եւ ձեւ տուաւ իր գեղանկարած ժողովուրդի երազներուն: Երգ դրաւ անոնց հոգիին, բողոք՝ անոնց աչքերուն ու յոյս՝ անոնց մտասեւեւումներուն մէջ: Մանաւանդ գոյնի ու գիծի միջոցաւ շօշափելիականացուց զգացումներն ու զգացական եւ զգայական պոռթկումները անցելապաշտութեամբ օրօրօկող Եղեռնի յիսնամեակի լիբանանահայ սերունդին: Եւ այդու օգնեց այդ զանգուածներու Եղեռնի հասկացութեան ըմբռնումի անցումին՝ զգացականութենէ բանականութիւն, ռոմանթիք անհպելիութենէ իրապաշտ ընկալում:

Պէյրութէն մեկնեցաւ ան գիտակցելով աշխարհի անաւարտութեան ու թերութեան: Փարիզ, սակայն, բուռն միջին արեւելքցիի իր խառնուածքը չէր կրնար դիմափոխուիլ: Իր կոչում-առաքելութիւնը շարունակեց նաեւ Լիբանանէն դուրս եւ եղաւ առաջիններէն որ ազգային պարտաւորութեամբ գեղանկարչական տարեկան ցուցահանդէսներ տուաւ Մ. Նահանգներու մէջ՝ 1978էն սկսեալ, միջին արեւելեան այլ լիցք ու թափ տալով այնտեղի հայ միջավայրին:

Նորիկեան փլցուց պատերը լիբանանեան սահմանափակ տեսադաշտին ու ընկալումներուն, ականատեսը եղաւ Հայաստանի վերելքին ու ծաղկման, անկախացման, զգաց եւ տազնապեցաւ հայկական վերիվայրումներով: Ան պահ մը ապրեցաւ խճճուած, ճմլթկուած, պատուտած ներկային մէջ, մինչեւ որ ծնունդ առին իր նոր համադրումները: Նորիկեան հայկական վերիվայրումները դիտեց ու խորաչափեց ժամանակի եւ տարբեր երկիրներու ու ժողովուրդներու փորձառութեան պրիսմակէն:

Նորիկեան գեղանկարեց որպէս ինքնայայտնաբերումի, հաւաքական ինքնաճանաչումի միջոց, ինքնապեղում մը՝ որ կը խորանայ ու կը տարածուի իրեն ամէնէն աւելի ծանօթ հայ ազգին մէջէն դէպի մարդն ու մարդկութիւնը: Ան կերտեց իր անկախ միջավայրն ու ներաշխարհը եւ կրցաւ գտնուիլ թէ՛ իրեն

հարազատ ազգային միջավայրի խորունկները եւ սակայն, միաժամանակ կրցաւ նաեւ նո՛յն այդ խորութեան հեռաւորութեամբ դիտել իրեն հարազատ ազգային այդ միջավայրը ու մխրճուելով մարդկային խորութեան մէջ, իրեն հարազատը դրսեւորեց ու վերածեց մարդկութեան հարազատին:

Շուրջ հինգ տասնամեակներու Նորիկեանի ստեղծագործական շառաւիղը կը բացայայտէ իր մէջ ծնած իր ժողովուրդին թախիծը, ապրումը, տառապանքը համամարդկայնացնող եւ զանոնք իր գեղանկարները դիտող անհատին երականերուն մէջ շրջանառութեան դնող արուեստագէտը:

Արդարեւ անտունի Նորիկեան չբաւականացաւ անիրաւութեան, տառապեալներ, զրկեալներ, աքսորեալներ գեղանկարելով. խորքին մէջ, ան զանոնք չէ որ գեղանկարեց, այլ՝ տեղահանութիւնը, լուսանցքայնութիւնը, աքսորը՝ համամարդկային երեւոյթներ, որոնք երբեք ալ իրենց այժմէականութիւնը պիտի չկորսնցնեն:

Եթէ սկիզբը ժառանգազրկութեան գեղագէտ գեղանկարիչն էր ան, ապա շուտով դարձաւ լոյսի, յոյսի ու երազներու գեղանկարիչը, իսկ Հայաստանի անկախացումով նաեւ՝ նոր իրականութեանց գոյնի երգիչը:

Այսօր Նորիկեան կը շարունակէ իր փնտռումները՝ կեանքի, մարդկային ու ազգային այլեւայլ տաք ու պաղերուն շուրջ. ան կը շարունակէ գրագէտ եւ գեղագէտ գեղանկարիչի իր խօսքն ըսել եղածին ու պատահող գէպքերուն, մարդ արարածի ապրած թէ ակնատեսած շրջափոխութիւններուն: Ան կը շարունակէ իր հաճելի, պարկեշտ, վեհ ու խոհուն խօսակցութիւնը իր գեղանկարներուն ընդմէջէն:

Նորիկեանի գիտակցական ու ստեղծագործական կեանքի բոլոր տասնամեակները ակնատեսն են հայ իրականութեան մէջ յատկանշական վերիվայրումներու, որոնց յետնագոյնը Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակումն էր: Իր ամենատարբեր զարգացումներով մեզ հիասթափեցնող ու ոգեւորող այդ իրողութիւնն ու վերջին հարիւրամեակներու դարաբաղեան աննախագէտ եւ գլխապտոյտ պատճառող յաջողութիւնները Նորիկեանն ու մեզ բոլորս դրին ուրիշ ոլորապտոյտի մը մէջ եւ նոր գործ բացին՝ Նորիկեանի արդէն անհանգիստ գեղանկարիչի որոնող հոգիին համար:

Դիտեցի՞ք իր խօսակցութիւնը. նայեցէ՛ք իր գործերուն յիսնամեայ երթին ու պիտի համոզուինք - եթէ մինչեւ այս չէինք համոզուած - թէ մեր խօսակիցը ազնիւ, կարեկցող, լաւատես, զգայուն, բարեխիղճ ժամանակագիր-գեղանկարիչ, իւրօրինակ եւ իւրայատուկ Գրիգոր Նորիկեանն է, որ եկեղեցին հայկականով ու տառապեալներով, յուսադրեալներով եւ հաւատաւորներով իր տոկուն դրոշմը դրաւ լիբանանահայ գաղութի ազգային ու մարդկային երթին, եւ այսօր եւս կը շարունակէ տոգորել ոչ միայն հայուն երթը, այլեւ բոլոր անոնց, որոնք լուրջ եւ խորունկ խօսակցութեան կը լծուին իր գեղանկարներուն հետ:

Վարձքդ կատար, սիրելիս:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԻՍԵԱՆ

Պէյրուիթ

ԱՐԴԻ ՀԱՅ ՅՕՐԻՆՈՂՆԵՐԸ (ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԸ)

(Համառոտ ակնարկ)



«Բագին» սիրով տեղ կու տայ արդի հայ երաժշտության երեւելի դէմքերուն խոր համարումը վայելող երիտասարդ երաժշտահան եւ դաշնակահար Արթուր Աւանեսովի ակնարկին, որ կը շօշափէ արդէն քսանմէկերորդ դար մուտք գործած հայ երաժշտության արդի նուաճումները, խնդիրներն ու առիաստարակ կացութիւնը:

Ուրախալի է տեղեկագրել, որ վերջերս «Դրազարկ» հրատարակչութիւնը, ի շարս երաժշտական նոր հրապարակումներու, Աւանեսովի խմբագրութեամբ լոյս ընծայած է ժամանակակից հայ երաժշտահաններու ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ հատորը, ուր տեղ գտած են երիտասարդ ստեղծագործողներ Վաչէ Շարաֆեանի, Արթուր Ակշեւեանի, Արամ Յովհաննիսեանի, Վարդան Յարութիւնեանի եւ իր՝ Աւանեսովի երկերը:

Արթուր Աւանեսով Երեւանի Կոմիտասի անուան Բարձրագոյն երաժշտանոցի (Կոնսերվատորիա) շրջանաւարտ է: Այժմ ան նոյն երաժշտանոցի դասախօս է, ինչպէս նաեւ Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի արուեստի ինստիտուտի գիտաշխատող:

Դեռեւս, դեռ ոչ այնքան հեռաւոր անցեալում «XXI դարի Հայ երաժշտութիւն» արտայայտութիւնը կարող էր պատրանքային եւ վերամբարձ հնչել: Նոյնիսկ այսօր, ապրելով XXI դարի առաջին տասնամեակի աւարտին, մենք դեռ նոր ենք ընտելանում այդ բառակապակցութեանը, թէպէտ եւ ականատես ենք լինում Հայ երաժշտութեան մէջ նոր սերնդի կայացմանը՝ մի սերնդի, որն ասպարէզ դուրս եկաւ խորհրդային Միութեան փլուզումից յետոյ: Հայ երաժշտութիւնը մուտք է գործել XXI դար՝ անցեալ դարում կուտակած հսկայական նուաճումներով: Սակայն նոր ժամանակն անխուսափելիօրէն նոր հարցեր է առաջադրում ստեղծագործողներին: Ինչպիսի՞ն պէտք է լինի անցեալ դարի բովում թրծուած նոր Հայ երաժշտութիւնը. արդեօք այն գոյութիւն ունի՞ որպէս կայացած երեւոյթ, եւ արդեօք առհասարակ տեղին է երաժշտութեանը ազգային յատկանիշներ վերագրելը մեր ժամանակուայ համաշխարհայնացման (գլոբալացման) պայմաններում, երբ փոխադարձաբար սերտանել են իրականը, զօրութեանականը (վիրտուալ) եւ գերիրպաշտը (հիպերռեալ), իսկ ամբողջ աշխարհը պարուրուած է համացանցային (ինտերնետային) որոնման ամենաթափանց ցանցով: Ինչպիսի՞նն է այսօրուայ Հայ ստեղծագործողը, ի՞նչ խնդիրներ են իրեն յուզում, ինչպէ՞ս է նա կարողանում կազմակերպել իր աշխատանքը, ի՞նչ



նուաճումներ ունեցաւ հայրենի երաժշտարուեստն անցած տասնամեակի ընթացքում:

Այսօրուայ Հայաստանի երաժշտական կեանքը շատ առումներով հակասական երեւոյթ է: Մի կողմից, կազմակերպում են բազմաթիւ փառատօներ, ելոյթ են ունենում անուանի կատարողներ՝ աշխարհի տարբեր երկրներից, իսկ համերգային եղանակների (սեզոններ) կիզակէտերին Երեւանի բոլոր հիմնական համերգասրահները լեւիեցուն են եւ աշխատում գերգբաղուած թափով: Միւս կողմից, ուրախալի այս բազմազանութեան մէջ ժամանակակից հայ յորինողներին շատ փոքր տեղ է յատկացուած. նրանք «աղքատ բարեկամի» նման ներկայ են ընդհանուր «խրախճանքին»՝ որպէս ունկնդիր-ականատեսներ, իսկ XXI դարի հայ երաժշտութիւնը ստեղծւում է նրանց տների փակ դռների ետեւում՝ յաճախ այդպէս էլ դուրս չգալով այդ սահմանագծից այն կողմ:

Բերենք պարզ մի օրինակ: Հայաստանի վերանկախացման օրուանից ի վեր մեր երկրում գործում են Պետական համերգային (Ֆիլհարմոնիկ) նուազախումբը եւ Պետական օփերան: Սակայն այդ կարեւորագոյն մարմիններից ոչ մէկը երբեք չի իրականացրել նոր ստեղծագործութեան եւ ո՛չ մի պատուէր: Վերջին տասնամեակների ընթացքում ողբերգականօրէն որակազրկուած Օփերայի՝ ժամանակակից հայ հեղինակի ստեղծագործութեան գրեթէ միակ բեմադրութիւնը (չհաշուած Էդուարդ Սադոյեանի «Գրիգոր Լուսաւորիչ»ը, որը, սակայն, բեմական կեանք չունեցաւ) եղաւ 2008ին Աւետ Տէրտէրեանի «Երկրաշարժը» օփերայի՝ բոլոր առումներով ողորմելի ներկայացումը¹: «Ֆիլհարմոնիա»ն էլ՝ կարծես առաջնորդուելով «լաւ յօրինող՝ հանգուցեալ յօրինող» կարգախօսով, հայ նոր հեղինակների երաժշտութեանը անդրադառնում է միայն անխուսափելիութեան պայմաններում:

Միւս կողմից, Հայաստանում «գործում է» եւս մեկ կարեւոր կազմակերպութիւն, որը կարծես թէ կոչուած է սատարելու մեր հեղինակների գործունէութեանը, ամէն գնով տարածելու եւ ծանօթացնելու նրանց երկերը: Խօսքը «ՀՀ Կոմպոզիտորների եւ երաժշտագէտների միութեան» մասին է: Սակայն, ժառանգելով ԽՍՀՄի ժամանակուայ աշխատանքային մեթոտները, որոնք այլեւս պիտանի չեն նոր իրականութեան պայմաններում, այդ կազմակերպութիւնը գնալով շարունակում է ցուցաբերել անկման ակնյայտ նշաններ: «Կոմպոզիտորների միութեան վարկանիշը զրօ է», պնդում է յօրինող Լեւոն Չաւուչեանը՝ արտայայտելով շատերի կարծիքը²:

Բացասական երեւոյթներից է նաեւ բարձրակարգ երաժշտաքննադատութեան բացակայութիւնը: Հայաստանի անկախացումից յետոյ մօտ 300 միլիոն բնակչութեամբ պետութեան մասը լինելու փոխարէն մենք վերածուել ենք երեք միլիոն բնակչութեամբ պետութեան, որտեղ համապատասխանաբար հարիւրապատկուել են ամէն տեսակի բարեկամական/թշնամական յարաբերութիւնները, որոնք ժամանակակից հայկական slang-ով սահմանւում են «թայֆաբազութիւն» արտայայտիչ բառով: Մեզանում գրեթէ անհնարին է հանդիպել առողջ, գործնական քննադատութեան: Հիմնականում ընդունուած են երկու տեսակի կարծիքներ՝ «ձօներգութիւններ», շատ անգամ նաեւ բոլորովին անտեղիւն, կա՛մ էլ՝ ակնյայտ փնովանք: Այդ ամէնը չի կարող չվնասել Հայաստանի երաժշտական միջոլորտի «առողջութեանը»:

Այս պայմաններում հայ հեղինակների գրեթե միակ հետաքրքրուածութիւնն են արտասահմանեան պատուէրները: Ինչ խօսք, սա շատ դրական երեւոյթ է: Զարմանալի է, բայց փաստ. հէնց արտասահմանից եկող պատուէրներն են, որ օգնում են պահպանելու մեր երաժշտութեան հայեցիութիւնը: Քանի որ, ստեղծագործութիւն պատուիրելով հայ յօրինողին՝ արտասահմանեան պատուիրատուն ակնկալում է ստանալ մի երաժշտութիւն, որն իր հնչողութեամբ, ներքին որակներով, ընդհանուր մթնոլորտով տարբերուի այլ ազգերի հեղինակների ստեղծագործութիւններից. այլապէս շատ աւելի դիւրին կը լինէր նոյն պատուէրը յանձնարարել տուեալ երկրում բնակուող հեղինակին: Դրա փայլուն օրինակն են հիմնականում արտասահմանեան պատուէրներով աշխատող Վաչէ Շարաֆեանի երկերը, որտեղ նորովի իմաստաւորուած եւ մարմնաւորուած են հայ երաժշտութեան ազգային ակունքները, որոնք կարծես երկխօսութեան մէջ են մտնում այլ երաժշտական մշակոյթների հետ: Այսպէս, օրինակ, 2006ին հոլանտական «Ատլաս» համոյթի համար գրուած նրա «Իմ բարձրագնայ լուսին» երկում հայկական դուդուկի եւ գուռնայի կողքին հանդէս են գալիս արաբական, չինական, ճապոնական, ինչպէս նաեւ դասական նուագախմբի գործիքներ՝ միահիւսուելով իրար, ստանալով միանգամայն նոր հնչողութիւն: Մնում է միայն փաստաւ, որ հայկական լսարանը հիմնականում ծանօթ չէ արտասահմանում կատարուող մեր հեղինակների երաժշտութեանը...

Ի՞նչ է այսօրուայ հայ երաժշտութիւնը ոճական առումով: Կարելի է ասել, որ հայ հեղինակների միջեւ այլեւս չկայ ոճական ընդհանրութիւն: Այս փաստը նոյնպէս դրական է, մանաւանդ նկատի ունենալով ժամանակակից արուեստի էութիւնն ինքը՝ որպէս տարբեր կարծիքներից ու հայեցակարգերից բաղկացած մի բարդ օրգանիզմ, որտեղ գերիշխողը ստեղծագործական ազատութիւնն է: Ընդհանուր առումով, հայ երաժշտութիւնը հրաժարուել է խորհրդային արուեստի վերամբարձ յուզականութիւնից (պաթոսից)՝ յօգուտ աւելի մտերմիկ, «պաստելային» (pastel) հնչողությամբ ստեղծագործութիւնների: Մեր օրերում, երբ արուեստը աստիճանաբար յաղթահարում է «մեծ արուեստագէտի» պատումը (նաքատիւը), անհատապաշտութիւնը, ամէն գնով յառաջնութացի, «պրոգրեսի», պատրանք ստեղծելու միտումը հետզհետէ վերանում են՝ թոյլ տալով ստեղծագործ մտքին դրսեւորուելու լիաթոք եւ անբռնագբօս՝ հաշուի չնստելով ոճական կամ լեզուական սահմանափակումների հետ: Մենք այլեւս չենք ձգտում նորութեան՝ որպէս ինքնանպատակ, գերադասելով ստեղծագործական ազնուութիւնն ու արուեստի մաքուր վայելքը: Թերեւս, հէնց դրանում է XXI դարի արուեստի գրաւչութիւնը՝ դրա անկաշկանդ ազատութեան մէջ, երբ արուեստագէտը, օգտուելով անցեալում կուտակուած անսպառ «արխիւից»՝ իր համար բացայայտում է դրա առանձին էջերը՝ հրճուելով եւ երբեմն էլ յուզուելով այդ բացայայտումներից:

Այդ առումով խիստ յատկանշական է Տիգրան Մանսուրեանի ստեղծագործութիւնը: Անցեալ տարի Հայաստանում եւ արտասահմանեան շատ երկրներում նշուեց հրաշալի այդ հեղինակի 70ամեակը. հնչեցին 1960ականներից մինչեւ օրս գրուած նրա բազմաթիւ ստեղծագործութիւններ, կազմակերպուեցին ասուլիսներ: Վերջին տասնամեակների ընթացքում նա կարողացել է մշակել այնպիսի մի երաժշտական լեզու, որտեղ, մի կողմից, վերաիմաստաւորուած է

XX դարի կուտակած ամբողջ երաժշտական փորձը, միևս կողմից, երաժշտար-
ւեստի զարգացման տարբեր ժամանակաշրջանների ոճական առանձին ման-
րամասները կարծես «ազատ շփման» մէջ են մտնում իրար հետ, եւ վերջապէս,
այդ ամէնը համեմուտք է հեղինակի ուրոյն աշխարհընկալմամբ եւ ազգային
երաժշտական ժառանգականութեամբ: Նրա այնպիսի նոր ստեղծագործու-
թիւնները, ինչպիսիք են «Ars poetica» երգչախմբային կոնցերտը, «Canti paral-
leli» վոկալ շարքը, «Agnus Dei»-ն՝ կլարնետի, ջութակի, թաւջութակի եւ դաշ-
նամուրի համար, ալտի եւ նուագախմբի համար գրուած «Չորս երգ»ը հսկայա-
կան ներդրում են հայ երաժշտութեան գանձարանին: Այդ շարքին կարելի է
դասել նաեւ նրա նորաւարտ «Թաւջութակի կոնցերտ»ը, որի առաջին կատա-
րումը նախատեսուած է 2010ի Ապրիլի 24ին՝ Ֆրանկֆուրտում:

Տողերիս հեղինակը երջանիկ է համարում իրեն, որ կարող է ապրել եւ ստեղ-
ծագործել մի իրականութեան մէջ, որտեղ ներկայ են այսպիսի բարձրարուեստ
հեղինակներ, ինչպիսիք են Աշոտ Զոհրաբեանը, Մարտուն Իսրայէլեանը, Մի-
խայիլ Կոկոսեանը, Վարդան Աճէմեանը, Երուանդ Երկանեանը, Վահրամ Բաբայ-
եանը, Ստեփան Ռոստոմեանը եւ ուրիշներ: Այդ հեղինակներից իւրաքանչիւրը
արժանի է ոչ միայն առանձին ներկայացման, այլ նաեւ, առաջին հերթին, խո-
րը ակնածանքի: Կարծես քարը քարին շարելով նրանք կերտում են հայ երաժշ-
տութեան գեղեցիկ շինութիւնը:

Թուարկածս հեղինակների ցանկն անլիարժէք կը լինէր առանց այն երիտա-
սարդ հեղինակների, որոնք արդէն իսկ հասցրեցին նոր խօսք ասել հայ երաժշ-
տարուեստում: Նրանցից են՝ Արամ Յովհաննիսեանը, որի երաժշտութիւնը յա-
ջողութեամբ կատարւում է աշխարհի տարբեր երկրներում, բազմաթիւ
մրցոյթների դափնեկիր Արթուր Աքշելեանը, հետաքրքիր էլեկտրոնային ստեղ-
ծագործութիւնների հեղինակ Ռուբէն Աբրահամեանը, վառ անհատականու-
թեամբ օժտուած հեղինակներ Արման Ղուչեանը, Դաւիթ Բալասանեանը, Վահ-
րամ Սարգսեանը, Վարդան Յարութիւնեանը...: Նրանք բոլորն էլ «հայ
երաժշտութեան ապագայ» որակաւորումից հետզհետէ փոխակերպւում են
հայ երաժշտութեան ներկայի: Եւ, դատելով նրանց երաժշտութեան համարձակ
«յայտագրերից», կարելի է վստահ լինել. առնուազն մօտակայ 40-50 տարիների
ընթացքում հայ երաժշտութեան ճակատագրի մասին կարելի է չանհանգստա-
նալ:

ԱՐԹՈՒՐ ԱԻԱՆԵՍՈՎ


կոմպոզիտոր, դաշնակահար,
արուեստագիտութեան թեկնածու
(Dr. of Arts)

1.- ՏԷՍ <http://www.aravot.am/am/articles/guidepark/71452/view>

2.- <http://www.aravot.am/am/articles/culture/58183/view>



$\emptyset^\circ\delta \hat{\Gamma}^{\circ 2}\ddot{U}\emptyset\mathcal{A}\ddot{U} \emptyset^{\circ 2}\delta, \hat{\Gamma}^2\acute{U}\ddot{U}\grave{a}\hat{o}\mathcal{A}\mathcal{E}\hat{o}\ddot{U} {}^2\hat{o}^\circ\mathcal{E}\grave{o}\ddot{U}\grave{a}\hat{O}$ ${}^2\delta\grave{a}\hat{o}^\circ\hat{e}\hat{\Gamma}^2\mathbb{P}^{\frac{3}{4}}\hat{\imath} \mathcal{E}\grave{a}\hat{o}\hat{e}^2\ddot{U}\hat{\Gamma}^2\delta\mathcal{A}\hat{a}\hat{\Delta}^a$ $\mathbb{P}^2\mathcal{E}\grave{a}\hat{o}\hat{e}\hat{\imath} \grave{a}^2\grave{a}^{\circ 2}\ddot{U}$



Գանատաբնակ Գալուստ Պապեանի լուսանը-
 կարչական արուեստին բնորոշ յատկութիւննե-
 րէն է՝ դիմանկարներու նկատմամբ անոր ցու-
 ցաբերած գերզգայնութիւնը, որ կու գայ Պապ-
 եանի խորունկ մարդկայնութենէն եւ իտէալին
 մօտենալու արուեստագէտի իր ճիգէն. «Արդէն

ի՞նչ է արուեստը, եթէ ոչ մտապատկերիդ մէջ
 տեղ գտած իտէալիդ հասնելու այն ազնիւ ձի-
 գը, որով արուեստագէտ լուսանկարիչը կը
 զատորոշուի սիրողականէն, անկէ, որ լու-
 սանկարչական գործիքը կ'օգտագործէ միայն
 այն պահուն, երբ սիրտը նկարել ուզէ, մինչ-



ապա կը կարծեմ որ հասած կ'ըլլամ նպատակիս»:

Վստահաբար նոյն այդ մարդկայնութիւնն էր, որ Գալուստ Պապեանը մղեց պատմական արկածախնդրութեան մը, երբ 1980ականներու սկիզբը, տակաւին չա՛տ երիտասարդ, Երեւան իր առաջին այցելութեան ընթացքին՝ անձնական նախաձեռնութեամբ ան յանդգնեցաւ քանի մը օրով երթալ Թիֆլիս՝ այդ օրերուն տնային կալանքի տակ գտնուող շարժապատկերի հայ մեծանուն բեմադրիչ եւ նկարիչ Սերգէյ Փարաճանովը լուսանկարելու: Լուսանրկարներու անկրկնելի

դեռ արուեստագէտ լուսանկարիչին համար գործիքը արտայայտչական հզօր միջոց մըն է, երբ լուսանկարողը ունի տեսնելու, դիտելու, զգալու եղանակ եւ անպայման՝ ըսելիք»:

Երբ լուսանկարչութեան ճամբով իր ըսելիքին մասին հարց կը տրուի իրեն, հեզահամբոյր ոճով մը կը բացատրէ. «Աշխարհի վրայ կ'ուզեմ մարդկայնութիւն աւելցնել. եթէ ժպիտ մը, նայուածք մը, նկարագրային գիծ մը կրցայ յայտնաբերել տիպարին մէջ ու անով ջերմութիւն փոխանցել ուրիշներու, մարդկային վիճակ ու զգայնութիւն հաղորդել իմ լուսանկարիս ընդմէջէն դէպի այլոց հոգիները,


չարք մը ծնած է այդ հանդիպումէն, որուն յիշատակները տակաւին թարմ են Պապեանի յի-



ԲԱՐԲԱՌՆՆ




ԶԵՌՔԵՐ





ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԽՃԱՆԿԱՐ



չողովի մեջ, որ գանձ մը գտածի երէկուան ուրախութիւնը այսօր բազմապատկուած երանութեամբ մը կը պատմէ, յիշելով անոր յետին մանրամասնութիւններն անգամ. «Բացառիկ պատեհութիւն մըն էր. բաժնի տնօրէն, թէ նախախնամութիւն, չեն գիտեր, բայց Փարաձանովի հետ անցուցած ժամերս անկրկնելի են ինծի համար. մեր այդ միակ հանդիպման ետ ողորուած էի զինք լուսանկարելու անյազ

վերցուած Պապեանի լուսանկարներու ճոխ հաւաքածոն, որ պատկերներու լեզուով լրագրութիւն մըն է՝ հին Երեւանի համայնապատկերին վրայ բռնուած. փոշոտ ու անհարթ ճամբաներու, խարխլած հին տուններու, նաեւ՝ շինարարական հեւքի մէջ եղող քաղաքին, «հացթուխ» կիներու, սրճարանները իբրեւ ժամադրավայր օգտագործող հայրենի արուեստագէտներու,



կիրքով, իսկ ինք այնպիսի հասկացողութեամբ ու վարպետութեամբ ընթացք տուաւ իմ փափաքիս, չեն յիշեր թէ քանի՜ անգամ դիրք եւ զգեստ փոխեց՝ իսկական տօնահանդէսի վերածելով զինք լուսանկարելու առիթը: Ան իր հարազատ ջուրերուն մէջ էր կարծես, աւելի ձիշդ՝ իր հոգիին հարազատ տարերքին մէջ, իսկ խորհրդանշաններով յագեցած իր բնակարանը այնպիսի հմայքով մը օժտեց մթնոլորտը, որ ինծի կը մնար կարելի բոլոր ձեւերով անմահացնել մեծ արուեստագէտին յարափոփոխ հոգեվիճակները»:

Նոյնքան եղակի՝ այդ օրերուն Հայաստանէն

հանրակրթարաններու պատերուն տակ համախմբուող աշակերտներու, պարային հրաշալիքներ ստեղծող պալէի խումբի, պաղպաղակ ուտող աղջկան կամ աւելածուին ժպիտը պատկերող:

«Դիմանկարային արուեստի համար նախապատրաստական աշխատանք մը պէտք է, եթէ կ'ուզես լուսանկարը արուեստով յագեցնել», կ'ըսէ Պապեան, երբ ակնարկութիւն կ'ըլլայ դրող եւ արուեստագէտ, սփիւռքի ծնունդ նշանաւոր մարդոց դիմանկարներու նուիրուած իր շարքին: Արամ Հայկազ, Յակոբ Կարապետ, Շարլ Ազնաւուր, Արթուր Զաքարեան, Գրիգոր

Պրլտեան, Ասատուր Պզտիկեան, Աթոմ Էկոյեան, Արսինէ Խանճեան, Վահէ Պէրպէրեան եւ ուրիշներ կը կազմեն Պապեանի ղեմանկարային արուեստի ճոխ հաւաքածոն: Պապեանի համար նախապատրաստական աշխատանքը՝ լուսանկարուող տիպարը լաւ ճանշնալու, անոր հետ որոշ մտերմութիւն ստեղծելու իր իւրայատուկ ըմբռնումն է, որպէսզի լուսանկարը «բռնէ» տուեալ անհատին նկարագրային ամէնէն ցայտուն գիծը, թէկուզ ժպիտը, նայուածքը, կամ յատկանշական մէկ շարժումը: «Մարդը պէտք է լուսանկարել իր ամէնէն բնական, հարազատ հոգեվիճակին մէջ, որուն հասնելու համար պէտք է ծանօթ ըլլալ տիպարին, անոր սովորութիւններուն, նիստ ու կացին, շարժումներուն եւ դիմային արտայայտութիւններուն», կ'աւելցնէ արուեստագէտ լուսանկարիչը, դիտել տալով, որ՝ «ջութակահարը իր ջութակին հետ «ապրած» ատեն պէտք է լուսանկարել, որպէսզի մարդն ու իր էութիւնը լաւագոյնս մեկնաբանուին եւ ցոլացնեն այն մարդկայնութիւնն ու ջերմութիւնը, որոնք, իբրեւ լուսանկարիչ՝ իմ փնտռութիւնս էական տարրերը կը կազմեն»:



Պապեան անցնող ամիսներուն իր ընտանիքով այցելեց Լիբանան: Նպատակը՝ ծննդավայր Պուրճ Համուտը ծանօթացնելն էր իր զաւակներուն: «1961ին մեկնեցայ Լիբանանէն, ժամա-



նակ մը եղայ Ֆրանսա, նախ՝ Մարսէյ, ապա՝ Փարիզ, յետոյ անցայ Նիւ Եորք եւ պատեհութիւնը ունեցայ ծանօթանալու յայտնի լուսանկարիչ Յարութիւն Չոլաքեանի, որուն հետ բախտը ունեցայ աշխատելու եւ այդպիսով ձեռք ձգեցի լայն իմացութիւն՝ լուսանկարչական արուեստի գաղտնիքներուն վերաբերեալ: 1975էն ի վեր հաստատուած եմ Գանատայի Թորոնթօ քաղաքը, ուր մինչեւ օրս կը զբաղիմ լուսանկարչութեամբ: Մօտաւորապէս 50 տարի կ'ընէ, որ հեռացած եմ ծննդավայրէս: Այս այցելութիւնը ծէսի մը խորհրդաւորութիւնը ունի ինծի համար, որովհետեւ հաստատումն է այն բանին, թէ Լիբանանը կայ, Պուրճ Համուտը կայ, հայութիւնը կայ իր բազմապիսի գործունէութեամբ ու կեանքով: Սա՛ էր նաեւ նպատակս. ծանօթացնել զաւակներուս այն վայրը, ուր կազմաւորուած են իրենց ծնողները: Արագած թաղը, մանաւանդ, ուր անցած է իմ մանկութիւնս, ուր եւ առաւելաբար կազմաւորուած է իմ մարդկայնութիւնս՝ ծնողներուս, դրացիներուս, թաղի դպրոցին, եկեղեցիին, թէ ակումբի շուքին տակ, վիպական այդ օրերու տեսակ-տեսակ տխրութիւններու, թէ ուրախալի յիշատակներու ստուերին ներքոյ»:

Եւ երբ կը դիտենք Պապեանի մարդկայնական ոսպնեակին արտայայտութիւնները՝ մեր կարգին կը զգանք զինք պարուրող այն ջերմութիւնը, որ դէպի մեզ կը հոսի՝ Արագած թաղի



որոնք մինչև օրս կը քալեն հետս եւ կը բնորոշեն լուսանկարչական իմ արուեստս՝ Պուրճ Համուտէն քաղուած լուսանկարներու, թէ Հայաստանի, Նիւ Եորքի, Փարիզի, Թորոնթոյի նշանաւոր ու աննշան վայրերէն վերցուածներուն մէջ, եւ կամ աշխարհաժողով մարդիկը պատկերող նկարներու մէջ»:

Եւ, վերջապէս Պապեան կը հաւատայ, որ լուսանկարելը արարչագործութիւն մըն է իր տեսակին մէջ, իսկ լուսանկա-

փողոցներուն վրայ իր հեծանիւին անկարողութեան դիմաց անճրկած պատանիին ի տես, կամ խումբ մը «լակոտ»ներու անմեղ ժպիտներուն ու բարեւի համար բարձրացուած ձեռքերուն առաջ, նաեւ՝ քանի մը գունաւոր ծաղիկներու դիմաց՝ բերւած հեռաւոր հորիզոններէ, որոնց առիթով լուսանկարիչը կ'եզրափակէ:

«Որպէսզի Պապեանի արուեստը չմնայ լոկ լուսանկարային հաճոյք, աչք շոյող լոյսի եւ ստուերի սիրարկած թէկուզ, ես կը փորձեմ պատկերել մարդկայնութիւնը, մարդկային արժէքներու նկատմամբ այն խոր հաւատքն ու գուրգուրանքը,



րողին ոսպնեակը այն միակ հաստատուն վկայարանը, որով «արհեստ»ը կը վերածուի «արուեստ»ի եւ այդպէսով ալ կը կատարուի արուեստագէտ լուսանկարիչի հաստատումը կեանքի մէջ:



ԲԱԳԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԾԱՊԵՐՈՒԹՅԱՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱԿԻՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Շայ ընթերցողը նամակ գրելու սովորութիւն չունի՝ քննադատելու կամ տեսակէտ յայտնելու համար: Գրող եւ մտաւորական Յակոբ Միքայէլեան արձագանգած է ԲԺԳԻՆի 7/8/9 2009ի համարով լոյս տեսած խմբագրականին: Իր նամակը հրատարակեցինք ԲԺԳԻՆի 4 – 2009ի համարով:

Ջոյգ գրութիւններու առանցքին են գիրը, գրականութիւնը, հայերէնը, ստեղծագործութիւնը եւ սփիւռքեան կացութենէն բխող բարդութիւնները, զարտուղութիւնները, տեսլատեսութիւնները:

Շարքում ուղղողները գիտեն պատասխանները: Գաղտնիք չէ, հայերէնը տեղի կու տայ, զանազան բնոյթի անպատասխանատուութիւններով: Կը յիշեմ Անդրանիկ Ծառուկեանի հետ սրտցաւ զրոյցս, Փարիզի իր բնակարանը, մահէն տարի մը առաջ: Եղբակացուցինք, այդ օրերուն, որ Սփիւռքի մէջ հայերէնը ձիշդ խօսող եւ ձիշդ գրողներու համրանքը հարիւրը չէր անցներ: Ինչպէ՞ս հոս հասած ենք: Եթէ փորձըինք առանց զիկզակելու պատասխանել, դժգոհութեան ալիք կը ստեղծուի: Ազգային հեռանկարի անտեսման՝ կրաւորականութեամբ, մասնակից եւ մեղսակից ենք: Վերականգնում կարելի է, եթէ առաջնահերթութիւնները իրաւութեամբ սահմանուին եւ զանգաճը գիտակցելով մասնակից դառնայ:

Գրականութիւնը լեզու է եւ ոճ, ոճը՝ որ կ'առընչուի խառնուածքին, եւ լեզուն՝ որ հասարական յիշողութեան կրողն ու կադապարն է, առանց որուն կը խախտի ազգի անդամի ինքնութիւնը: Լեզու եւ ոճ կը համաձուլուին եւ գրողը կը ստեղծագործէ:

Սերնդափոխութիւնը տիեզերական է: Շանձարներէն ետք պիտի գան նորերը: Մտահոգութիւն. ի՞նչ պիտի ըլլան անոնք՝

երբ գրականութիւն փորձեն, մեր պարագային՝ հայ գրականութիւն, որ հայերէնով կ'ըլլայ: Լեզուն ամբողջութիւն մըն է, գերակառոյց: Բոլոր ժողովուրդները կ'ըսեն թէ այսինչը կամ այնինչը կը տիրապետէ լեզւին: Շամրե՞նք հայերէնի տիրապետողները:

Դարմա՞նք. որակաւոր ուսուցումը եւ ուսուցիչն են, պատրաստութիւնը եւ լաւագոյնս գնահատումը, վարձատրութիւնը: Երբ հայկական վարժարանը հպատակի իր ծննդոցի նպատակին,՝ հայերէն եւ հայեցի կրթութիւն, օտար լեզուներէ եւ վկայականներու ձեռքբերումէն առաջ, զորս պէտք չէ արհամարհել, որոնց զարգացումը ի հեճուկս հայերէնի պէտք չէ ըլլայ, կը գտնենք դարմանը: Շայերէնի ուսուցիչը եւ հայ գրողը, ապահովութիւն պիտի ունենան որ պիտի գործեն սիրողականէ տարբեր պայմաններու մէջ, որոնք շարունակի չեն ձառով եւ բարոյախօսութեամբ:

Սէր եւ տաղանդ ունեցող նորերուն տեղ պէտք է տալ, ընելով այնպէս որ հայերէնի իրացման կորստաւած ժամանակը նուաճեն, քանի որ ազգային լեզուով կ'արտայայտուի գրական տաղանդը: Դեղատոմսը փնտռել հայկական ընկերութեան արժէքներու եւ հեռանկարներու վերատեսութեան աւազանին մէջ, մակերսայնութեան ձահձացման դէմ:

Լիարժէք դեկավարման հարց կայ:

Բ.

ՏԻՐՈՒՆԻ

Ցաւով իմացանք մահը մեր աշխատակիցներէն Տոբթ. Յարութիւն Կարեւորեանի (Փարիզ, Նուազիլ-լը-Կրան), 18 Մարտ 2010ին: ԲԱԳԻՆ իր ցաւակցութիւնը կը յայտնէ տիկնոջ՝ Վերոնիքին եւ ընտանեկան պարագաներուն:

«ԾԱՂԿԱՔԱՂ
ԱՐԵՒՄՏԱՀԱՅ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ»

Խմբագիր՝
ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
«ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ»
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԷՅՐՈՒԹ, 2009



«ԾԱՂԿԱՔԱՂ
ՍՓԻՒՌՔԱՀԱՅ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ»

Խմբագիր՝
ՅԱՐՈՒԹԻՒՆ
ՔԻՒՐՔՃԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
«ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ»
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԷՅՐՈՒԹ, 2009

